



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled pattern of red and black. A vertical strip of solid red material, likely leather or cloth, forms the spine on the left side. At the top left corner, there is some wear and tear where the marbled paper has chipped away, revealing the underlying board. In the bottom left corner, a small white rectangular label is pasted onto the cover, containing the number 1786 in a bold, black, sans-serif font.

**1786**

483

1250





Քր 54  
Ընդ զբարձրակ Ա. Էջմիածնի

Գուշ

Բ. Գ. Մարտի

Հ

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԻՐ

ԴԱՐՄԱՆՆԵՐՆ

Ի ԳԻՒՂՕՐԷՍ





Handwritten numbers and scribbles in the top left corner.


W 1375

2574 ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԻՐ

# ԳԱՐՄԱՆՆԵՐՆ

Ե ԳԻՒՂՈՐԷՍ




գրեց

ԳԵՈՐԳ Մ. ՇԻՐԻՆԵԱՆ

1786

ՄԻԿՐՈՍԿՈՓ  
ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿ  
ՄԻԿՐՈՍԿՈՓ  
ՄԻԿՐՈՍԿՈՓ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1872





ՄԻՒԹԻՆՆԵՐԻՆ

ԳԳ ԳԳ

ՇՂՅՇՇՄՄԳՄՔ

ՍՅԴՕՐԿԻՐ



ՍԵՆՔ

ՅՄԵՅԿԳԿՃ Ս ԲԴՈՒՐ



ՍԳԼՕՐ

ՅՄԵՅԿԳԿՃ Ս ԲԴՈՒՐ

ՅՏԿԻ

Մայրաքրոջից ՅԱՌԱՋԱԲԱՆ  
... Թէի նտիպուած ենք որ և է ակնարկուածին չը-  
նել, բայց գործիս շատժառիժն յայտնել պարտա-  
ւորեալ զօրով ի նշմարտութենէ, գոնէ բառից ներ-  
քեւ քողարկելով կ'ըսենք.

Բարձր տաղանդով և անձնադիր ջանիք նշա-  
նաւոր հովուի մը կողմէն հրաման ընդունած լինե-  
լով յօգուտ գաւառիս ժողովրդեան գրեկ ծուլու-  
ձեան, երկրագործութեան, աշխատասիրութեան  
և միաբանասէր ոգւոյ վրայ (1), սոյն գործին  
խորհուրդն յաւցանք: Այլ որպէս զի գրքոյկի մը  
պէս իր կարգաւորութիւնն ունենայ, անուն դրինք  
սոյս գործին՝ Աղբասուքիւն և ին դասնակներն ի  
գիւղօրեւ, և պէտք եղած յօգուածներով խօսեցանք  
նախ աղքատութեան վրայ, համառօտիւ նկարագ-  
րելով անոր դառնութիւնքն և անագորոյն հետեւու-  
թիւնքը: — Ինչո՞ւ խօսել յայտնի եղած բանի մը

(1) Զեր Տրամախօտութիւնը յարգեց. . Հայրս, և փոփոք յօյտ-  
նեց որ երկրագործութեան, Ծուլութեան, Աշխատասիրութեան,  
միաբանասէր ոգւոյ վրայ և այլն յօգուածներ ետեկ ետեւ մեզ հաս-  
ցնէք և այլն», «զՁեզ անհուն կերպով կը սիրէ, բայց կ'աղաչէ որ  
բնաւ իւր վրայով որ և է ակնարկուածին մը չընէք, ևն»: Նամակ  
Պ. Սուրէն Մելքոնի, Աւաղ սարկաւազի, գրեալ առ մեզ ի 23 Յու-  
նիս 1871:



վրայ : — Անոր համար որ՝ ինչպէս ֆիզիզական միութիւնը՝ նոյնպէս բարոյական միութիւնը չի ներկեր կամարեւելապէս տեսնել դիրքի մը կամ վիճակի մը գառնութիւնը : զրկումները և վտանգը կամ անխուսափելի հետևանքը :

Եւ որպէս զի գիւղացին իր աղքատութիւնը ճակատագրի չտայ, և անոր պատճառներն այլուր չբխողէ, նախ աղքատութեան բուն պատճառներն նշանակեցինք, և ապա անոր դարմաններուն վրայ մի առ մի խօսեցանք ըստ կարի : Դարմաններուն յօդուածոց մէջ, Թող ներէ մեզ պարկեշտութիւնն այսչափ ըսել, Թէ Գաւառիս դպրոցաց վիճակը նկարագրուած և պէտք եղած բարեկարգութիւնը նշանակուած են : Այս կէտք մեծ ուշադրութեան արժանի է բոլոր Ազգայնոց համար, Թէ և աւելի յօգուտ գաւառայնոց գրուած է : Գարձեալ, որպէս զի տյն գործը բոլորովին տեսականէ չբաղկանայ, և ժողովուրդին իրապէս օգուտակար լինի, երկրագործական յօդուածոց մէջ գործնական հիմնական տեղեկութիւններ տուինք անխափ և դիւրամբօտելի կերպով, և մշակելի գլխունոր բաները նշանակեցինք հանդերձ համառօտ բայց էտիկան գիտելեք :

Ընդհանրապէս խօսելով գիւղացւոց վիճակը Թէ նիւթապէս և Թէ բարոյապէս տխուր է, որոյ պատճառն ոչ այլ ինչ է բայց եթէ իբրև բանական էակ

նոցա՝ ևս պէտք եղած լոյսերուն պակասութիւնը, լոյս բարոյականի կրթութեան, լոյս գիտութեանց և լոյս արհեստից : Ուստի՝ ինչպէս անձնիւր մարդոյ՝ նոյնպէս գիւղացւոյն անհրաժեշտ է ունենալ հողոյն, իւր սրտին, իւր մտքին, իւր արհեստին, իւր մարմնաւոր առողջութեան և մարդկային կենաց տնտեսութեան ծանօթութիւնը պարունակող գրեանք, այսինքն Աւետարանին բով գիրք մ' Ազգային Պատմութեան, գիրք մ' Երկրագործութեան, գիրք մ' Առողջաբանութեան և գիրք մ' Առանիւ Տնտեսութեան : Աստեց վերձանութեան հետ խօսենը նաև մասամբ իւրք ազգային լրագրաց ընկերցումը՝ խիստ կարևոր է մասաւոր մտնելի, և ազգային ու քաղաքական կենաց վերաբերութեամբ : Մինչև ներկայ տարիներ եթէ այդ գրեանք բիջ կամ բնաւ չլինարուն համար իւրաքանչիւր որ կըրնար անիրան արտունջ մ' ընել, — անիրան կ'ըսենք զի ինք ևս պարտաւոր էր իբրև մասն ընկերական բոլորի մը՝ ի միասին աշխատել իրեն ինկած բանին վրայ —, այսուհետև չիկրնար այն արտունջն ընել, զի ինչպէս ըսած ենք այլուր և ինչպէս յայտնի է, իմացական լոյսերն՝ սկսած են հետզհետէ արշալոյս տալ մեր երկրի, Տաճկաստանի մասաւոր հորիզոնին վրայ : Ընդհանջ երթալ այդ լոյսերուն և ողջունելով ընդունիլ գանոնք Թէ՛ ընդ



հանուր դպրոցաց և թէ ասոնցմէ դուրս գտնուող մտաց դռներէն ներս՝ ապագայ բարօրութիւնն օր մը յառաջ երաշխաւորել է : Երբ սերմը պահանջուած պայմաններով կը ցանուի՝ հունձքն ապահով է, դժբաղդ դիպուածք միշտ բացառութիւն են, և երբէք չեն հաւասարիւր ուղղութեան արդիւնքն եղող լաւութեանց :

Անտարակոյս եմ որ երբ մտքերն այդ յոյսերով զարգանան, երբ Տանկաստանի մէջ երկրագործութիւնը ծաղկի, յայնժամ այն Պօլսեցին և այն ուրիշ ծովեզերեայ քաղաքացին՝ որք այժմ իրենց երկրի, Տանկաստանի ժողովրդոց հետ առևտուր ընելով կ'ապրին, բայց միայն զԵւրոպացին կը հարըտացնեն, պիտի արժնան, և արժնցնելով զգիւղացին՝ հարստութեան մեծ աղբիւրի մը վրայ պիտի խորհին, այն է մեծ ընկերութիւններ կազմել, գործարաններ հիմնել, ներքին բերքերն՝ բուրդը, մազը, բամպակը և մետաքսը շահագործել, և տալ իրենց հայրենակցաց ինչ որ կը հագնինք այսօր և ինչ որ ի պէտս մեր կը գործածենք : Մեր աղբիւրներով մեր ծարաւութիւնը անցունել, ահաւասիկ այն ուղղութիւնը որ կրնայ մեզ երջանկութիւն բերել :

Շատ մը գաղափարակցաց հետ այս է մեր ուխտըն ու նպատակն, որուն հասնելու ջանքով՝ իբրև

աղօտ նշոյլ մը կը նուիրեմք սոյն աշխատութիւնը մասնաւորապէս Նիկոմիդիոյ գաւառայնոց, և ընդհանրապէս բոլոր Ասիոյ Տանկաստանի գաւառայնոց, զի նոցա ամենամեծ մասն ալ մեր ապրած գօտիին վրայ ապրելով՝ նոցա ևս կրնան օգտակար լինել մեր խորհրդածութեանց և դպրոցաց մասին ըրած առաջարկութեանց հետ՝ երկրագործութեան վրայ տուած համառօտ բայց հիմնական տեղեկութիւնքը :

Գ. Մ. ՇԻՐԻՆԵԱՆ

1871 Օգոստոս 26

Պարտիզակ





ցանկնուստանչա մրտ գնեցիսմ ցի ցի յուցմ ոտրա  
 -բնց մ , բմբառաար լոկրիկոբիմ՝ սխապուսման  
 -լուսուար վմաստանմ՝ լոկիմ գոյոց սխապման  
 հազրա գնն յա մանն ճմեամնիս արոմ զի , բոմ  
 դախուսբո մամցի սա արոմ խոյնդրա լոկի մկիտոթ  
 միսան զարդոյր մ բմամնուծարցմզոմ գնն յմմկ  
 մաննուծոցարսոյցմ՝ ումն բմամնուծարցուստ հազր  
 -արմբուս մարկամնն զրաչ ուստանն հառա լոկի  
 : ցցմնիմ

ՄԱՅՏԻՄԱՆ Մ . Բ

ԾԶ ստասքՅ 1781  
 լուսնուգա՞

### Ա Ձ Գ

Այն գիւղօրէից մէջ՝ ուր ընթերցասիրու-  
 քեան հաւակ չկայ , եւ միայն հահանայն ու  
 վարժապետներն են որ հրասարակութիւն  
 կ'առնեն , կաղաչենք զանոնք որ գոնէ կիրա-  
 կի օրեր ազգասիրաբար հանին սոյն հրա-  
 սարակութիւնը կարդալ եւ հասկցնել իրենց  
 գիւղի պարզ եւ անլոյս ժողովրդոց : Կաղա-  
 չենք նաեւ բոլոր Սրբազան Առաջնորդներն  
 որ սոյն օգտակար տեղեկութիւնն պարունա-  
 կող զրգոյկը իրենց ժողովրդոց մէջ սարածե-  
 լու անփոյթ չգտնուին , եթէ անոնց իմացա-  
 կան եւ նիւթական յառաջադիմութիւնը կը  
 սիրեն իբրեւ իրենց պարտաւորութիւնը : Ի վեր-  
 ջոյ , որպէս զի իմացականին հետ նիւթականն  
 ալ յառաջ սարած լինին , կ'աղաչենք զԱնճ-  
 նուէր Ընկերութիւնը ուսարութեան առնուլ  
 սոյն գործը , որ իւր նպասակին , այն է ժողո-  
 վրդեան իմացականին հետ նորա նիւթական  
 բարգաւաճութեանը մեծապէս կրնայ ծա-  
 նայել :

ՀԵՂ.ԻՆԱԿՆ











միայն նիւթական այսինքն մարմնաւոր կեանքն ու անոր աստիճանին վատթարութիւնն է :

Թէպէտեւ մարդն այս մարմնաւոր կեանքէն զատ, իբրև մտաւոր էակ՝ մտաւոր կեանք մ'ալ ունի, այն է բանականութեան կեանքը՝ որ կը սնանի ուսումով, զիտութիւնով, մտածութիւնով և ճշմարտութեամբ. և իբրև բարոյական էակ՝ ունի բարոյական կեանք մը որ կենաց ամենէն գերագոյնն է և որ բարւոյն, ճշմարտին և գեղեցկին սիրովը կը սնանի, և այս անմարմին սնունդները պակսած ատեն մարդը մտաւոր և բարոյական թշուառութեան մէջ կ'իյնայ. իր մարդկային բուն կշիւը (տարան) կը կորսնցնէ. բայց մեր առարկան հոս մարդոյն միայն նիւթական կեանքն լինելով՝ միայն անոր միջոյններուն պակասութեանը, այսինքն աղքատութեան, ասոր պատճառներուն, հետեւանաց և դարմաններուն վրայ պիտի խօսինք համառօտիւ :

Այլ հարկ կը համարիմք նախ յայտնել թէ մենք այս դործին մէջ իբրև անտեսագէտ չենք ներկայանար ազգին, զի մեր կարողութենէն վեր է այդ. և զի անտեսագէտ մը անհնար է որ արտագրութեան, բաշխման և սպառման վրայ խօսած ատեն կարող ըլլայ զանց ընել խօսելու

այդ երեք անտեսական մեծ խնդրոց նպատակին այսինքն քաղաքակրթութեան վրայ, որ մարդկային ազգին նիւթական, իմացական և բարոյական վիճակներուն բարւոքութեանը մէջ կը կայանայ : Ուստի անտեսագէտը իր դործին մէջ մէկ ցեղի, մէկ ազգի կամ մէկ տէրութեան չիներկայանար, այլ ընդհանուր մարդկութեան, բայց մեր ինչպէս կարողութիւնը՝ նոյնպէս նպատակը անձուկ է. այն է աղքատութիւն ըստած դառն վիճակին, անոր գլխաւոր պատճառներուն և դարմաններուն վրայ հայեացք մը նետել, և զայն մաս մը ժողովրդեան աչաց ներքև դնել : Այս ժողովուրդը նիկոմիդիոյ գաւառայինք են : Սակայն ներուի մեզ ըսել թէ ամենափոքր բացառութեամբ Ասիոյ Տաճկաստանի դրեթէ միւս բոլոր գաւառայինք ալ ինչպէս իմացականի և բարոյականի, նոյնպէս նիւթականի մասին նոյն վիճակն ունենալով, մեր այս աշխատութիւնը անոնց ևս կը վերաբերի : Եւ ինչո՞ւ չըսել, միթէ շատ տեղեր այս գաւառէն աւելի աղքատ և թշուառ չ'են թէ նիւթապէս և թէ մտաւորապէս, ինչպէս են Հայաստանի մէկ քանի տեղեր, որք ազիտութեան և թըռուառութեան անողոք ճիրաններուն ներքև լինելուն իբրև հեռուութիւն՝ վայրենի և բռնակալ



Քրդերու անլուր վաշխառութեանց և յախրչտակութեանց ներքև կը հեծեն, վրայ տալով նաև իրենց կրօնի և համեստութեան նուիրական պատիւները: Զայս ասելէն յետոյ գանք մեր խնդրոյն:

Աղքատութիւնը՝ ինչպէս ի սկզբան ուրիշ խօսքերով ըսինք, մարդկային ամէն տեսակ վայելքներու կամ անոնց միջոցին պակասութիւնն է: Մարդն այսպիսի վիճակի մը մէջ լքեալ և թշուառ արարած մ'է. անոր համար տանջանք մ'է կեանքը զոր վայելելու համար եկած է յաշխարհ. բայց մէկ կողմէն իր սղիտութիւնը, իր ծուլութիւնը և իր աննախատեսութիւնը, և միւս կողմէն ընկերային յոռի սովորութիւնք, յոռի ընթացք և յոռի ուղղութիւնք զայն աշխարհն իրեն համար տանջանարան մը դարձուցած են, երբ նիւթական կենաց միջոցները պակասին մարդու մը, ալ մտաւոր ու բարոյական կեանքը, թէև կարող լինի քիչ չափ այն կենաց վսեմութիւնն զգալու, իրեն աչքին բնաւ արժէք մը չունի. երբ մարմինը հաց ու հանդերձ չունի, անոր ականջները ոչ ևս կը լսեն բարոյականի քարոզներն ու պարտուց հրամանները. կարծես խիղճը իր պաշտօնէն կը դադարի և թոյլ կը տայ մարդոյն ակա-

մայ դիմել ապօրինաւոր միջոցներու ինչպէս են գողութիւնը, սաախօսութիւնը և կեղծաւորութիւնը, իսկ իրական սեռին համար անհամեստութեան դուռ կը բացուի . . . . .

Այն որ հաց չունի, ոչ պատիւ ունի, ոչ յարգ, ոչ կեանք, ոչ ստողջութիւն և ոչ ուրախութիւն. իր բաժինն է միայն անօթութիւն, մերկութիւն, անարդութիւն, վատաւողջութիւն, մտատանջութիւն և յուսահատութիւն. որովհետև պարտասէրն ստակ կուզէ, ստակ չկայ, և ընտանիքն հաց կուզէ, ու հաց չկայ: Այս աստիճանի աղքատութիւնը ամենէն խեղճն լինելով կը կոչուի կատարեալ թշուառութիւն, և այս է որ ամենէն աւելի արժանի է մարդկային գթութեանն ու կարեկցութեանը: Այս աստիճանէն քիչ մը վեր, կը գանուին կարգ մը աղքատներ ալ որք հազիւ ունին առօրեայ ցամաք հաց մը, այն ալ մարդու ուտելու հաց չէ. բայց երբ հիւանդութիւն մը պատահի, կամ զաւակին կըթել ուզեն, նոյն դժուարութիւնն ունին՝ ինչ որ յետին աստիճանի թշուառն ունի: Թէ թշուառութիւնը և թէ աղքատութիւնը երկուքն ալ դժոխք են մարդուն համար, զի մարդն մարմնաւոր սնունդէ զրկելով հանդերձ՝ կը զրկեն մտաւոր սնունդէ, և մինչև իսկ



կեանքէ : Ո՛րչափ աղքատներ , ինչպէս շատերը տեսած եմք , չկրնալով իրենց հիւանդութիւնը բժշկի մը ձեռօք դարմանել տալ , Աստուծոյ սահմանած օրերէն շատ յառաջ իրենց կեանքը կնքեցին և կը կնքեն : Զի հիւանդութիւնը՝ որ օդի անբարեխառնութենէ , զեղխութենէ , սնունդի պակասութենէ , չափազանց աշխատութենէ , երկարատև մտատանջութենէ և այլ պատճառներէ յառաջ կը գայ յաճախ մեր անգլխաութեան երեսէն , կը նմանի ծառի մը մէջ ինկած կրակին , զոր եթէ յատկապէս մարող մը չլինի , կամ գէպքով և կամ բնական պատճառով մը չմարի , անշուշտ ևս քան զևս արծարծելով վերջապէս տարածամ կը կործանէ նոյն ծառը : Նոյնպէս քանի քանի ծնողներ գիտեմ , որք զգալով իրենց աղքատութեան պատճառը , և աեսնելով որ ներկայ դարուս մէջ ալ ստակ չընեն միայն մարմնոյ ոյժը , ապրելու համար աւելի մտքի ոյժ պէտք է , ի սրտէ կը փափաքին իրենց զաւակաց կրթութիւն , ուսումն և գիտութիւն սովորեցնել տալ , բայց աղքատութիւնն իր հզօր ձայնը բարձրացնելով կ'ստիպուին իրենց տղաքը դպրոցէն առնելու և անարդ ծառայութեան մը տալու , որպէս զի հացագին մը վաստկին և իրենց աղքատութեան

խեղճ նեցուկ մը լինին : Ո՛րչափ աղքատ տղաքներ տեսնուած են վարժապետին առջև ուշիմ , աշխատասէր և բարեբալոյ , որք եթէ իրենց ուսման ընթացքը չարունակելու այդպիսի նիւթական արդելք մը չուեննային , մէն մի երևելի հանճարներ պիտի լինէին թէ իրենց և թէ մարդկութեան օգտակար : Ահա այսպէս ուրեմն աղքատութիւնը զմարդ նիւթական սնունդէ զրկելէն զատ՝ մտաւոր սնունդի և արժանեօք վայելելու արդելք կը լինի :

Հարուստը , արհեստաւորը և միջակ աստիճանի տէր մարդիկ ցորեկին իրենց գործին կ'երթան , իրենց ընտանեաց հօցը ճարեղէն զատ փորձութեանց դէմ դնելու և իրենց ապագան ապահովելու վաստակ մ'ալ ընելով՝ երեկոյին ուրախ զուարթ իրենց սուներ կը դառնան , իրենց բոլոր ընտանիքն իրենց շուրջն առած սեղանին գլուխը կը նստին , և ընտանեկան ուրախութեան ու տղայաց ժպիտներուն մէջ իրենց ընթրիքը կ'ընեն , օրուան դէպքերն անոնց կը պատմեն , և զիչերը խաղաղ քնով կ'անցընեն : Բայց աղքատը ցորեկին անգործ թափառական և մտատանջ անցընելէն յետոյ , ակամայ տուն կը դառնայ իրիկունը տրտում և տխուր , զի իւր քսակը դրամ չկայ և տունն



հաց չկայ, ընտանիքն ու տղաքը հացի կապա-  
սէին, և սա ձեռնդրեալսն ներս կը մտնէ, այն,  
ներս կը մտնէ, բայց ինչ դէմքով, ինչ սրտով  
և ինչ մեռուցիչ մտածումով, ես չկամիմ ա-  
սել, զի սիրտ չի դիմանար, երեւակայութեան  
տէր ընթերցողը կարող է ըմբռնել այդ պիտի  
վիճակի մը դառնութիւններն ու անոնց հետե-  
ւութիւնները:

Մանենք ընկերային սրահ մը, ուր ժողոված  
ըլլան ամէն կարգի մարդիկ: Հոն կը տեսնես  
որ ոմանք բազմոցի վրայ նստած, ոմանք նստա-  
քանի և ոմանք աթուռի վրայ բազմած կը խօ-  
սակցին մէկմէկու հետ յարգական ձևերով: Ան-  
դին դրան ետեի անկիւնին մէջ մէկը նստած,  
կամ լաւ ևս ըսենք, կ՛ծկտած է ակնկոր և ա-  
մթածահար: Ինչո՞ւ կ'ամաչէ այդ մարդը, և  
միւսներուն կարողին մէջ իր տեղը չունի: Ին-  
չո՞ւ անհաղորդ է այն տեղի խօսակցութեանց, և  
ինչո՞ւ անոր բարեւը չ'առնուիր, և յարգ ու  
պատիւ չ'ընծայուիր: — Կ'ամաչէ, որովհետեւ  
հազուսար նկատի և աղտոտ է. անհաղորդ է  
խօսակցութեանց, բարեւը չ'առնուիր և պատիւ  
չ'ընծայուիր, սրովհետեւ աղքատ է: Բայց մենք  
թողունք այն տխուր տեսարանները, և աղքա-  
տին ունենալիք վերը ինչ մխիթարական վի-

ճակին վրայ նետենք համառօտ ակնարկ մը:  
Աղքատին հնարաւոր մխիթարութիւնը ծա-  
ռայական գործ մը գտնելն է: Տնտեսական  
գիտութիւնը ամէն մարդու միւսնոյն դասը կը  
տայ, այսինքն ամէն մարդ հարուստ և աղքատ,  
գործատէր և գործաւոր, թէև տարբեր չափով,  
իր օրական ապրուստը ճարելէն զկնի, քիչ մը  
բան ալ, ինչպէս վերն ըսինք, փորձութեանց  
և դէպքերու դէմ դնելու և ապագայի համար  
պարտի շահիլ: Բայց քանի որ աղքատը իր կա-  
րօտութենէ առիպեալ, աղաչելով կամ միջնոր-  
դով գործ մը գտած և ծառայութեան մտած  
է, ինչպէս պիտի կրնայ այդ անտեսական կե-  
նաց պայմանն ունենալ, զի իւր անողք կարօ-  
տութիւնը պատճառ լինելով իր օրականի սա-  
կաութեան, հաղիւ կարող է իր ընտանեացն  
համար չորաբեկ հաց մը ճարելու, և ոչինչ  
աւելի: Կը կրկնենք, քանի որ նա անօթու-  
թեան հետեանքներէ զերծ մնալու համար  
միայն պիտի ծառայանայ ուրիշին, և ոչ թէ  
ընկերային պիտոյից մէջ աշխատութեան պարտք  
մը կատարելով (եթէ ունի այդ կարողութիւնը)  
իր ատտիճանին համեմատ անտեսական ապ-  
րուստ մը շահելու, հազար տարի թու կեանք  
ունենայ, այդ ծառայութեան մէջ իրեն վեր-



կութիւն չկայ բնաւ, իր վիճակագիրն է միշտ համեմեալ կարօտութիւն, յետադիմութիւն, խեղճութիւն և ամէն տեսակ դառնութիւն կենաց :

Արդ, այսպիսի դառն վիճակի մը մէջ մարդս կրնայ իր կամքին և իր ազատութեան տէրը լինել, այն երկու սկզբանց՝ որք իր բարոյական էութիւնը կը կազմեն. ոչ երբէք, նա իր բարոյական գոյութիւնն ակամայ ուրացող գերին է իր արիւժ կամքին. իր բոլոր վայրկեանները և բոլոր շարժմունքը անոր հրամանին կապուած են : « Բայց, աստ, խնդրեմ, ազատ եմ ես, մի միայն օրէնքով, քաղաքականապէս ազատ կոչվելով. ազատ եմ ես, քանի որ նիւթական կարօտութիւնը ստիպում է ինձ կամայ ակամայ, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայութեամբ հաց ճարել իմ ընտանիքի համար : Ազատ եմ ես եթէ տէր ունիմ որին եթէ իմ ազատութիւնը յայտնեմ բացարձակապէս, պիտի զրկեմ ապրուստից և ինձ (զիս) և իմ ընտանիքս, ծառայ լինելոց դադարելով, և այս բոլորից յետոյ ազատ եմ ես . . . երևակայութեան մէջ, թէ օրի մէջ (\*) » :

(\*) Ազգային գրագէտ մը,

— Բայց չժառայելու համար հարկ է կարօտութիւն չունենալ. սակայն այն ատեն մարդկային ընկերութիւնը նախախնամութեան դրածին հակառակ ճամբու մը մէջ դրուելով՝ ամէն կարգ և կանոն, դործ և յառաջադիմութիւն կխանդարտին :

— Մարդոց մէկմէկու ունեցած կարօտութիւնը բնական կարգադրութիւն մը լինելով, ոչ այդ կարօտութիւնը կրնայ դադարիլ մարդոց մէջէն և ոչ աշխատութեան պէտքը. սակայն ծառայութեան անուան տակ մարդն իր ազատութենէն զրկելով ուրիշին կամքին գերի ընել մարդկային իրաւունքէ և համերաշխութենէ դուրս է : « Բայց, ես մտածում եմ, որ կարող է և մանաւանդ երջանիկ, եթէ աշխատութիւնը բռնադատական չէ, այլ կամայական, եթէ նա աշխատութիւն է և ոչ ծառայութիւն, եթէ մարդկային իրաւունքները անխտիր հաւասարաչափ են և ոչ միմիայն աւելի, իսկ մի սինը պակաս (\*) » :

— Ըսել է որ ծառայութիւնը չէք ընդունիր :  
— Ծառայութիւնը կ'ընդունիմ առանց անհատական ազատութիւնը զոհելու, և այն նշա-

(\*) Նոյն ազգային գրագէտը :



նակութեամբ՝ որ ծառայութիւնը ուրիշ բան չլինի, բայց եթէ յանձնուած գործ մը կատարելու և հոս ինչո՞ւ մէկուն կողմէն ստրկութիւն և միւսին կողմէն տիրապետութիւն լինի. միթէ հարուստին սովիններն աղքատին քսակը պիտի լեցունին. ո՞չ ապաքէն ստրկական ծառայութեան մը փոխարէնը չնչին վարձք մ'է՛ :

— Ապաքէն այդպէս է. բայց մեր օրերուն մէջ մարդիկ տակաւին հասած չեն այն բարձրութեան, ուր կարող ըլլայ գործատէրը գործողին վրայ չափելու և զայն իրեն պէս մարդկային իրաւունքի և ազատութեան աէր ճանչելու. ըստ իս, ասոր պատճառը մեծաւ մասամբ աղքատն է, որ իր ծուլութեամբն և աննախատեսութեամբը այնչափ խեղճ վիճակի մէջ ձգած է զինքը, որ գործատէրը կամ հարուստը անոր խիստ կարօտութիւնը տեսնելով՝ ուզած ին պէս կը վարուի անոր հետ :

— Ուրեմն աւելի աղքատին կ'իյնայ խորհիլ թէ ուրիշէն օգուտ մը չկայ իր վիճակին. թէ ինքը պարտի նախ աշխատիլ կարելի եղած միջոցներով իր վիճակէն ելնելու, եթէ ոչ՝ ինքն ստիպեալ լինելով միշտ հարուստէն կամ գործատէրէն իբրև ողորմութիւն գործ մը խնդրելու՝ իր ծառայութիւնը կամ աշխատութիւնը

երբէք արժանաւոր վարձքով չպիտի լինի, հետևապէս միշտ կարօտ վիճակի մէջ պիտի մնայ, միշտ ուրիշին հաճոյքին գերի, միշտ մարդկային ամէն անասկ վայելքներէ զուրկ, միշտ անպատիւ մարդկային ընկերութեան մէջ, միշտ յողթեալ իր իրաւանց պաշտպանութեան մէջ, միշտ կարօտ սրտի հանդարտութեան, միշտ դատապարտեալ դրաստի պէս աշխատելու և յարգողին վարձք մ'ընդունելու, միշտ անկարող իր հիւանդութիւնը դարմանելու և միշտ վտանգեալ տարածամ մեռնելու, թողլով իր ընտանիքն ու զաւակունքը ողորմելի թշուառութեան մէջ . . . . .

Այսպէս եղած է միշտ իր ժամանակը ծուլութեամբ անցունողին վախճանը, նոյնպէս և անօթութեան հետևութիւնը. Ի բաց առնելով խորելու (խամին իթմէք) վառ միջոցը, որ անիրաւութիւն լինելով զուրկ է երկար տևելու և օգտակար լինելու հիմունքէն կամ պայմանէն որ է արդարութիւնը, զի չէ կարելի անիրաւ վաստակով իր տունը շինել և երջանկաբար զայն վայելել : Պէտք չ'է երբէք հաւատալ թէ բռնադատեալ ծառայութեամբ կարող կրնայ լինել մարդ գոհացուցիչ կեանք ունենալու :







միջոցներու գործածութեամբը իր հացը գլու-  
նելու, և այդ ճակատագրոյն հակառակ վար-  
ուած ատեն՝ հացէ զուրկ մնալու ենթակայ:

Այսպէս սոյն երկրի մէջ ալ ուր բնական  
ճոխութեան պարիւրներն երեսի վրայ ձգուած  
են, մարդոց ազքատութեան պատճառներն,  
ի բաց անելով դժբաղդ պարագաներն ու ձա-  
խորդութիւնները, նոյն իսկ իրենք են, չունե-  
նալով մարդկային ճարտարութեան հանգա-  
մանքները: Բայց աւելի պարզ խօսելու համար  
կը պարտաւորինք այդ հանգամանաց գլխուոր  
պակասութիւններն հոս նշանակել համառօտիւ:

1. Տգիտքիսն: Միտքը, մարդ էակին լսպ-  
տերն է նախախնամութեան կողմէն շնորհուած.  
իրեն հարկաւոր եղած բաները նոյնին լուսով  
փնտռելու և դանելու համար: Երբ այս լսպ-  
տերին մէջ իմացական լոյս գրուած չէ, և բա-  
րոյականի կրթութիւնը իբրև պահապան նոյն  
լոյսին քով չէ գրուած, մարդը մթութեան մէջ  
կը մնայ և հացի ու մարդկային երջանկութեան  
ճամբան կորսնցնելով կ'սկսի խարխափել և ան-  
հուն դժուարութեանց մէջ իյնալ: Երանի ա-  
նոնց որք այդ լոյսն և այդ պահապանն ունին  
իրենց բնատուր պահապանին, այսինքն խղճին  
հետ:

Անցեալներն ազգային բարերարութեան մը  
առթիւ ի նիկովիդիա դրուած նամակի մը մէջ  
ըսինք. «Մեծ. Տէր, լոյս սփռելը թէ ֆիզի-  
զական ըլլայ թէ իմացական, նախախնամական  
է միշտ: Աստուած ֆիզիզական աշխարհը ֆի-  
զիզական լուսով լուսաւորելէն զինի, բարո-  
յական աշխարհին (մարդոյն) իմացական կան-  
դեղն ու պատրոյգը պատրաստեց անոր գլխոյն  
մէջ. բայց զայն կանդեղը վառելու և մարդը  
լուսաւորելու գործը Գ . . . անի և Չեզ պէս  
առաքիններուն թողուց (\*): ուստի այն որ այդ  
կանդեղին մէջ կաթիլ մը իւզ և կայծ մը լոյս  
կը ձգէ, միշտ վերին նախախնամութեան գոր-  
ծակից է, թէև տկար արարած մ'ըլլայ այն»:

Այլ սակայն այդ կանդեղը կամ լսպտերը  
լուսաւորելու մասին է որ այս երկրի մարդիկ  
աւելի անփոյթ կը դանտին առանց վայրկեան  
մը խորհելու թէ զայն լսպտերն իր լոյսէն  
զուրկ թողուլ, ոչ միայն զմարդն իր իմացական

այսինքն զայն լսպտերն իր լոյսէն զուրկ թողուլ

(\*) Թէ բարերարին՝ որ առթիւ մը Պարտիզակի ազ-  
գային դպրոցին 2800 զուրուշի դուար մը շնորհեց,  
եւ թէ՛ նոյն բարերարութեան պատճառ եղող բարձր  
անձին անուններն ակամայ կը ծածկենք, քաջ գիտ-  
նալով որ երբէք իրենց անուան նշանակութեանը  
հաճութիւն չունին:



և բարոյական կեանքէն զրկել է, այլ նաև անոր նիւթական կեանքէն որ անգին է և այնչափ սիրելի: Մութի մէջ մնացող մարդն ո՛չ հնարք ունի, ո՛չ պարտք դիտէ ըստ արժանւոյն և ոչ ժամանակին յարգը կը ճանչէ, ժամանակին՝ որ ամէն բան է, երբ ի զուր չլատնուի:

Այսպիսի ընդարձակ և բնապէս ճոխ ու բարեբեր երկրի մը մէջ աղքատօրէն ապրիլ, արդարև ամօթ է և այլանդակ. աղքատօրէն կ'ըսենք, որովհետև մէկ երկու հազուագիւտ բարեկեցիկներն ի բաց առնելով, ընդհանրութիւնն առօրին ապրող մարդիկ են, անկարող իմացական պիտոյից վրայ խորհելու, և նիւթական վիճակնին բարւոքելու:

Եթէ մարդն անասունին պէս միայն բնութեան պատրաստած բաներովը իր սնունդի պէտքը լեցնէր, եթէ իր բաղձանքներն ալ անասունին բաղձանաց պէս միայն նիւթական յագուրդի մէջ սահմանափակ մնային, այսինքն եթէ չունենար, ո՛չ իմացականի պէտք, ո՛չ բարոյականի զգացում, ո՛չ գեղեցկի զգացում, ո՛չ ճշմարտի և ոչ անհունի իմացում, յառաջադիմութեան և կատարելագործութեան նախասահմանուած էակ մը չէր լիներ, հետևապէս ո՛չ աղքատ կը լինէր և ոչ մեղադրելի, զի իւր

վիճակին պատճառն Աստուած եղած կը լինէր, և ինչ բանի որ պատճառն Աստուած է, այն բանին մէջ մարդը պատասխանատու չի կրնար լինել: Բայց երբ կը տեսնենք որ Աստուծոյ նախախնամութիւնը զմարդն յառաջադիմական էակ մը ստեղծած ժամանակ՝ պէտք եղած միջոցները տուած է անոր լիօրէն, և մարդն աղքատ է դարձեալ, կ'ստիպուինք վայրկեան մը կանգ առնուլ, խորհիլ և դատել թէ մարդն է իր խեղճ վիճակին պատճառն ու պատասխանատուն, այնու զի՝ իր հնարագէտ կարողութիւնը խաւարի շղթաներով կաշկանդած է:

Մեր բաղձանքը անհուն տրուած են մեզ, թէ նիւթականի, թէ իմացականի և թէ բարոյականի մասին. չկայ հարուստ մը որ այսչափ դրամ ունիմ, բաւական է այն ըսելով հրաժարի վաստկելէ. չկայ գիտնական մը որ գիտցածս բաւական է ըսելով ուսանելէ դադարի. չկայ առաքինի մը որ իր ըրած բարերարութիւններէն յաղենայ: Այս բաղձանաց անհունութիւնը այդ երեք տեսակ կենաց մէջ յառաջադիմելու համար միայն տրուած է մեզ: Իսկ այդ երեք տեսակ յառաջադիմութիւնք ալ այնպէս մէկ մէկու կապուած են որ առանց մէկուն միւսն եթէ ոչ անհնարին, դէթ դժուարին է, զի առա-



քինութիւն գործելու համար քիչ կամ չատ  
նիւթական կարողութիւն պէտք է . նիւթական  
կարողութիւն ունենալու համար մտքի հրաշա-  
գործ կարողութիւնը պէտք է ժրութեան հետ,  
իսկ այդ կարողութիւնն ստանալու համար դար-  
ձեալ պէտք է նիւթական կարողութիւն զոր  
մարդկօրէն վայելելու համար, սրտի կրթու-  
թիւն, պարտուց դիտութիւն և անտեսադի-  
տութիւն հարկաւոր են :

Հոս ընդդիմախօս մը կենէ մեր դիմաց, և  
կ'ըսէ մեզ : «Բայց ես շատ հարուստներ դիտեմ  
որք առանց մտաւոր մշակութեան անթիւ գանձ  
դիզած են, եւ ամէն ուրեք իրենց ազդեցու-  
թիւնն ունին ընկերային գործոց մէջ » :

— Այդ ազդեցութիւնը քիչ ասենէն պիտի  
դադարի, և ասպարէզը յառաջադիմութեան  
օրէնքին հետևողներդեն պիտի մնայ . այս մասին  
քեզ բաւական պատասխան տուած եմ ուրիշ  
փոքրիկ գործի մը մէջ (\*) : Իսկ գանձեր ունե-  
նալուն դալով կը պատասխանեմ թէ, մէկ կող-  
մէն բաղդին օժանդակութիւնը և միւս կողմէն  
մարդուն ունեցած բնական աշխոյժը, գործու-  
նէութիւնն ու աշարջութիւնն են միակ պատ-

ճառ անոր գանձային յառաջադիմութեան,  
բայց հոն ալ իմացական և բարոյական յառա-  
ջադիմութիւն, կամ մէկ խօսքով մարդկային  
կեանք չկայ : Միթէ շատ կծծիներու հարստու-  
թիւնն ալ ասկէ չէ՞ գոյացած, մի միայն անաս-  
նականն ընդունելով, իսկ բուն մարդկայինը  
թողալ : Ուստի այդ ընթացքները բացառու-  
թիւն և միանգամայն անտի-մարդկային լինե-  
լով չեն կրնար ընդհանուրին օրէնք լինել : Բու-  
լըր լուսաւոր ազգերը իրենց ամէն բանի մէջ  
ունեցած յառաջադիմութիւնը իրենց իմա-  
ցական կարողութեան զարգացմանը կը պար-  
տաւորին, զի նա է մարդուն ամենէն հզօր կա-  
րողութիւնը : Մենք մեր իմացականութենէն  
կ'ընդունինք հարստութիւնը և զուարճու-  
թիւնը, մեր մեծութիւնները և մեր թշուա-  
ռութիւնները (\*), Ե՛րբ կ'ընդունինք անկէ մեր  
թշուառութիւնները . — երբ զայն անստուգ-  
մեայնենք, երբ զայն գիտութեան լոյսէն զր-  
կենք, և երբ անոր արդիւնքը չարաչար գոր-  
ծածենք :

Եթէ թուունն իր կապ թեքովը կարենայ

(\*) Էմէմարթէն . Բնա . մայր . դաստ . Գիրք Բ .  
Դէ . Ա .

(\*) Երկու Աշակերտք :



թուչիլ, եթէ նաւն առանց շողիի կամ հովի զօրութեան կարենայ իր ճամբան շարունակել, այն ատեն կը հաւատամ թէ մարդն ալ կրնայ առանց իր մտքին ուսման և գիտութեան ոյժ տալու, իր բարեկեցութիւնը գտնել: Բայց կը խորհիմ թէ բնութեան մէջ չկայ բան մը որ իր սահմանումին հակառակ ճամբով կատարուի: Մեր բարեկեցութիւնը մեր մտայ հնարիմացութեանը թողուած է, և քանի որ միտքը չէ կարող հնարիմաց լինել առանց գիտութեան լոյս ստանալու, միայն մարմնաւոր ոյժը խիստ անբաւական է յառաջագիծել և քաղաքակրթութիւն ուղղտ անհատի մը, ժողովրդի մը և ազգի մը պիտոյից: Երբ վայրենի ժողովրդոց վիճակը նկատողութեան առնենք, կը տեսնենք որ մերինէն աւելի թշուառ է. նիւթականնին խեղճ և անտի մարդկային է, իսկ իմացական և բարոյակտն կեանք բնաւ չկայ. նոյնպէս երբ մեր վիճակը լուսաւորեալ ազգաց վիճակին քով բերենք, մերինը տղայական կը գտնենք թէ նիւթականի և թէ իմացականի մէջ: Ի՞նչէն են այս մէկմէկէ անհուն տարբերութիւնք. — ինքնին յայտ է թէ իւրաքանչիւրին ունեցած իմացական լոյսին տարբերութենէն է:

2. Ծուրուրիւն: Ծուրութիւնն ուրիշ բան չէ,

բայց եթէ որ և իցէ աշխատութենէ փախչիլ, կամ որ նոյն է՝ իր ժամանակն ի զուր անցունել, Բայց ինչո՞ւ փախչիլ աշխատութենէ, յորմէ ամէն բարիք մեզ կը դան, որ մեզ առողջութիւն է երբ չափաւոր լինի, որ զմեզ ճանճութեանէ կ'ազատէ, որ զմեզ մոլութիւններէ հեռի կը պահէ, որ զմեզ երջանիկ կ'ընէ, և ինչո՞ւ սիրել ծուրութիւնը, մոլութեանց ամենէն աղետալին, որ պատճառ մ'է մեր տգիտութեան, մեր մարմնաւոր տկարութեան, զանազան խօթութեանց, մեր թշուառութեանց, Ես և ուրիշ մոլութեանց աղբիւր. զի չէ տեսնուած երբէք մէկը որ դարձի մը պարապի կամ աշխատութեան մէջ լինի, և միանգամայն մոլութեան ետեւէ երթայ. չէ տեսնուած մէկը որ աշխատասէր լինի և միանգամայն հացի կարօտ մնայ (դժբաղդ պարագաները մէկդի առնելով): Ծուրութիւնն է որ Աստուծոյ մարդկային ազգին համար պատրաստած բարեաց դուռը մարդուն առջև կը փակէ:

Քաղաքացին՝ որ աւելի առուտուրի և արհեստի կ'ըբաղի, դրամադուրի չունեցած կամ դործ մը չգտած ժամանակ թերևս կարենայ արդարանալ իր անդործութեան մէջ, բայց գիւղացին՝ որոյ աշխատութեան առարկան հողն



է գլխաւորապէս, և քիչ շատ հող ունենալով հանդերձ իր ժամանակը ծուլութեամբ կ'անցունէ, երբէք չի կրնար արդարանալ: Թէ քաղաքացիին և թէ գիւղացիին համար աւելի լաւ է գործ չգտնուած ժամանակ գոնէ փոքրիկ գործով մը զբաղիլ, քան երբէք դատարկ նստիլ:

Աշխատասիրին համար գործ շատ կայ, ժամանակ չկայ. կեանքը կարճ և արուեստն երկայն է Հիպոկրատին ըսածին պէս, իսկ ծոյլին համար գործ չկայ և ժամանակն երկար է: Ճանճութիւն կ'զգայ կարծես իր օրերէն, շուտով իրիկուն ըլլալու կը փախազի, առանց վայրկեան մը խորհելու թէ ժամանակին վայրկեանները՝ մեր կենաց թելերը, սրբնթաց դեռի մը պէս մեր աչքին առջևէն արագ արագ կը հոսին և յաւիտենականութեան ծոցը կը թափին տանելով զմեզ ի գերեզման: «Վաղուան սպասելը մեծապէս արգելք է կենաց», Ի՞նչ բանի կ'սպասես, գալու ամէն բան անստոյգ է: Ահա քերթողներուն մէջ Մեծը կը գոչէ:

Վայելուչ աւուր՛ սիոց հէզ մահացուաց փախչին վաղվազ: (Վիրգիլ. Մշակակաւն.)

Ժամանակը բռնած ատենդ իսկ կը փախչի: Ապա ուրեմն ժամանակին արագութեանը հետ

արագութեամբ պէտք է կուռիլ, և իբր թէ սրբնթաց և իսկոյն անհետացող դեռէ մը փութալու ջուր առնելու է» (\*):

Ժամանակին յարգը գիտցողին նոյնպէս և գործել ուղղին գործ չի պակսիր: Շատ աղքատ մարդոց օրինակներ կան պատմութեան մէջ, որք իրենց ժրութեամբը հարստացած և ընկերային աստիճաններուն մէջ փառաւոր դիրքեր ունեցած են. անոնց մէկ երկուքին օրինակը միտոյն բաւական է մեզ:

Փրանքլին որ խեղճ աճառագործի (սապուն, ճու) մը տղան էր, իր կարգասիրութեամբը, իր աշխատասիրութեամբն ու խնայութեամբը իր խեղճ վիճակէն բարձրացաւ հետզհետէ և եղաւ նախ տպագրիչ, ապա Յիլատելֆիոյ մէջ կարեոր ապագրատան մը գլուխ. ապա հիմնեց գրքատուն մը և գրագիտական ընկերութիւն մը, լրագիրներ հրատարակեց, և պարկեշտ հարրատութիւն մը վաստակեցաւ: Ասով համբաւն ամենուրեք տարածուեցաւ, և քիչ ատենէն ազգային (Ամերիկայի) վարչութեան մէջ ընդունուեցաւ: Հոն նախ քարտուղար եղաւ, վերջը Բէնսելվանիոյ Ժողովոյն անդամ: 1752 ին

(\*) Անեկա. Յաղագս կարճութեան կենաց. Գլ. Թ.



չանթարդելը հնարեց . 1753 ին Ամերիկայի թղթատարութեանց ընդհանուր վերատեսուչ եղաւ . 1775 ին մեծ դեր խաղաց իր երկրին անկախութեանը մէջ Անգղիացուց հարստահարութիւններէն , 1776 ին Գաղղիա ղրկուեցաւ օգնութիւն խնդրելու համար . թէ ինքն և թէ իր խնդիրն եռանդագին ընդունուեցան . 1783 ին իր հայրենեաց անկախութիւնը ապահովող խաղաղութեան դաշնագիրն ստորագրեց , և 1785 ին յաղթանակաւ ի Միացեալ Նահանգս վերագառնալով՝ Բէնսելվանիոյ նախագահ անուանեցաւ : Այսչափ ծանր և փափուկ պաշտօններու մէջ իսկ բաղմնութիւ գրուածներ թողուց : Իր վարքը անաքինութեան և ժրութեան օրինակ մ'է քաղաքակրթեալ աշխարհին :

Պիւֆօն Գաղղիացի երևելի բնապատումը , թէև աղքատի զաւակ չէր , բայց իր ծուլութեանն յաղթելու համար բրած ջանքը պատուական օրինակ մ'է : Ինք կը պատմէ իրեն համար թէ « չատ քնասէր էի երիտասարդութեանս մէջ , և իմ ծուլութիւնս ժամանակիս կէսը կը գողնար ինձմէ : Խեղճ Յովսէփս (իր ծառայն) իր ձեռքէն բոլոր եկածը կ'ընէր այս բնութեանս յաղթելու , բայց չէր յաջողեր : Ես խոստացայ իրեն Բիալ մը տալ ամէն ան-

դամու որ դայր զիս ստիպէր ժամը տամնին ելնելու : Հետեեալ օրն եկաւ զիս նեղեց նշանակեալ ժամուն մէջ . բայց ես իրեն ամարդօրէն պատասխանեցի : Երկրորդ օրը դարձեալ եկաւ այս անգամ մեծ սպառնալիքներ ըրի որ զինքը վախցուցին : « Բարեկամ Յովսէփ , ըսի իրեն կէս օրին , ժամանակս կորսնցուցի և դու բան մը չչահեցար . դու քու գործդ աղէկ չես հասկընար , միայն իմ խոստմանս վրայ խորհէ , եւ բնաւ կարևորութիւն մի տար իմ սպառնալեաց » : Հետեեալ օրը իր պատուոյն հասաւ : Առջի բերան իրեն աղաչեցի , պաղատեցայ , յետոյ սըրդողեցայ , բայց բնաւ մտիկ չըրաւ . ստիպեց զիս հակառակ իմ կամքիս ելնելու : Իմ դառնութիւնս ժամէ մ'աւելի չտեց . իրեն շնորհակալ լինելով հանդերձ խոստացածս տուի : Խեղճ Յովսէփին կը պարտաւորիմ իմ գործերէս առնուազն 10—12 հատորներ » :

Մարդոյն ֆիզիքական (մարմնի ուժով) աշխատութեան ընդունակ հասակը քսանէն մինչեւ վաթսունն է : Եթէ այդ շրջանին մէջ մարդը կրցաւ աշխատութեան զօրութեամբ առաւել կամ նուազ դիւրակեցիկ ապագայ մը պատրաստել , իր ձեռութեան վերջին օրերը՝ որք աւելի խնամոց և աւելի դարմանի կը կարօտին ,



կրնայ գոհութեամբ անցունել իսկ եթէ անգործութեամբ անցուցած է իր ժամանակը, ոչ ևս յոյս կայ անոր՝ բարեկեցիկ ապագայի համար։ անոր արժանի ճակատագիրն է բնական թշուառութեան բաժակը մինչև ցյատակ։ Թէ որչափ դառն է թշուառութիւնը ծերութեան օրերումէջ, ընթերցողաց կը թողում մակաբերել։ Տգիտութիւնը արդէն չարիք մ'է մարդուն համար, եթէ ծուլութիւնն ալ՝ որ ժամանակին յարգը չճանչելէն յառաջ կը գայ, ագիտութեան վրայ յաւելնայ, այն ատեն մարդուն վիճակը չարիք չարեաց կը դառնայ։ Ալ փրկութիւն չկայ. բնութիւնը դատապարտած է զնա աղքատութեան անսանելի ծանրութիւնը Սիզիբոսի ժայռին պէս (\*) բարեկեցութեան սարահարթին գլուխը հանելու ճգնել. այլ աւանդ ժամանակն անցած է, և դատապարտութիւնը վճռուած։

Սատուած կեանքը մարդոյն տուած է զայն

(\*) Սիզիբոս, որդի էօլի և թուն Արամազդայ՝ զեւազան աւաղակելուն համար դատապարտեցաւ Արամազդէն անձեթ ժայռ մը գլորելով լեռան մը գլուխը հանելու։ Բայց ժայռը միշտ նոյնն դարձար գլորելով երբէք հանդիստ չունէր Սիզիբոս։

յօգուտ անձին և ընկերին դործածելու համար. ուստի այն որ իր կեանքը ուտելու, խորմելու և պառկելու մէջ միայն կ'անցունէ, անասունէն տարբեր բան մը չլինելէն զտա՝ անարժան իսկ է ապրելու։ Այտրեա զգա ընդէր և զերկիրդ խափանէ։ Անարժան է ապրելու, վասն զի Սատուծոյ նախատահմանութիւնը չարաչար կը դործածէ, և վասն զի աւելորդ բեռ մ'է մարդկային պիտոյքներն արտագրոնշերուն վրայ, միայն սպառող լինելով առանց արտադրութեան դործին մասնակցելու ըստ իւր կոչման։ Այսպիսի էակ մը բնութեան մէջ մըջիւնի չափ կարեօրութիւն չունի, այն փոքրագոյն և չնչին կենդանիին, որ գոնէ աշխատասիրութեան և ժրութեան ոքանչելի օրինակն ընծայելուն համար քան զժոյն հաղարագատիկ կարեօր է և արժանի ապրելու բնութեան մէջ, որ անչարժ անգործ և անպիտան բան չկայ բնաւ։

3. Շռայլութիւն։ Ուտելու, խմելու, հագուելու, զբօսելու և այլն մէջ եղած չափողանց ծախքերը չուայլութիւն կամ զեղիսութիւն կը կոչուին, Շռայլութիւնը կարողութեան կախեալ է, ամէն կարգի անձինք չուայլ են երբ ուժգետ ծախքեր կ'ընեն, այս տարբերութեամբ միայն



որ եթէ բազմատեսակ կերակուրներ , ճոխ կարասիք և պղրական հանդերձեղէն ունենալը հարուստին համար շուայլութիւն է , աղքատին համար յիմարութիւն և խենդութիւն է որ և իցէ աւելորդ կամ անպիտան ծախքեր ընելը . զի նա իր գանձուց և հարստութեան առաւելութիւններէն կ'ընէ , իսկ սա իր կարօտութեանէն , թէև դրամ մ'ըլլայ իր շուայլօրէն վատնածը , Շուայլութիւնը աղքատին և դիւղացիին ողորմելի թշուառութիւն , հարուստին սնանկութիւն , ժողովրդոց աղքատութիւն և տէրութեանց կործանում բերած է միշտ և կը բերէ , վասն զի շուայլութիւնը միշտ ընկերացած է բարուց ապականութեան , անկարգութեանց եւ ազգի ազգի մոլութեանց հետ . Այս մասին թողլով անհատներու և ազգաց պատմական օրինակները , բաւական կը համարիմ յառաջ բերել մեր ազգային պատմութենէն յետադայ տողերը , որք Արշակունեաց թագաւորութեան վերջին արարուածն են .

« Այն ատեն (427—430) սուրբ Մեսրոպ ալ Յունաց մասին մէջ Հայերէն սովրեցնելէն և ամէն դաւառ իր աշակերտներէն վարժապետ դնելէն ետքը , Պարսից մասին մէջ Սուրբ Սահակին քով եկաւ և անոր հետ խորհուրդ ընե-

լով՝ Հայաստան թէ հոգևոր և թէ արտաքին գիտութեամբ ծաղկեցնելու համար , իրենց աշակերտներէն մէկ քանին , որոց գլխաւորքն էին , Եզնիկ , Կորիւն , Յովսէփ Պագնեցի , Ղևոնդ , Յովհան , և Արձան , ի Կոստանդնուպօլիս զրկեցին , քանի մը հոգի ալ յեղեսիա , որպէս զի Սուրբ Հարց գործերը Հայերէն թարգմանելով բերեն . իսկ վտարելի աշակերտներէն ալ մէկ քանին , որոց երևելիներն էին Մովսէս Խորենացի , Դաւիթ Անյաղթ , Մամբրէ են յԱղեքսանդրիա զրկեցին որ ուսում սովորին :

« Բայց Հայաստան այս ամէն ջանքին և աշխատութեանց պտուղը դեռ վայելելու չսկսած , մեծ թշուառութեան մէջ ինկաւ իր թագաւորութիւնը կորսնցնելով . վասն զի Արտաշիր (թագաւորը) իր երիտասարդական մոլութիւններուն հետեւելով սկսաւ ամէն տեսակ անկարգութիւն ընել . ասով ասելի եղաւ ամէն նախարարաց որոնք եկան Սուրբ Սահակն ալ կանչեցին որ իրենց հետ միանայ , և երթան Պարսից թագաւորին Արտաշիրն ամբաստանեն , ու խնդրեն որ զանիկայ թագաւորութենէ հանէ , և Հայոց վրայ Պարսիկ իշխան մը դնէ : Ս . Սահակ այս բանս ամենեւին յանձն չառաւ , շատ խօսքերով անոնց ցցուց որ աս գործքն



ինչ դէշ և վասակաբ է, և սրչափ վասակար  
 հեանու թիւններ կ'ունենայ, թէ որ ղերենք  
 բոլորովին Հեթանոս Պարսկից իշխանութեան  
 տակ ձգելու ըլլան: Բայց նախարարներն անոր  
 մտիկ չըրին, և կարծելով որ Ս. Սահակ կ'ուզէ  
 բանն երկնցնել, որպէս զի իրենց խորհուրդը  
 թագաւորին յայանէ, միաբանած՝ Վռամին  
 գացին, իրենց հետ Սուրմակ անունով չար  
 քահանայ մ'ալ տարին, և թէ Արտաշիւրը, թէ  
 Ս. Սահակն ամբաստանեցին: Վռամ նախա-  
 րարաց ամբաստանութիւնը լսելով՝ Արտաշիւրն  
 ու Ս. Սահակն իրեն կանչեց, և առաջինէն  
 թագաւորութիւնն ու Ս. Սահակէն կաթողի-  
 կաութիւնն առաւ, և երկուքն ալ Պարսկաս-  
 անն արդիւնեց: Ասկէ ետքը նախարարներուն  
 շատ պարգևներ տուաւ, և թագաւորի տեղ  
 Վեհմիհրչապուհ Պարսիկ մարդպանը անոնց հետ  
 Հայաստան գրկեց, Սուրմակն ալ կաթողիկոս  
 դրաւ: Արտաշիւր 6 տարի թագաւորութիւն  
 ընելէն ետքն, այս եղանակաւ իր և իրմով  
 Արշակունեաց ցեղին թագաւորութիւնը բոլո-  
 րովին կորսնցուց: Բայց իր յայտնի զո մէջ ընդ  
 Սահայապէս մուտ թիւնք և անկարգութիւնք  
 որք շուայլութենէ կը ծագին ամէն ուրեք, Ար-  
 շակունեաց արքունի տան մէջ ալ մանելով

Հայոց Բրիտորդ քայց հզոր թագաւորութեան  
 (ըստ գրումի՝ Կարթըշակնէրու), Տիգրաններու և  
 Տրդատներու թագաւորութիւնն էր): Կոր-  
 ծանմանը միակ պատճառ լինելէն եղաւ, Ս.  
 Սահակի պէս անորոքական հայրապետի մը Ա-  
 րաքարութիւն ալ, զրկեցին ողջայնատան, ապա  
 նուիրական լանճիւն կ'ըսէմ, որ իր հնգերեք և  
 հորքելից հովու թեւեր հետ Հայոց թագաւո-  
 րութեան Մենտորն լէր, յալեց որուն փոստուն  
 խրատոց եթէ անոյնն անխարսք շատ հա-  
 ռանական էր, որ Հայոց քաղաքական իշխանու-  
 թիւնը նոյն ազգիտալի վարձանը չունենար, և  
 հիմնը տարեք վիճակունեանք Հայաստան  
 ու ճնայլութիւնը ամէն ուրեք անտեսական գի-  
 տութեան լե համասնեութեան պակասութենէ  
 յուսով կը գայ: Այն փեղճ գիւղացին՝ որ իր  
 մահու յ մէջ յորինաւ որ շարժի կը շարժի միշտ  
 իր լատոյտիէն բան մը երեցնել ուզելով, պակ-  
 չի տեսնատգէտ է ի նախատես քան զայն քա-  
 ղաքանցին՝ որ օրը քտան շուրուք կը վաստիկ  
 նոյնչափ կամ անկէ աւելի ծախք կ'ընէ: Անշուշտ  
 ընել չէ մտքերնիս թէ քսան յոբրուք ծախուց  
 պէտք ունեցող մը թող նոյնչափ նախք չընէ,  
 որով զինքն ու իրենները կենսապայտելի խնամքէ  
 զրկէ ձայլ ուրիշ խնդիր է զի երբ մէկն էր



պարզ բայց օրինաւոր ծախուց համապատաս-  
խանող եկամուտ կամ վաստակ չունի, աղքատ է,  
բայց երբ մէկը 20 ղուրուշ վաստակ և 15 ղրջի  
օրինաւոր ծախուց պէտք ունենայ, և իրեն զըր-  
կողութիւն ընելով 10 ղուրուշ ծախք ընէ,  
չուայլութեան միւս ծայրն է, այսինքն աղա-  
հութիւնկամ կծծութիւն և որնոյնպէս տնտե-  
սագիտութեան պակասութենէ յառաջ կը դայ,  
և առոր տուգանքը վաղ կամ անազան պիտի  
հատուցանեն թէ ինքն և թէ իր քուակը, ապա  
Շքեղութեան սէրը, ինչպէս ըսած է հեղի-  
նակ մը, բնական կիրք մ'է, զի բնութիւնն ալ  
չքեղ է: Բայց պէտք է զիտնալ թէ բնութիւնը  
պարզ չքեղ է. չուայլութիւն այսինքն անմիտ  
անեղորդութիւն չունի. պիտանուութիւն և առա-  
տութիւն է միայն: Արդարև աղէկ ուտել, ա-  
ղէկ խմել և աղէկ հագուել սիրելի է, բայց  
հարկաւորէն աւելի և պարզութենէ դուրս ծախ-  
քեր ընելը դատապարտելի անմտութիւն է,  
քանզի ոչ պէտքը կը հրամայէ և ոչ խոհեմու-  
թիւնը: Մարդկային որ և իցէ ծախք պէտքի  
մը կամ օգտակար նպատակի մը համար միայն  
պէտք է լինի: Ստակի մը արծէքը չգիտցողը  
ստակի մը կարօտ մնացած է: Աւազանին ջուրը  
չունով չսպառելու համար՝ դուրս ելածը ներս

մտած ջրի քանակութենէն քիչ ըլլալու է: Եռայլ  
մարդ մը Սոկրատի կը տրտնջէր ըսելով թէ  
ստակ չունի: Փոխ առ անձէդ՝ ըսաւ իմաստու-  
նը, ծախքերդ անտեսելով:

Եռայլութիւնը կրակի կը նմանի որ իր բո-  
ցերուն սնունդ տուող նիւթը լափելէն ետև  
անմիջապէս կ'անցնի: Եռայլը աղքատանալէ ետև  
ուրիշներուն դիմել կ'ստիպուի, սակայն օգնու-  
թիւն չի գտներ, զի առատաձեռնութիւնը բարե-  
կամ կը յարուցանէ, զեղիտութիւնը՝ ապերախտ-  
ներ: (1)

Եռայլ մարդը՝ թէև հարուստ իր բաղձանաց  
սանձը թող տալով հետզհետէ կարօտ վիճակի  
կ'իջնէ բնականաբար, իսկ իր ծախքերը չափա-  
ւորողը թէև ապրուստի մեծ աղբիւր չունենայ,  
օրէ յօր գոհ վիճակի կը տիրանայ: Մեծամեծ  
հարստութիւնք աւելի խնայութեան արդիւնք  
են քան թէ մեծ եկամուտի. զի ինչ օգուտ մեծ  
եկամուտ ունենալէն երբ երբ չափ չունենայ:

Յաճախ աղքատներ տեսած եմ, որք քանի  
մը ղուրուշ մէկէն ձեռք ձգածնուն պէս՝ հար-  
կաւորէն աւելի միս առնելով կ'երթան Բաղո-  
սի տակաւին քով կը նստին, և մինչև իրիկուն

(1) Սկզբունք Դաստի. հատ. Բ. ԳԼ. 1Ը:



խենդեան լուսնի շարժիչը լուսնին մինչդեռ անդին  
տուրք հասց չկայ, երբ թէ ցուեցրին մուսուլու  
հաստը: Եւ առաջին յմիջութարութիւն, յմայ յաստ

Բայց ինչո՞ւ այսչափ երկարել խօսքերն ին:  
այն սիւթն այնչափ պարզ է որ չարժեր մակե  
աւելի գրան խօսիլ, մասնաւոր որ չուայլին կը  
լիւսն անդու թիւեր հարարու որ քրատներէ աւելի  
աղղու է: Ուստի կը վերջացնենք աղքատու  
թեան պատճառներու յորում ածը կրկնելով թէ  
ի բայ աւելելով դէպքերն, այսինքն երկարատե  
հիւանդութիւնք և ձախորդութիւնք և այլք, այն  
Յրկրին մէջ աղքատութեան բուն պատճառներն  
են: Պէտք ունենանք զայս յարմարութեամբ ցծմա  
ւախաց զյոզգիւն զի յայ զպատմականց զմիջի  
լուսննայ զայցրա ծմն մաստայրա միջի զբոլոս  
ծմնածմն լուսնի արտաւճութի զայ զոյ, զոյ  
գմայ զայ մամն յոլամի զյմա գմայ զայ մաստայ  
ծմն ուսո զմի զի զի Գեալմ ծմն զի մայ, մն  
լուսննայ մաս զոյ զոյ մէջամն ու յոլամի  
գմայ, գոյ լուսննայ զմայցրա պատմայ

**ԱՆԻՍՏՈՒԹԻՒՆ ԻՐԵԻ ԲՆԱԿԱՆ ԴԱՐՄԱՆ**

**ԱՆԻՍՏՈՒԹԻՒՆ**

Եթէ այն երկրի բնակիչք ժիր և աշխատատէր  
լինելով հանդերձ, իրենց աղքատութեան պատ  
ճառը երկրային բնական աննպատատարութիւն,  
այսինքն օղի ցրտութիւն և հողի անբերութիւն

լինելը կամ քաղաքական յաւի կարգ սարս  
թիւնք, այն ապեւ թերևս հարկ լիներ միջբա  
տութեան դարմանին վրայ, ապրելի կերպով  
խօսիլ: Բայց բանն որ այս երկիրը ինչպէս բա  
լըր Տաճկաստան գրեթէ այդ պիտի աննպատ  
արամագրութիւններ չունի, և քանի որ հոյ  
պէտք եղած ժրութիւնն ու աշխատակիրութիւ  
նը չկայ, քացարձակ հարկայ որութեամբ կը  
ստիպուինք այլ բառութեան բնակչն զարման  
նշանակել աշխատութիւնը: Եւ զայ մասնաւոր  
Յիրաւի շատ պարզ բան մ'է թէ աւանց աշ  
խատութեան ոչ արդիւնք կայ, ոչ յառաջարկի  
մութիւն և ոչ կեանք: Բայց այս կարգերը, ապ  
կա ինչ աշխատութեան նշանակող թիւերը կարճ  
ընթացքով և բնական օրէնք մը լինելը կատա  
րեկապէս չգիտցուեցան համարք հարկ կրնան  
մարինք անոր վրայ առանձին յորում ածով խօսիլ:

Բնութիւնը կամ լաւ և ուրեքն: Աստուծոյ  
նախախնամութիւնը, քանի ի վարդադրու  
թեամբ մը մարդոց անունը ինչ հոգն ստին, պա  
տագարմին և ոչ ինչ պիտայից աղբիւրը աննպ  
ատն ներքև գրած ժամանակ այն արդիւնքն  
իր պէտքերը լեցնելու կարողութիւնը իր ձեռք  
սարձ: Այս կարողութիւնը երկու շեւանկէ  
Ֆիզիկական և ինտելեկտուալ զամուսնի պարզ



խօսքով մարմնաւոր զօրութիւն և մտաւոր զօրութիւն : Այս երկու կարողութիւնք ամուլ (չիֆթ) մը կը կազմեն մարդկային պէտքեր արտադրելու համար : Ուրեմն մարդկային աշխատութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ այդ երկու կարողութիւններով պարագլիլ որ և է պիտոյք մը արտադրելու կամ գործ մը կատարելու՝ յօգուտ անձին, ընտանեաց, հայրենեաց, կամ մարդկային ընկերութեան, թէ բնական և թէ տնտեսական, ինչ ճամբով ալ որ խորհինք, ամէն մարդ մարդկային ամէն տեսակ պիտոյից քիչ կամ շատ սպաւող լինելով պարտաւոր է այդ պիտոյից արտադրութեանը մասնակցելու : Եթէ մէկ կողմէն մարդկային պէտքերը բազմադիմի և միւս կողմէն իւրաքանչիւր մարդ առանձին անկարող է իր բոլոր պէտքերը հողալու, մարդկային կարողութիւնք ալ բազմադիմի լինելով՝ ոմանք այս ինչ և ոմանք այն ինչ պէտքին արտադրութեանը կ'ընողին, և այսպէս գործակից կը լինին ընդհանուր պիտոյից արտադրութեանը : Ահա այս գործակցութեան մէջ կը կայանայ մարդկային ընկերութիւնը : Բայց մեր խօսքին կարգէն չհեռանանք : Իմացական կարողութեան պաշտօնն է խորհիլ, բազդատել, հետեւութիւն հանել և հնար

մը գտնել, իսկ ֆիզիգական կարողութեան պաշտօնն է այդ հնարքն ի գործ դնել : Ուստի ուր որ այս երկու կարողութիւնք իբրև ամուլ լուծի մը իրարու հետ միացած չեն, հոն պիտոյից արտադրութիւնը խիստ նուազ է և թերի և մարդիկ աղքատ : Եւ զի զսուտ զոման

Եւրոպան կանուխ ճանչեց այս բանը, և միացնելով այդ երկու կարողութիւնները՝ այնչափ յարալ գնաց որ սկսաւ ոչ ևս դոհ լինել ճիով կամ ճիակառքով ճամբայ երթալէ, այլ շողեկառք և հեռագիր ստեղծելով անբաւ հեռուստոթիւնները մօտեցուց : Ենյապէս իր ֆիզիգական աշխատութեան արդիւնքէն դոհ չլինելով բնական զօրութեանց այսինքն շողի և մեքենայի յանձնեց իր պիտոյից արտադրութեան գործը որպէս զի մէկին տեղ հազար անոնէ և հսկայաբայլ յաւաթադիմէ, ինչպէս որ է այսօր ինկ մեք այդ երկու կարողութիւնները, չըսեմ մէկմէկէ բաժնած, երկուքն ալ երեսի վրայ ձգելով անդդայութեան և անգործութեան խորքունի մէջ կը խորդանք, և մեր աղքատութեան պատճառը ճակատագրի կը տանք : Այս դանդաւոր անիրաւ է, վասն զի մարդոյն համար աշխատութիւնէ զատ ճակատագիր չկայ աշխատութիւնէն որ մեր երջանկութեան



զազունիքն իր մէջ կը պարտեն ակէ երբ հաստա  
 անն կամօք է նարանեց սիրով պիւրէնք զինքը  
 բայց մենք կոյր կամօք այս յամբայէն շեղելով  
 զմեզ թշուածն միամեղամայն յանցաւ որ ըրած  
 ենք Աստուծոյ առջև յայն՝ յանցաւ որ եմք  
 անոր համար որ իր սուածքան քննիկը շենք  
 շահեցուցածն սրա քննած սլամայ մարտոյ  
 Աստուած ի քննութեան պատրաստած է ամեն  
 ինչ որ հանկուար է մարդոյն՝ միայն թէ մարդն  
 աշխատի զպիճեք բերելուն Ինչ որ օգուտ դաշ  
 արին բարեբերութեանն և որը զայն մշակելու հա  
 մար պէտք է որած աշխատութիւնը իննչն ք  
 Ինչ որ օգուտ մեզ որամանց և զխառնութեանց ա  
 ռտելու թեանն և որը զմտնք սպիւրտ և բու  
 ըտածելու շաշխատինք և անոնց մեզի գծած  
 ճամբայէն չերթանք Ինչ որ արտաշխարհայէն  
 արհեստներուն օգուտ է որ թեանն և որը զանինք  
 մովելու հեռամտա զինինք և Երկրպէս ինչ  
 օգուտ այն ամեն զնական բարիքներէն որոնց  
 պէտք ունինք զորս կազուր էմք սասանալու ի  
 մացական և ֆիզիզական աշխատութեանց զորս  
 թեամք և որ չենք աշխատիք Միթէ Աստուած  
 մեք երկրի մարդոց իննչամէ բան մայն ամեն  
 բաներէ և կարողութիւններէ զորս սուած է  
 եւ բոլոր և նոր Աշխարհի մարդոց որ չենք

Ընդհակառակն մեք ազելի բարեբարդ եմք ա  
 զպղծութիւն բարեբար հողով և ամեն բնական  
 բարիքներով շեղուել ընդարձակ երկիր մի բա  
 բեխածն որ օտի տակ թեղի քնակութիւն ունեն  
 նախուս համար մայրոյ ամենայն ինչ արձեան  
 թշուածք մեք եմք ինչ որ մեզի պիտեմ յայրած  
 անոր չկայ ազք քստութեան ճակատող իր ոչ  
 Հայն և ինչ ճանկի մտն թոյնի զոչն Հրէի ոչ Ափ  
 րիկէցի ինչ Արաբի ոչ Պարսկի ոչ Ափրիկե  
 և ոչ ուրիշ յեմադէ մազգաց համար յոյնացե  
 չկայ մանտնք ճակատող իր հարմու թեան և  
 զինքակեցութեան ոչ եւ թոյնայի յարմադէ մ  
 ազոց և ոչ Ամերիկայի Միացեալ Նահանգնց  
 համար Ամենայն մարդ ինչ իբրև չէ կհորդիք  
 միայն մէկ ճակատող իր մտնին և Աշխատե  
 ցանք բան յախի սեղենս թեկապայտութի  
 իրազ շատ ինչ աշխատիր քմաւ բան զիտի զա  
 նինս ոչ միայն հաց և հանգերդ որ այլ մինչե  
 իսկ կեանք մի Ահաւանիկ բողոք մարդոց ցտը  
 գաց և աղանց միողովրդոց և ընծանեաց եր  
 ջանկութեան և թշուածք թեան որ ունի թ  
 կէ մտն ինչ ներտ մտիր քնաւ արգերք չկայ  
 բայց զխոցած քլլաս որ կրք անթի մնատ մե  
 կուն փոյթը չէ և ոչ իսկ Աստուծոյ զի նա  
 քեղի պարտէ զմը տուել մշակելու և փնրէք







յան աջարինու թեանց միակ դարմանք և յառանց  
անոր բնու մարդ կային կեանք չկայ և որովհե-  
տև ուստի լինեալ և հարու երևալ և կոպիտութի  
պէտքերու և թարկութեանք և բնութեան և  
այս թրթր պէտքերը աշխատութեանք միայն  
կրնան ձեռք քերութիւն ուրկէ կը հետևի թե աշ-  
խատութիւնք բնական օրէնք մը լինելով և արդ-  
կային պարտագ յամենէն պարտինն է այն օրէնք  
քին հնազանդիւն թիանու պետք է թէ մարդ  
կային կամ քաղաքական օրինաց դէմ և կը գտնուող  
մը թերևս կը գտնուող արդարանալ իրնու սցի կամ  
անկրտ արտաքսութիւն մը և անպատիւ մնալ և քսու  
բնութեան օրէնքի օրէմ և կը գտնուող մը և կը գտնուող  
չի կրնայր անպատիւ մնալ և քսու և որովհետև  
ան թիւնն ալ բնական օրէնք մէկ մարդոյն հան-  
մար անկէ փախողն ալ իր պատիւին անշուշտ  
պիտի կրէ որպէս իւր իւր ինքն ի թէ անքա-  
տութիւն և թշուարութիւն հանդերձ ամենայն  
հետևանք որ փոխ աշխատութիւնք բնութեանք և ի  
րելի զաւակը լինելով միշտ իր քրտանց և իւր քր  
լիւրէն կը դուրս ելլալ և ի լայն սրբապատ —

և Ս. Եսոր ինչպէս մէկը ի լիութիւն միմեան կ'ը հար-  
րտութիւնը յանդու գնեցը միայն կը պիտի և  
նուրդ փառ անիրաց համար որոց միայն պատիւ  
ուն հողոց և սողանք թիւն կը գտնուող և մայնչապ

քերցը թարիք մը յայնմ անկէ և միայն անկէ միջոց  
կայ և որն է յամար շինատութիւնը և Մեր հա-  
կատար իրն աշխատութիւնն է անոր է որ զմեզ  
ներ յուշողն թեան ամէն իր զաւարտութիւն և մեր  
թիւն անու թեանք մեջ զմեզ կը միտի թարիւն (1)  
և Ս. Ղրգոյն թեան ատորքը միայն հարմարութիւ-  
նը և քիտութիւնը չէ և ինչպիսի թիւն փորձ անու  
թիւնն պատմուածքութիւն փառք և թարե իրան  
և պոհ կեանք և որպիսութիւն և անորքութիւն և  
արտիւ և անքի անդ որքութիւն և ինչպիսի ինչ քա-  
ղաքի անութիւն և աշխատութեան մարդ քր և ե-  
րանդի ինքիւնք աշխատութեան և ու իրն և մար-  
դի ինչ թախտակ կ'ընեն այ շարի թիւն և սորհե-  
ղուն և ոչ զնոսով անքի թիւն և ոչ զնոսով և մի-  
ջոց կ'արձառի թիւն Մեր քաղաքի անու թեան և իրոց  
խորեցանք միայն անտեսակ ան նկատմանք և ինչ-  
նոսով որ քարոյն իրանութեան հարց միջոց մը և  
ամենէն մարդը անպատիւն քաղաքի իր իր անց  
աղբիւրն է նախ (2) և ի մն աւանդաւ մի

և Ս. Եսոր միայն զաւարտութիւնը և ի լայն զի ինչ  
իմնց տեղան չընտրի և շինատութեան այն օրէնք  
թիւն թիւնը և զանչելով և քաղաքի և քարտե թիւն և  
մը քրան և զմեզ մայնաց զմեզ ի տասայ զո  
և (1) և զանկէ հիւստի իր անտեղ և քաղաքի  
և (2) թիւն ի քաղաքի և քաղաքի և քաղաքի և քաղաքի



զի վրայ ազգատու թիւն կը կրեն , Չեմ ուզեր հոս նշանակել այն քանի մը բնազմաբնակ գիւղերը որք երկրագործական աշխատութիւնը երեսի վրայ ձգած ծուլարան գարձած են , առանց երբէք խորհելու թէ իբրև գիւղացի՝ մշակելի հող ունենալ և հացի կարօտութիւն կրել՝ անհեթեթ հակասութիւն մ'է , վասն զի ասն մէջ ջրհոր ունենալ և ջրի նեղութիւն կրել ըսել է : Ի՞նչ հասկցանք գիւղացիութենէ և հողատէր լինելէ , երբ մէկ կողմէն քաղաքացիին ոչ առատուրը կայ և ոչ արհեստը , և միւս կողմէն քաղաքացիին , արհեստաւորին և վաճառականին պէս օտարէն կառնուի հացի ցորենը , մինչդեռ իբրև երկրագործ՝ գիւղացին իր հացին ցորենը հանելէն դատ՝ մեծ կակ մաս մ'ալ քաղաքացիին պիտի վաճառէր , և նիւթական ուրիշ պիտայից հետ իր իմացական և բարոյական պէտքերն հագար , որոնցմէ այսօր բոլորովին զուրկ է :

Ի՞նչ պատճառ ունի գիւղացին երկրագործական բնական պարզ կեանքը չսիրելու և ազգատութիւն յանձն առնելու : Եթէ աշխատութեան համար է , արգէն յայտնի է , և ցուցուցինք ալ որ աշխատութիւնը բնական օրէնք է , մարդոյն ճակատագիրն է նա՛ , միշտ իր հացին հետ անբաժանելի կերպով կապուած : Եւ ո՞ր գործ աշ-

խարհիս մէջ առանց աշխատութեան կրնայ կատարուիլ . կամ մանաւանդ ո՞ր գործի վաստակ աւելի շահաւոր և աւելի անպահով է քան զերեքագործութեան վաստակը , ինչպէս վերջը վաստակով պիտի տեսնենք : Եթէ ֆիզիգական աշխատութեան ծանրութիւնը պատճառ բերուի , անոր դէմ կը դնեմ աղքատութեան ծանրութիւնը , մարդկային ամէն անասկ վայելքներու զրկումը , և կը յաւելուեմ թէ չէ կարելի նստելով աղքատի՛ ոչ այն աշխատութեան ծանրութենէ և ոչ աղքատութենէ :   
Փոսին մէջ գլորողի մը աչքին ծանր երևնալու չէ անկէ դուրս ելնելու համար հարկ եղած աշխատութիւնը , Այսպէս ուրեմն եթէ գեղացին կը փափաքի երկրագործական դիւրութիւնները ձեռք ձգել , նախ աշխատութեան դիմելու է իր հետ ունենալով դարերու փորձառութեանց վրայ հիմնեալ երկրագործական տեղեկութիւնները , և միւս կողմէն շուայութենէ և անմիտ ծախքերէ հեռանալու է , Այնուհետև դիւրութիւններն ինքնին կը գան , ինչպէս եկած են Եւրոպացի և Ամերիկացի երկրագործացի :   
Մեզի մեծ զարմանք բերու ասկէ տասն և հինգ ամիս յառաջ Մասիսի մէջ գրուած լուր մը որ կը ծանուցանէր թէ Դաղիացի երկրագործ մը







ցորենին հասկը անոր ձեռքին տակ միայն կը լեցուի . ծառին պտուղները անոր մշակութեան ներքև միայն կը մեղմանան . վայրենի կենդանիները անոր խնամքներովը միայն կ'ընտելանան . նա կենդանեաց մէջէն իրեն ընկերներ կ'ընտրէ և կ'ստիպէ զանոնք աշխատելու իրեն հետ և իրեն համար : Ասկէ աւելի կ'ընէ . միշտ իր գործին հետամտելով կ'երթայ փնտռել երկաթն ու ոսկին երկրագնդի ծոցերուն մէջ և զանոնք կը գործածէ իր գործը գեղեցկացնելու և բեղմնաւորելու համար : Իր ձայնէն անտառները կ'աներևութին , դետերը նորէն իրենց անկողիններուն մէջ կը մտնեն . կլիմաները կը փոխուին , օդը կը մաքրուի , փուշերը կ'էյնան , ծաղիկները կը բազմապատկին , արօտավայրերու կարծր և ամուլ խտոր տեղի կը տայ թարմ դալարեաց և ճօխ բանջարանոցներու . այգիին ուռերը չոր փայտերուն վրայ կ'օձակորին , և առատ ու զանազան հունձերը ամէն ուրեք նոր հորիզոններ կը ծածկեն : Այսպէս վայրի բնութիւնը կը ջնջուի և եղեմի պարտէզները յարդուս կը գան : Քաղաքակիրթ մարդուն երկրագնդին վրայ տպաւորած ամէն մէկ քայլ աշխարհակալութիւն մը կը նշանակէ . մարդոյն յանձնուած է զարարչու-

թիւնն ի կատար հանել , և Աստուած անոր փոխ կը տայ իր կարողութեան մէկ մասը :

Քսան դար յառաջ Անգղիա , Գաղղիա և Գերմանիա արօտավայրերու , Ամերիկայի կոյս անտառներու տեսարանը կ'ընծայէին , Մարդը կարող եղաւ մինչև անգամ երկրի արտադրութիւնները փոփոխել :

Կեսար կը պատմէ թէ ցուրտը չէր ներեր կօլի (հին Գաղղիոյ) մէջ այգի մշակել : Մարդը կարող եղաւ մինչև անգամ կլիման փոփոխել :

Աշխատութիւնով է որ մարդն զերրոպա գրաւեց :

Աշխատութիւնով է որ մարդն զԱմերիկա գրաւեց : Այս անմշակ երկրին վրայ կը տեսնես որ աշխատութիւնը անխոնջ հսկայի մը պէս կը յառաջանայ , հազարաւոր ձեռքեր այն երկրի գետերը կը նուաճեն , լեռները կը հարթեն , անտառները կը ջարդեն , քաղաքներ կը կառուցանեն և այս ահագին ու անդադար մըրցումէն դուրս կը հանեն աւելի սիրելի , աւելի բեղմնաւոր երկիր մը , որուն միանգամայն աէրն ու արարիչը մարդն է : (')

(') Էմէ-Մարթէն . Ընտ . Մայր . Դաստի . Գիրք Գ . ԳԼ . Լ .



Օ՛ն ի գործ ուրեմն և գու ժողովուրդդ  
 Բիւթանիոյ : քու վիճակդ թշուաւ է թէ նիւ-  
 թապէս և թէ բարոյապէս . վերանորոգու-  
 թեանդ պէտքը բողոք կ'ընէ լուսոյ և յառա-  
 ջադիմութեան Աստուծոյն առջև . լա՛հ անոր  
 ճայնը որ գրեզ ի լոյս և ի բարեկեցութիւն կը  
 հրաւիրէ . արթնցիր այդ բարոյական թմբու-  
 թենէդ , ճանչցիր կոչումդ , հնազանդէ՛ ճա-  
 կատագրոյդ , իմացիր երջանկութեանդ գաղտ-  
 նիքը , աշխատէ՛ քու Բարեւերկերդ մշակելու ,  
 աշխատէ՛ միտքդ լուսաւորելու , աշխատէ՛ միշտ  
 յառաջադիմելու նիւթական , իմացական և  
 բարոյական կենաց մէջ , և ապրէ՛ անձիդ , ըն-  
 տանեացդ , ընկերիդ , հայրենեացդ և ընդհա-  
 նուր մարդկութեան օդատկար լինելու ակըզ-  
 բունքով , զի անոր համար միայն տրուած է  
 քեզ կեանքը :



գրի՛ր . յաւա՛ր . զոս՛ն . ոտ՛ն . մէկ գաւ-միւն ( )  
 . . . . .

ՌԻՍՈՒՄՆ , ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ՝  
 ԻՐԲԵԻ ԲԱՐՅԱԿԱՆ ԴԱՐՄԱՆ  
 ԱՂԲԱՏՈՒԹԵԱՆ

Թէպէտ և ուսման , գիտութեան և կրթու-  
 թեան մեծ կարևորութիւնը աղքատութեան  
 պատճառներուն մէջ ընդհակառակօքը բաւա-  
 կան ցուցուած է , սակայն քանի որ աղքատու-  
 թեան դարմաններուն վրայ կը խօսինք , հարկ  
 է որ մասնաւորապէս քանի մը խօսք ալ այդ  
 նիւթերուն վրայ ըսենք , ըստ որում աղքա-  
 տութեան դարմանը գիտութեանց և կրթու-  
 թեան ծաւալմանը մէջ է բարոյապէս , և ըստ  
 որում այս կողմերը , ինչպէս ուրիշ շատ տեղերու  
 տակաւին ըստ արժանւոյն զգացուած չէ ա-  
 նոնց անհրաժեշտ պէտքն ու մարդոյն ընծայած  
 նիւթական և բարոյական առաւելութիւններու  
 Ինտութեան մէջ ամէն բան իր օրէնքն ունի ,  
 և այն օրէնքով վարուած ատեն միայն գոյու-  
 թիւն մը կրնայ իր նախասահմանեալ վիճակին  
 հասնիլ . իսկ այն օրէնքին հակառակ վարուած  
 ատեն կը վատթարանայ և կը կործանի . Եթէ



տունկը հողի , ջուրի և արևու ջերմութեան պէտք ունի աճելու և զարգանալու համար , և այս պէտքերէն զրկուածին պէս կը չորնայ . եթէ մեր հագած մարմինը աճելու և զարգանալու համար կանոնաւոր սնունդի , հանդերձի և առողջ օդի պէտք ունի և ասոնցմէ զրկուած ատեն իր առողջութիւնը և կեանքը կը կորսընցընէ . նոյն օրէնքով մեր բանաւորութիւնն ալ զարգանալու և կատարելագործուելու նախասահմանուած լինելով իր սնունդի պէտքն ունի , և անկէ զրկուած ատեն կը մեռնի բարոյապէս : նիւթական գոյութեան սնունդը նիւթական է , իմացականին սնունդն ալ իմացական՝ միայն միջոցները նիւթական լինելու պայմանաւ , Բայց ինչ է բանաւորութեան կամ իմացականութեան սնունդը : — Ուսումն , գիտութիւն և կրթութիւն , որք պիտի սովորեցնեն մարդոյն պաշտել զԱստուած , ծառայել մարդկութեան , ծառայել հայրենեաց օգտին և ընկերին , մէկ խօսքով ծառայել յառաջագիմութեան և քաղաքակրթութեան , իւրաքանչիւրն իր կարողութեան սահմանին մէջ :

Մարդն այս ծառայութեանց կոչուած է մի միայն յառաջագիմութեան էակ մը լինելուն համար : Այս յառաջագիմութիւնը չէ թէ մարմ-

նով պիտի կատարուի , զի անասունք և բոյսերն ալ աճում ունին մարդոյն մարմնոյն պէս և այս աճումները չափ մ'ունին , ուր հասածնուն պէս կ'սկսին հակիլ 'ի մաշումն և յանկումն , այլ մտքով և սրտով կրնայ կատարուիլ մարդկային ճշմարիտ յառաջագիմութիւնը : Մարդը կը յառաջագիմէ մտքի լուսով և սրտի զգացմանց ազնուութեամբ : Մաքին լոյս տուողը ուսումն և գիտութիւնն են , իսկ զգացմանց ազնուութիւն տուողը բարոյականի կրթութիւնն է :

Այս իմացական և բարոյական աճումները կամ զարգացումները երբէք չափ չունին , երբէք սնունդէ յագուրդ չգիտեն ինչպէս մարմինը և տունկք գիտեն , այլ միշտ կը յառաջագիմեն և անհունութիւնը ընդգրկել կը յանդրդնին . գեղեցիկ յանդգնութիւն , որ մարդոյն յառաջագիմութեան և երջանկութեան գաղտնիքը ներվակելէն զաս' սնոր անմահութեան խորհրդանշանն է :

Թէ ինչ տեսակ գիտութիւն անհրաժեշտ է դիւղացւոց կամ երկրագործ ժողովրդոց , քիչ մը վերջը կը նշանակենք : Այժմ՝ ընդհանուր կերպով մը կ'ըսենք թէ այն ամէն ծանօթութիւնները՝ զորս միաքը դաստիարակութեան միջոցաւ հետզհետէ կ'ստանայ ֆիզիգա-



կան գոյութեանց , ասոնց օրէնքներուն և վերացական կտուրմանալի գաղափարաց ճշմարտութեանը վրայ , կը կազմեն մարդկային գիտութիւնը : Իսկ կրթութեան գալով՝ երկու տեսակ է , մին արտաքին՝ որ կը կոչուի քաղաքավարութիւն , և միւսը ներքին՝ որ կը կոչուի բարոյականութիւն : Այս երկուքը մէկէն մարդոյն վարքն ու բարքը կը կազմեն , և արժանի կ'ընեն զայն բարոյական և ընկերական կենաց : Առաջինը կենցաղավարութեան համար պէտք է ունենալ , իսկ երկրորդը բուն մարդկային արժէքն ունենալու համար :

Թէ մարդկային պարտուց ճանաչումը և թէ աշխատութեան արդիւնաւորութիւնը իմացական լոյս է այսինքն ուսումէ և գիտութենէ կախեալ են : Իսկ այդ պարտուց գործադրութիւնը այն բարոյական կրթութենէն որոյ սահմանադիւրք երկինքէն բերաւ Աստուած մը , և զայն մարդկային ազգին հաղորդեց իւր Սուրբ Աւետարանին միջոցաւ . եղական Գիրք , որ մարդոյն հոգւոյն հետ կը խօսի , սրտին խորերուն կ'ազդէ և խղճին բերկրութիւն կը պատճառէ , զի զայն իրեն պատգամակից կը գտնէ :

Եթէ նիւթական աշխարհն ու անոր մէջ եղածներն որ շօշափելի են՝ տեսնելու համար

նիւթական կամ ֆիզիգական լոյսի կը կարօտինք , որչափ աւելի իմացական լոյսի կը կարօտինք տեսնելու և ճանչելու համար այն ամէն բաները որ մարդկային են , որ մեզ անհրաժեշտ են բայց նիւթ չեն , որպիսիք են մարդկային ամեն տեսակ պարտաւորութիւնք , հոգւոյն փափաքները , մտքին անունդը , իրաւունքը , ճշմարտութիւնը , արդարութիւնը և դիւրակեցութեան գաղտնիքը որ բնութեան մէջ գրուած է տիեզերաց Արարչին ձեռք և իմացական լոյսով միայն կարելի է գտնել :

« Լոյս տուր , Տէր , աչաց իմոց , զի մի երբէք ննջեցից ի մահ » : Այս աչքը մտքի աչքը լինելով գիտենք թէ խնդրուած լոյսն ալ ֆիզիգական լոյս չէ , այլ մտքի լոյս , իմաստութեան լոյս զոր մարդարէն յԱստուծոյ խնդրեց անոր պատուիրանին ճամբուն մէջ ուղիղ գնալու համար , և զոր մենք ալ պիտի խնդրենք յԱստուծոյ բայց աշխատելով , միշտ ուսանելով և յառաջադիմելով 'ի ճշմարիտն , 'ի բարին , 'ի գեղեցիկն և յօգտակարն մարմնոյ և հոգւոյ , զի մեր դարուն մէջ Աստուած մտքի և իմաստութեան լոյսը նաև մարմնոյ հացը այս պայմանաւ միայն կը տայ խնդրողին : Բայց ինչ է այն մահը որոյ համար կ'ըսէ « զի մի երբէք ննջեցից 'ի մահ » :



— Տգիտութեան խաւարն է ուր մարդն զուրկ  
 իմացական լոյսէ և բարոյական ուղղութենէ,  
 նիւթական բարեկեցութեան և մարդկային  
 պարտուց ճամբան կորսնցնելով կը մտորի և 'ի  
 կորուստ թշուառութեան հողւոյ և մարմնոյ  
 կ'ընթանայ : « Կոյր զրկի 'ի ճառագայթից ա-  
 րեգական և տգիտութիւն՝ 'ի կատարեալ կե-  
 նաց » : Այո՛, մեր տգիտութենէն է որ մարդ-  
 կային կատարեալ կեանք չունինք, աղքատ և  
 յետադէմ ենք : մեր տգիտութենէն է որ զա-  
 ւակնիս կրթելու մեծ պարտքը չենք ճանչեր :  
 մեր տգիտութենէն է որ մեր անձին և ազգին  
 յառաջադիմութիւնը չենք սիրեր : մեր տգի-  
 տութենէն է որ աշխատիլ չգիտենք կամ աշ-  
 խատութիւննիս չարաչար և ապարդիւն է : մեր  
 տգիտութենէն է որ արհեստք և երկրագոր-  
 ծութիւն մեր մէջ չեն ծաղկած, մեր բարեբեր  
 երկիրները փուչերով և անախտան թուփերով  
 ծածկուած են, և մեք մեր հայն ու հանդերձը  
 օտարէն կը գնենք 'ի նպաստ օտարին և 'ի  
 փաստ մեր շահուն : միով բանիւ մեր տգիտու-  
 թենէն է որ նիւթական, իմացական և բարո-  
 յական կենաց ոչ ճաշակն ունինք, ոչ վայելքը  
 և ոչ միջոցը :

Ասկէ վեց ամսոյ չափ յառաջ պատուական

թերթի մը մէջ ըսինք ուրիշ ստորագրութեան  
 ներքե :

« Այս գաւառին Կ. Պօլսոյ մօտաւորութիւնը  
 և հողին մեծաւ մասամբ բարեբերութիւնը կը  
 պահանջեն որ միւս գաւառներէն աւելի հոս  
 ուսմունքն ու կրթութիւնը տարածուած, մրտ-  
 քերը լուսաւորեալ, բարքերն աղնուացեալ,  
 երկրագործութիւնն ու վաճառականութիւնը  
 զարգացեալ, ժողովուրդք ժիր՝ արթուն՝ բա-  
 րեկարգ և բարեկեցիկ լինէին, բայց ընդհա-  
 կառական այնպէս չէ : Ի բաց առեալ ամենա-  
 փոքր թիւ մը, դարերէ 'ի վեր մնացած իմա-  
 ցական և բարոյական խաւարը տակաւին կը  
 տիրէ հոս : Աղգային գործոց բարձի թողումը,  
 դպրոցաց սակաւութիւնն ու ողբալի անբարե-  
 կարգութիւնք դարման և բարուքում կ'աղա-  
 ղակեն : Անընթերցասիրութիւնը, կամ ուրիշ  
 խօսքով, մոտոց սնունդի պակասութիւնը՝ զմար-  
 դիկ յազգայինս և ի կրօնականս անտարբեր, և  
 'ի կենցաղականս անհող, անաշխատ, անհետա-  
 մուտ, անլոյս և թշուառ ըրած է, մանաւանդ  
 գիւղերու մէջ, եթէ մասնաւոր բարեկեցու-  
 թիւնք կը նշմարուին ուրեք ուրեք, անոնք ալ  
 չէ թէ ճարտարութեան, այլ տեղական խիստ  
 բարեբերութեան և դիպուածներու արդիւնք



են . սակայն 'ի չգոյէ տնտեսական գիտութեան որ ժողովրդոց ամենէն յառաջ սովորելու դասն է , շուայլութիւնն ու մտլութիւնը կ'սպառէ զանոնք :

Գնահատելու ըսէ թէ ազգօգուտ ընկերութիւն մը պիտի կազմենք , անդամ գրուէ , դպրոցին օգնութեան մասնակից եղիր , ազգային պարտաւորութիւնդ է այս , կամ թէ լըրագրի և ընթերցարանի բաժանորդ գրուէ , մտքիդ սնունդը հոգա , անհատական պարտաւորութիւնդ է այս , կամ թէ զաւակդ ուսման մէջ յառաջադիմելու բաւական կարողութիւն կը ցուցնէ , բայց պէտք է որ շարունակ դպրոց դրկես , պէտք եղած դրքերը կամ լրագիր մ'առնես , հայրական պարտաւորութիւնդ է այս : Ասոնց դէմ առնելու պատասխանդ է՝ կամ այնպիսի ցուրտ և լռին նայուածք մը որ մէկ մ'ալ այդպիսի խօսք իրեն չխօսելու ուխտ կ'ընես , կամ անբաւականութիւնը պատճառ կը բռնէ . մինչդեռ ձմեռը , մանաւանդ կիրակի օրերը , օրը 3 , 10 , 15 և աւելի զրշ . ծախք ընելով Բագոսի հեղուկին մէջ կը լողայ : Բայց այս ընթացքով կը թշուառանայ և չի կըրնար եղեր իւր տան հացը ճարել և Տէրութեան սուրբը հատուցանել . հոգ չէ , քահանային կը

դիմէ , երևելիին կը դիմէ , և երբ յոյսը պարասն ելնէ , մարդկութիւնը և ազգութիւնը կ'ուտէ , հաւատքն ու կրօնքը կ'ուտէ : (1)

Վերոգրեալ հատուածներուն առաջինին մէջի սա խօսքը թէ « դպրոցաց սակաւութիւնն և ողբալի անբարեկարգութիւնը դարման և բարւոքում կ'աղաղակեն » խիստ լակոնական է , քիչ մը պարզենք :

Գաւառիս մէջ ամէն Հայաքնակ դիւղ գրեթէ դպրոց կայ , 'ի բաց առեալ այն գիւղերը որ խիստ սակաւաբնակ են , կամ աւելի ճիշդ է ըսել , այս տեղերը գտնուած դպրոցները չկայի պէս են . վասն զի նախ որ զգացում չկայ , և երկրորդ որ անկարող են բնակիչք փոքրիկ դպրոցի մը ծախքն հոգալու , և անկարող են՝ վասն զի աղիտութեան ամենէն թանձր մթութեան մէջ են : Թէև այս տեղերը բազմաքնակ դիւղերէն աւելի երկրագործական չարաչար աշխատութիւն կայ , բայց արդիւնքը խիստ քիչ է . սրովհետև ժողովուրդը իմացական լոյսէ զուրկ լինելով ոչ հոգին տեսակը կը ճանչէ , ոչ բարեբեր ընելու կերպը գիտէ , և

(1) Տես Մասիս թիւ 1050 . նիկոսիդիոյ վիճակէն դրուած :



ոչ փորձառութեան դասերու հետամուտ լինելով օգտիլ զիտէ, իսկ բազմաբնակ գիւղերը թէ և մէն մի դպրոց կայ, բայց բազմութեան պէտքին նայելով խիստ անձուկ և անբաւական լինելէ զատ, յետին ծայր անբարեկարգութեան մէջ են անոնք: Ահաւասիկ անբարեկարգութեանց գլխաւորները .

1. Օրինաւոր դասատու չկայ, աննշան թիւ մը մէկդի առնելով, որ ըսել է պէտք եղածին չափ օրինաւոր դասատու չկայ իւրաքանչիւր դպրոցի մէջ: Ի չգոյէ լուսագունից, անպիտանները գրաւած են այս ամենափափուկ և ամենաբարձր պաշտօնը: Ասոր պատճառը մէկ կողմէն ժողովրդոց տգիտութիւնը, և միւս կողմէն կուսակցութեան չար ոգին է. իսկ հետեւութիւնը՝ « Պէտէ պաշտ պէտէ խաբէ »:

2. Վարժապետաց վարձքը կ' Պօլսոյ այլազներուն վարձքն է, և շատ անգամ անկէ ալ վար: Ասոր պատճառը անպիտան վարժապետաց (եթէ կը վայելէ անոնց վարժապետ ըսել) ճրի ծառայելու չափ զիջում ընելն է. բայց չմոռնանք ըսելու թէ ժողովրդոց երևելիներուն ամենամեծ մասին միակ փափաքն ու ջանքն ալ միշտ աղքատութեան և կարօտ վիճակի մէջ պահել է անարժաններուն հետ և այն սակա-

ւաթիւ բայց իր կոչմանը փոքր 'ի շատէ արժանի անձինքը, որոց յանձնուած է ազգային մանկաւոյն լոյս տալ և վերաշինել զանոնք բարոյապէս, առանց վայրկեան մը խորհելու թէ իրենց այս միջնադարեան վարմունքին զոհը միայն վարժապետները չեն, այլ և իրենք և ամբողջ ժողովուրդը: Խօսք հասկցողները կրնան ըմբռնել թէ ինչ ըսել կ'ուզենք: Վարժապետութիւնն այսպէս սպաննելու աշխատողները կը նմանին այն յիմարին՝ որ իր տանը լուսատու ճրագը մտրելու կ'աշխատի, և զինքը մութի մէջ կը թողու . . . :

3. Գտնուած դպրոցաց մէջ պէտք եղած ուսումները չկան, այն ուսումները՝ որք մեր օրերուն մէջ ապրող գիւղացի կամ երկրագործ ժողովրդի մը կենսական է գիտնալ: Քիչ մը վերջը, ինչպէս ասկէ առաջ ըսինք, այդ ուսումները պիտի նշանակենք:

4. Տղայք շարունակ դպրոց չեն երթար, մանաւանդ ամառը երկու օր դպրոց, երեք օր բացակայ կը գտնուին միշտ: Ամիսներով բացակայ գտնուողները մէկդի, քանի մ'օր բացակայ գտնուողք կրկին գալով իրենց կարգին մէջ կը նստին, բայց ոչ այնուհետև շարունակ գալու որոշմամբ, այլ միշտ այս վրասակար ըն-



Թացքին հետեւելով, և միշտ իրենց կարգն ու վարժապետը շփոթելով:

— Միշտ ստիպողական պատճառ մ'ունին բացակայ դառնուելու:

— Ոչ:

— Հապա ինչո՞ւ չեն յաճախեր դպրոց:

— Վասն զի հայր և մայր չունին, որ իրենց միտքն ու սիրտը մշակել տալու պարտքն զգալով շարունակ դպրոց ղրկեն զանոնք, փոխանակ ասդին անդին թափառելու և իրենց անդին ժամանակը կորսնցնելու:

— Միթէ ամէնքն ալ ո՞րք են:

— Այո, որք են բարոյապէս:

— Ահ, հիմայ հասկցայ բարեկամ:

Եզուկ ձեզ, մանկունք, որ թշուառութիւն կրելու համար եկած էք յաշխարհ, ոչ իբրև պատիժ մ'Աստուծոյ կողմանէ, այլ իբրև անհնարին և աններելի զրկանք մը ձեր ծնողաց սոխտութեան երեսէն:

— Ո՞ր մեղ է վասն բարոյական կուրուժեան դոցա:

— Ինքեանց և ոչ այլոց. «Շատ յանցաւոր են ծնողք որք իրենց աղայոց իմացական և բարոյական կարողութիւնները չեն զարգացներ: Յանցաւոր են աղայք որք իրենց ծնողաց ջա-

նադրութեանցն օգնելու անփոյթ կը լինին: Աւելի յանցաւոր է ընկերութիւնք երբ արդեւքներ կը դնէ մարդկային կարողութեանց ազատ և կատարեալ զարգացման»<sup>(1)</sup>

Ահաւասիկ իր դատապարտութեան հետ, դաւառիս նիւթական և բարոյական վիճակին համառօտ նկարագիրը, զոր զգայուն սիրտունեցող մը անհնար է որ առանց ցաւելու կարող ըլլայ կարդալ. քանզի իբրև մարդկային ժառանգութիւն, հոս ալ կան բնական և բարոյական միջոցներ մարդկօրէն շարժելու, մարդկօրէն գործելու, մարդկօրէն ապրելու և յառաջադիմելու համար. բայց մենք թողլով ինչ որ մեր յառաջադիմութեան և բարեկեցութեան միջոցներն են, այսինքն գիտութիւնը, կրթութիւնը և աշխատասիրութիւնը, անասնական կեանք կը վարենք սոխտութեան հետեւանքն եղող ամէն տեսակ խեղճութեանց մէջ տանջուելով:

Այլ որպէս զի մեր արդի ընթացքը թողունք, պէտք է համոզուինք նախ թէ՛ մարդն առանց գիտութեան և կրթութեան ոչ այլ ինչ է բայց եթէ գեղեցկաչէն բայց իր մէջ պէտք եղած

(1) Շ. Լը Հառախ աը Պօլիէօ. Քաղ. Տնտեսութ.



չողին չունեցող մեքենայ մը : Հետևաբար ինչ որ է շողին մեքենայի մը զօրութիւն և օգտակար շարժում տալու և հրաշայի արդիւնք արտադրել տալու համար, նոյնն են ուսումը, գիտութիւնը և կրթութիւնը մարդ-մեքենային իմացական կարողութիւնն աւելցնելու, զայն հնարագէտ ընելու, կենաց դժուարութիւնները լուծելու, անոր աշխատութիւնը արդիւնաւէտ գործելու, անոր կիրքերը չափաւորելու կամ զդացումներն աղնուացնելու, զայն բարձրացնելու և մարդկային ճշմարիտ կենաց հասցնելու համար :

Թողունք որ գիտութիւնն ու կրթութիւնը մարդոյն իմացական և բարոյական յառաջադիմութիւն կը տան. թողունք որ այդ յատկութիւնք մեր օրերու մարդոց անհրաժեշտ է ունենալ, գոնէ ամէն մարդ իր արհեստին մէջ օգուտ քաղելու և նիւթապէս յառաջադիմելու համար՝ պարտի նախ նոյն արհեստին տեսական պարզ սկզբունքը գիտնալ : Այս ճշմարտութիւնը անհակառակելի է, Առջևնիս բերենք երկու երկրագործ մի և նոյն վիճակի տէր մարդիկ, որոց մին երկրագործական գիտութիւնը թէ՛ տեսական և թէ՛ գործնական կերպով ուսած լինի, իսկ միւսին գիտութիւնը

միայն վարելու և ցանելու մէջ կայանայ, առանց հողերուն տեսակը, անոնց ինչ սերմ սիրելը և զանոնք պարարտացնելու կերպերը գիտնալու : Առաջինը կը մշակէ, օրինակի համար, հինգ արտավար տեղ և կ'առնու այսչափ արդիւնք, իսկ երկրորդը տասն արտավար տեղ կը ցանէ, կրկնապատիկ քրտինք կը թափէ և հաղիւ անոր առածին կիսոյն չափ արդիւնք կ'առնու. ինչո՞ւ համար արդեօք. — վասն զի թէ՛ մշակելու և թէ՛ շատ արդիւնք առնելու պայմանները չունի : Այս կողմերը, ինչպէս երկրագործական գիտութիւն չկեցած ամէն տեղ, կը կարծեն թէ միայն աղբ լեցնելով կարելի է շատ արդիւնք առնուլ. Յիրաւի աղբը միշտ պարարտութիւն է հողին, բայց առանց գիտութեան սովորեցուցած պայմաններուն, մարդոյն առատ արդիւնքի համար ունեցած յոյսը շատ անգամխաբուսիկ է : Այս մասին երկրագործական յօդուածին մէջ խօսիլ կարևոր կը սեպենք : Ուրիշ արհեստներու վրայ օրինակներ յառաջ բերել աւելորդ կը համարիմ, քանզի գիտութեանց և կրթութեան մէջ ամենէն աւելի յառաջադէմ եղող ազգաց ամենէն աւելի հարուստ և բարեկեցիկ լինելը Արևու պէս յայտնեալ ճշմարտութիւն մ'է այսօր :



կը մնայ մեզ յաւելուլ թէ գիտութեանց և կրթութեան արդիւնքը նիւթական բարեկեցութիւն չէ միայն : Առանց գիտութեան և կրթութեան, մարդը ոչ մարդ է և ոչ ֆրիստոնեայ : զի մարդկութիւնն ու ֆրիստոնէութիւնը մի և նոյն պարտքերը կը դնեն մարդոյն վրայ , այն է սիրել զԱստուած : և այս սէրը իր ազգին և մարդկութեան վրայ դործով ցուցնել , սիրել լոյսը կամ մշակել իր միտքն ու սիրտը , սիրել իր զանազին դաստիարակութիւնը , սիրել աշխատութիւնը , սիրել յառաջադիմութիւնը , սիրել քաղաքակրթութիւնը սիրելով միշտ ճշմարտութիւնն ու արդարութիւնը : Արդ մտքի լոյս չունեցող մը որ իր մարմնաւոր շահերուն անդամ անտարբեր կը գտնուի , ինչպէս պիտի կրնայ այդ ոչ-մարմնաւոր պարտքերն զգալ և գործադրել : մեր խելքը չի հասնիր : Եթէ վարագուրով ծածկուած աչք մը կրնայ տեսնել , մանաւանդ թէ յստակ տեսնել դուրսը եղած բաները , այն ատեն կը հաւատանք թէ իմացական լոյսէ զուրկ միտքն ալ կարենայ այդ վերացական բայց բուն մարդկային պարտաւորութիւններն զգալ և գործադրել անթերի : Ասքս ուրեմն ուսումը , գիտութիւնն ու կրթութիւնը ամէն մարդու անհրաժեշտ են

թէ նիւթական և թէ բարոյական յառաջադի-  
թեան համար որ մարդոյն նախախնամական կոչումն է :

Այժմ անդն է նշանակելու թէ գիւղացւոց դպրոցներուն մէջ յսուկնալու ուսումներն որոնք են : Բայց նախ տեսնենք թէ դաւառիս ազգային դպրոցաց մէջ ինչ ուսումներ կ'աւանդուին :

Գաւառիս դպրոցաց մէջ աւանդուած ուսումներն են .

- 1 . Հայկաբանութիւն ,
- 2 . Քրիստոնէական ,
- 3 . Ազգային պատմութիւն ,
- 4 . Թուաբանութիւն ,
- 5 . Աշխարհագրութիւն բնական և քաղաքական :

Ճշմարիտ է խոստովանել թէ այս նախնական ուսմանց վերջին երկուքը հազիւ երկու երեք տեղ կ'աւանդուին . մնացած տեղերը վերի ուսումներն անգամ խիստ թերի կերպով կ'աւանդուին : Ուստի վերոյգրեալ նախնական ուսումները ամէն դպրոցաց մէջ , մանաւանդ բազմամարդ տեղերու դպրոցաց մէջ մտցնելէ զատ պէտք է յաւելուլ նաև .

- 1 . Սկզբունք երկրագործական գիտութեան .



2. Սկզբունք տնտեսական գիտութեան,

3. Սկզբունք առողջաբանութեան :

Երկրագործական գիտութեան սկզբունքը գիտնալ աւելի երկրագործ ժողովրդոց անհրաժեշտ է վտան զի այն իրենց արհեստին դիպութիւնը լինելով անոր առաջնորդութեամբ միայն կարող կրնան լինել իրենց քրտինքը արդիւնաւոր ընելու :

Նոյնպէս տնտեսական գիտութեան և առողջաբանութեան սկզբունքները անհրաժեշտ է գիտնալ գիւղացւոց ինչպէս ամէն մարդու, որպէս զի առաջնոյն լուսով իրենց աշխատութեան արդիւնքը սպառելուն մէջ արդար, խոհեմ և նախատես լինելով բարեկեցիկ վիճակ մ'ունենան, և երկրորդին լոյսով իրենց առողջութիւնը պահպանեն որ ամէն հարստութենէ գերազանց է և թանկագին, և որ ի նրոյէ նոյն պատուական գիտութեան չարաչար կը դործածուի մեղանչելով ընդդէմ օրինաց սնունդի,

(<sup>1</sup>) Փախաբեւի է որ ազգային բժիշկը ընդհանուր ազգային վարժարանաց համար առողջաբանութեան դասագիրք մը յօրինէին, կամ Տօբթօր Ի. Թիւճեան էֆէնտի իր առողջաբանական յօդուածները մ.թ.օտիկ դասագրքի մը վերօժէր :

չափաւորութեան, բարեխառնութեան և այլն, նաև այն վարժարանաց մէջ, որոց նիւթական կարողութիւնը կը սանի, ոչինչ նուազ կարեւոր է յաւելուլ Տաճկերէնի և Գաղղիերէնի դասախօսութիւններն, առաջինն իբրև երկրին կառավարութեան լեզուն, իսկ երկրորդն իբրև ուսումնական և ծաղկեալ լեզու, Նոյնպէս կարևոր է յաւելուլ սկզբունք երկրաչափութեան և Գծագրութեան : Յայտնի է թէ Տաճկերէնը, Գաղղիերէնը, Երկրաչափութեան և Գծագրութեան սկզբունքները դաւառական դպրոցաց մէջ մտցնել եթէ կարևոր կը համարինք, աւելի այն աշակերտաց օգտին համար է, որք դպրոցէն վերջը Ազգին կամ Տէրութեան պիտի ծառայեն որ և է պաշտօնով :

Ահաւասիկ գաւառական դպրոցաց մէջ մտցընելու անհրաժեշտ գիտութիւնները. անհրաժեշտ կ'ըսենք, անոր համար որ գաւառայնոց, իմացականին հետ նիւթական և բարոյական վիճակներու բարւոքումը, կամ պարզ խօսելով, անոնց թշուառութենէ ազատումը այդ գիտութեանց լոյսերը օր մը յառաջ մտքերու վրայ սփռուելէն կախում ունի : Ասկէ դուրս հազար տարի աշխատէ, փրկութիւն չկայ :

Բայց որովհետև այդ գիտութեանց ծաւա-



լու մը՝ դպրոցաց միջոցաւ՝ ապագայ սերունդին  
աւելի օգտակար կրնայ լինել, և որպէս զի  
ներկայ սերունդն ալ իր աշխատութենէ օ-  
գուտ քաղէ և իր վիճակը բարելաւէ, անհրա-  
ժեշտ պէտք է որ յիշեալ կարի կարեւոր գի-  
տութիւններն իր դպրոցաց մէջ մտցնելուն հետ  
մէկտեղ, կարելի եղածին չափ երկրագործա-  
կան տեղեկութիւններ ընդունի և անոնց հա-  
մեմատ շարժի: Ահա մենք քանի մը խօսքով  
երկրագործութեան վրայ ակնարկ մը նետելէ  
յետոյ՝ նոյնին վրայ գործնական ինչ ինչ տե-  
ղեկութիւններ սալու կ'երթանք:

Հոս խօսք չհասկցող մը առջևնիս կենէ և  
կը հարցնէ մեզ, — Ո՞վ պիտի բարեկարգէ մեր  
դպրոցները, և ի՞նչ միջոցով այդ գիտութիւն-  
ները մեր դպրոցաց մէջ պիտի մտցնէ որպէս զի  
մեր և մեր զաւակաց կեանքը բարելաւի, կը  
պատասխանենք: — Ամէն բերան պարտաւոր է  
ծամել նոյն իսկ իրեն համար. . . .



մասի բոլորս նայի, յիւրօրոցայ արժեքներ  
բայ դատարարս իմնելու արարչի քանոն լայ  
արժեքն չառայ, յիս ցոյցմոյ բնութեամբ  
արարչի ինքն: Ինչո՞ւ նորոգի մէջն արարչի լայ  
արարչի միջոցով, արարչի կողմէն արարչի  
արարչի քանոնով արարչի քանոնով արարչի

ն. Երկրագործութիւնը Աստուծոյ և Բնութեան  
թելադրութեամբ իր ծագումը Ադամ նախն-  
հայրէն առած լինելով՝ մարդկային արհեստից  
ամենէն առաջինն է: Իւր առաջնութիւնը  
մարդկային կենսապահիկ պէտքերէն յառաջ  
եկած է. ըստ որում նա է մարդոց սնունդը  
մատակարարողը, և քաղաքակրթեալ աշխարհի  
հագուստին վերաբերեալ նախնական նիւթերն  
արտադրողը: Ուստի մարդկային կեանքը և  
յառաջադիմութիւնը երկրագործութենէ կախ-  
եալ են:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐԲԵՒՈՒՆԻՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ  
ԴՍԲՄԱՆ ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

Երկրագործութիւնը Աստուծոյ և Բնութեան  
թելադրութեամբ իր ծագումը Ադամ նախն-  
հայրէն առած լինելով՝ մարդկային արհեստից  
ամենէն առաջինն է: Իւր առաջնութիւնը  
մարդկային կենսապահիկ պէտքերէն յառաջ  
եկած է. ըստ որում նա է մարդոց սնունդը  
մատակարարողը, և քաղաքակրթեալ աշխարհի  
հագուստին վերաբերեալ նախնական նիւթերն  
արտադրողը: Ուստի մարդկային կեանքը և  
յառաջադիմութիւնը երկրագործութենէ կախ-  
եալ են:

Երկրագործութիւնը մարդկային արհեստից  
մէջ ամենէն պատուաւորն է կրկին պատաճա-  
ռաւ. նախ զի բոլոր արհեստից մայրը և կենաց  
ու քաղաքակրթութեան աղբիւրն է, և երկ-  
րորդ զի անոր վաստակին մէջ մարդկային չա-  
հասիրութիւնը խաբեբայութիւն և նենգու-  
թիւն չի կրնար մտցնել, որովհետև ուղղակի Աս-  
տուծոյ ձեռքէն կը գայ այն:



Թողունք որ Հայոց և Հռովմայեցոց հին աղնուականութիւնը երկրագործութեան մէջ կը կայանար՝, արդի լուսաւորեալ աշխարհները, Եւրոպա և Ամերիկա, երբ քաղաքակրթուիլ ուզեցին, նախ այս երկնատուր արհեստին բարգաւաճութեանը ձեռք զարկին, գիտնալով որ այն է միւս բոլոր յառաջադիմութեանց պայմանը: Արդարև զանազան արհեստից պարապող գործաւորք ամէն բանէ յառաջ աշխատելու համար հացի և ուրիշ սնունդի կը կարօտին զորս երկրագործութիւնն է տուողը, և ապա իրենց արհեստին տարերքն եղող ուրիշ նախնական նիւթոց՝ զորս նոյնպէս մատակարարողը երկրագործութիւնն է, որպիսիք են կտաւի, չուխայի, կերպասի, տոբի, սօֆի նաև զարդուց վերաբերեալ ձեռարուեստից նիւթերը, երկրորդական պիտոյքները լեցնող արհեստից նիւթերն են զորս երկրագործութիւնը չի մատակարարեր, այլ մարդկային ճարտարութիւնը, ինչպէս են հանքային ամէն տեսակ նիւթերը:

Այլ սակայն քանի մը սխալ կարծիք գիւղացի փողովուրդը իր ճամբէն շեղեցուցին, և խեղճութեան մէջ ձգեցին: Այս կարծիքներն են, առաջին թէ երկրագործութիւնը անարգ

արհեստ մ'է, երկրորդ թէ սակաւարդիւն է, և երրորդ թէ դժուարին է այն: Ամէնքն ալ ազիտութեան արդիւնք: Չկայ արհեստ մը որ ինքնին անարգ լինի երբ մարդկային կենաց և յառաջադիմութեան կը ծառայէ: Արդ քանի որ երկրագործութիւնը առաջին և միակ աղբիւրն է մարդկային կենաց և յառաջադիմութեան, անոր համար անարգ է ըսել նախախնամութեան դէմ հայհոյութիւն է. զի նա է երկրագործութիւնը մարդոյն ուսուցանողը և մարդկային կեանքն անոր կապողը: Ո՛չ, այն արօրին մասը՝ զոր Աստուած օրհնելով մարդկութեան ձեռքը տուաւ, աւելի յարգի և պատուաւոր է քան զուրազն ճարտարապետին և քան զկարկին երկրաշափին: Անարգ են միայն այն նողկալի նորաձեւութիւնք, ամօթալի հնարք և անպատիւ միջոցք, որք զմարդն յունայնութիւն կ'առաջնորդեն, բարքը կ'եղծանեն, և աշխարհի հարստութիւնները կ'անհետացնեն: Ուստի կը կրկնեմ. երկրագործութիւնն ամենէն պատուաւորն է թէ ընապէս և թէ իւր արդիւնքներով, երկրագործութեան վրայօք կարծեմ թէ սակաւարդիւն է, բոլորովին սխալ դադարաւոր մ'է:



որ զայն չճանչելէն յառաջ կը գայ. ստուգապէս սխալ է, մանաւանդ Փոքր Ասիոյ նկատմամբ, ուր կը գտնուի և Նիկոմիդիոյ գաւառը իր ծովեզրներովը, իր ընդարձակ դաշտերովը, իր գեղեցիկ լեռնադաշտերովը, հովիտներովը և նկարչական կողերովը, իր ընդհանրապէս բարեբեր հողովը և բարեխառն կլիմայներովը, ի բայ անեալ մէկ երկու ծովեզրներու կլիմայ զոր գիտուն երկրագործ մը շատ գիւրաւ կըրնայ բարեխառնել, և ասոր կերպը ուրիշ բան չէ բայց եթէ խրամներ (խէնտէք) բանարով տեղւոյն ջուրն աննուկամ զայն գէպի ծով վազցընել, և բազմաթիւ ուռիներ տնկել, բայց ուտելիքի մասին մեծ զգուշութիւն ընելու պէտքը չմոռնալով:

Ընդհակառակն երկրագործութիւնը ամենէն արդիւնաւորն է, եթէ մշակութեան պայմանները չպակսին. Չկայ արհեստաւոր մը որ հինգ հազար շրշ գրամագլխով նոյնչափ (իր գրամագլխոյն չափ) շահի. Ամենէն շատ յաճախորդ ունեցող վաճառականը, արհեստաւորը կամ խանութպանը շատ գոհ կը լինի եթէ իր գրամագլխոյն վրայ հարիւրին քսան շահի. Բայց երկրագործութիւնը, եթէ իր նիւթական և իմացական միջոցներն ու պայմաններն ունենայ,

տարակոյս չկայ որ հարիւրին հարիւր կրնայ շահ տալ ապահովապէս. Ահաւաստիկ խեղճ միջոցով ցորենի մշակութեան եղանակի ենթադրութիւն մը հաշոյ վրայ հիմնեալ.

Դիցուք թէ մէկն երկրագործութեան արդիւնքն հասկնալ ուզելով փորձ մ'ընելու ձեռք զարկաւ մէկ արտավար հողի վրայ, որ օտարի սեպհականութիւն էր. նոյնպէս դիցուք թէ հողը լաւ տեսակէն էր բայց անմշակ, և թէ ինքը ուրիշին մշակել պիտի տայր զայն խեղճ բահի (պէլ) միջոցաւ, ըստ սովորութեան Պարտիզակցոց.

Մէկ արտավար հողի վարձք 30 շրշ.

Եօթն օր առաջին անգամ փորելով հերկելու, հինգ օր երկրորդ անգամ փորելու, (1) և չորս օրէն ցանելու և երկու օրէն քահելու համար օրականի ծախք 8 շրշէն 144 շրշ. Եւ որովհետեւ մէկ արտավար տեղէն ելած օրանը խիստ քիչ լինելով՝ կայր խիստ փոքրիկ պիտի լինի, ուստի կաշի համար կը դնենք ծախք 15 շրշ.

Մէկ քիչ սերման ցորենի գին 30

Ընդհանուր ծախք 189

(1) Այս տեղերը միանգամ եւեթ կը փորեն կամ կը վարեն.



Եւ որովհետեւ հողը լաւ և երկրագործական պայմաններով մշակուած էր, ուստի արտին բերքն եղաւ տասանորդէն դուրս 12 քիլէ ցորեն, որ երեսունականէն կ'ընէ 360 զրշ. Ուսկէ բոլոր ծախքն հանելով 189

մնաց զուտ շահ 171 զրշ.

Եթէ ընթերցողն այս ենթադրական հաշիւէն չհամոզուեցաւ, փորձուած իրողութեան մը օրինակը կը յիշենք, որոյ ցուցուցած արդիւնքն աւելի զարմանալի է:

Քանի մը շարաթ յառաջ, կիրակի օր մ'էր, երբ գիւղիս մէկ սրճարանին մէջ նստած՝ երկրագործութեան վրայ խօսք բացուելով, ես այլոց յայնմ մասին ունեցած սխալ գաղափարը կը ջրէի, պնդելով թէ այս երկիրը բարեբեր է, և թէ երկրագործութիւնը ամենէն աւելի արդիւնատէտ է, միայն թէ մշակութեան պայմանները գիտցուի և ի գործ գրուի: և ահա մեր քով նստողներէն մէկը, որ Ուստա Պետրոս կ'ըսուէր և Կեղեցի էր, (Հայաստանի Եկեղեաց գաւառէն) մեր խօսքը հաստատեց պատմելով թէ ինքն երկու տարի յառաջ Քըրք-Հարման լուած տեղը, որ Պարտիզակէն կէս ժամու չափ հեռի փոքրիկ լեռնագաջտ մ'է

քիչ մը զառիվայր, երեք գրիւ (քիլէ) ցորեն ցաներ է Ռօտոսթոյի (Թէքիրտաղ) զարագուղայ ըսուած տեսակէն, և վաթսուն և չորս գրիւ ցորեն առեր է: Ինչպէս որ յայտնի կ'երեւի, մէկ գրիւէն 24 գրիւ արդիւնք առեր է որ 30 ականէն կ'ընէ 1920 զրշ.

Եւ որովհետեւ ինքն անձամբ միանգամ և եթ բահով փորելով և ցանելով ըրեր էր այդ երկրագործութիւնը, մենք իր օրականը, սերման ցորենի գինը և տասանորդը մէկտեղ իբրև ընդհանուր ծախք հաշիւ ընելով գտանք 560 զրշ, որ վերոյիշեալ գումարէն հանուելով մնաց զուտ արդիւնք 1360 զրշ:

Մենք այս արդիւնքը չափազանց աեսնելով՝ չհաւատաւ և հերքել ուղեցինք. որովհետեւ վերոյգրեալ հաշիւին նայելով դրամագլուխը որ է 560 զրշ, (ի բաց առեալ հողի դրամագլուխը որ եթէ հաշիւի ալ աւնուէր, կամ ուրիշին լինելով վարձու բռնուէր, հազիւ 50—60 զրշի չափ փոքրիկ գումար մը պիտի յաւելոյր յիշեալ ծախքին վրայ) չէ թէ մէկին գէմ մէկ, այլ երեքի մտ վաստակ ըրեր էր. բայց երկու արժանահաւատ անձինք որոնք հոն ներկայ էին, վկայեցին թէ իրենց գիտցած բանն էր այդ. թէ պատմուածն ստոյգ իրողութիւն



մ' էր, և թէ մազիւ չափ չափազանցութիւն չկար անոր մէջ, չէր ստանալ ինքնուրուի հարցուցիւնք թէ նոյն սերմէն տակաւին ունիս ձեռքդ ո՛չ, ըսաւ նա: Յայնժամ հասկացանք որ նոյնէն չունենալուն պատճառն իւր ծուլութիւնն էր որով հողին սիրած այն սերմը կորսնցուցեր էր, Բայց հոս մեզ ինչ փոյթ անոր ծուլութիւնը. մեզ հարկաւոր եղած կէտն այն է որ, եթէ այլոց փորձերը յաջող չեն այս կողմերը, պատճառը ազիտութիւնն է, զի ահա այդ մարդուն այդ անդամ առած արդիւնքը որ աւելի բնութեան տուրք է քան թէ օրինաւոր մշակութեան արդիւնք, յայտնի ապացոյց մ' է թէ երկրագործութիւնը բազմարդիւն է, և թէ այս կողմերու հողն ալ բաւական բարեբեր է:

Այս առաւօտ առ թիւ մը երկրագործ ծերուկի մը հետ տեսնուելով հարցուցի թէ « Այս տարի ցորենդ ինչպէս է », Պատասխանեց. « Այս տարի ցորենս զարնուած էր: — Հերու ինչպէս էր. — հերու չորս քէֆէն 50 քէֆ առի: (1)

Այսպիսի շատ օրինակներ կան որ մեր ըսածը

(1) Յիշեալ առաւօտը 1871 օգոստոս 1 ի առաւօտը պէտք է իմանալ:

կը հաստատեն, բայց մի առ մի յիշեն երկար լինելով զանց կ'ընենք:

Արդ կը հարցնեմ, որ գործի մէջ 200 ի մօտ դրամագլխով 170, և կամ 560 ուլ 1360 զըլկարելի է վասակիլ մէկ տարւոյ շրջանի մէջ, ի բաց առեալ շերամի բերքը որ նոյնպէս երկրագործական է: Ահա այս իրողութիւններէն յայտնի կ'երևի թէ, եթէ երկրագործ մը բաւական մշակելի հող ունենայ և զոյգ մը եզովինքն վարուցան ընէ, ըստ ամենայն պայմանաց երկրագործութեան մշակելով հողը, տարակոյս չկայ թէ աւելի պիտի շահի կամ գոնէ միշտ իր դրամագլխոյն կիսոյն չափ պիտի շահի, մինչդեռ առևտուրի զբաղողք հազիւ հարիւրին քսան կրնան վասակիլ ի տարւոյ: — Բայց կ'ըսէ ընդդիմախօս մը, եղնամուղով երկրագործութիւնընողներն ալ չեն շահիր. պատճառնինչ է:

— Ատոր պատճառը քիչ մը վերջը յայտնելով փոքրիկ երկրագործաց համար, որպէս զի եզով վարուցան ընեն, խիստ քիչ ծախք ընելու և աւելի շատ շահելու նպատակաւ, աւելի դիւրին և սակաւածախ միջոց մը պիտի առաջարկեմ խօսքիս կարգին մէջ: Գանք այժմ երկրագործութեան դժուարին լինելու առաջարկութեան:



Ամէն գործ իր գոթուարութիւնն ունի, և ամէն գոթուարութիւն գիւրութեան փոխուելու համար հնարքներ և միջոցներ չեն պակտիր, միայն թէ գիտնալ և գործադրել պէտք է ինչ որ գոթուարութեան մը բանադին կընայ լինիլ: Ասկէ զատ, երբ արհեստ մը կամ գործ մը բազմաչահ է, գոթուարութիւնք մարդուն աչքին չեն երևիր: Գնա՞ գործաւորի մը առաջարկէ. « Ե՛կ, իմ գործիս աշխատէ, իմ գործս աւելի տեւական է, և պատուոյս վրայ խօսք կը տամ որ միշտ հիմակուան օրականիդ կրկին անգամը պիտի վճարեմ »: Միթէ չի ձգէր իր գործն և քու գործիդ աշխատելու գար, թէ և գիտնայ որ գործիդ վրայ ինն ժամ պիտի աշխատի, մինչդեռ եօթը ժամ կ'աշխատէր այն գործին վրայ ուստի կանչուեցաւ: Անշուշտ պիտի ընդունի, և հրճուանօք, որովհետև վարձատրութիւնը և գործին տեւականութիւնը իր եռանդն արծարծելուն հետ իրեն բարեկեցութիւն ալ կը խոստանան: Բայց ինչո՞ւ օրինակներու մէջ թարթափել. ո՞չ ապաքէն մարդիկ շատ անգամ աւելի գոթուարին, աւելի վտանգաւոր գործոց կը ձեռնարկեն մի միայն ընտանեաց հացը ճարելու համար և ոչ թէ հարստանալու: Մարդը ո՞ր գոթուարին գործէն ետ կեցած է:

Հանքահանութեան գործին մէջ հարկւրաւոր մեթոդ գեանին խորը մտնողները մարդիկ են: Ծովերն յիրար խառնելու համար մեծամեծ անջրպետներն պատուողները մարդիկ են: Հրեղէն կառօք (չողեկառօք) թռչելու համարահագին ժայռերը փարատող, առապարներն հարթող և սոսկալի լեռանները մեծ երկարութեան մը վրայ ծակողները մարդիկ են: Ո՞ւր կը մնայ ուրեմն երկրագործութիւնը որ բնական և անմեղ արուեստ մ'է, որ դիւրին է և միանգամայն արդիւնաւոր, ինչպէս քիչ մը յառաջ ցոյց տուինք: Ուրիշ գործեր կամ արհեստներ ոչ ձմեռն հանգիստ կը տան մարդոյն և ոչ ամառը. բայց երկրագործութիւնն ՚ի գարնայնի մեր ոտից ներքև գալարեաց անկողին մը կը փուէ (ցաներն ակնարկել կ'ուզեմ), մեր հստատելիքը վարդերու, շուշաններու և յամիկներու անմահական բուրմունքը կը լեցնէ. յամարայնի մեր աչաց ոսկեփունջ հորիզոններ կը տայ, յաշնայնի Աստուծոյ ձեռքէն ելած առատ և ազգի ազգի արդիւնքներով մեր ձեռքը կը լեցնէ ՚ի վարձատրութիւն մշակական քրտանց, և ՚ի ձմերայնի երկար հանգիստ մը կը տայ, ո՞չ թէ պարապ անցունելու՝ այլ մոռաւոր մշակութեան կամ ընթերցանութեան պարապելու համար:



— Բայց ներկայ օրերու գիւղացիք քաղաքացիի կեանք վարելու փախարեղով հողի մշակութենէն կը փախչին և միայն քանի մ'օր շերամի վրայ աշխատելով՝ իրենց բոլոր պէտքերը նոյնին արգիւնքովը լեցնելու պահանջումն ունին, որպէս զի սրճարանները դատարկ չմնան :

— Այդ անհնարին է , սը կողմ ալ դառնան, աղքատութիւնը իրենց առջևը պիտի ելնէ : Ուրովհետև ընկերական կարգադրութեամբ աւելի քաղաքացւոյն կը վերաբերի արհեստից , վաճառականութեան և ճարտարութեան զբաղելը քառ որում ընդհանրապէս մշակելի հող չունի քաղաքաքին : Իսկ քանի որ գիւղացին իբր դրամագլուխ մշակելի հող ունի ընդհանրապէս , մանաւանդ մեր երկրի մէջ , և քանի որ ուրիշ արհեստներով կամ առուտուրով ապրելու պայմանները չունի , սովորաբար երկրագործութեան պարապելու կը պտրտաւորի , ո՛չ միայն իր ուտեստի պէտքը լեցնելու համար երկրագործական բերքերով , այլ մաս մ'ալ քաղաքիին ծախելու համար , որպէս զի կարող լինի անոր գնով ձեռք բերել այն ամէն արուեստական բաները որոց ինքը կը կարօտի : Ուստի եթէ բնական է որ ամէն մարդ իր դրամագլխոյն շահովը պիտի ապրի , այսինքն դրամի , հանճա-

րի , արուեստի , հողի և ֆիզիքական աշխատութեան , թող քաղաքացին փսճառակամութիւնն ու արհեստները յառաջ տանի , ըստ որում իր դրամագլուխն է դրամ և ճարտարութիւնք , իսկ գիւղացին թող երկրագործութիւնը յառաջ տանի , ըստ որում իր դրամագլուխը մեծաւ մասամբ հողն է , և այսպէս ձեռք ձեռքի տալով թող արեղերական յառաջագիմութիւնը ծնանին :

« Կատարելագործեցէք ճարտարութիւնը քաղաքացւոյ մէջ , կատարելագործեցէք երկրագործութիւնը գիւղօրէից մէջ , և բոլոր դժուարութիւնք պիտի հարթուին : Ամէն ուր որ ճարտարահնար արուեստք և երկրագործութիւնը դադարական են , հոն թմբած ժողովուրդք ապշութեան մէջ կ'իյնան : Իրենց առաջին բարեկեցութիւն մը պէտք է՝ որ իրենց առաջին մտածութիւնն արծարծէ : Ուստի պաշտպանել երկրագործութիւնը՝ իմացականութիւնն (խելքը) արթնցնել , փոքր ինչ գիւրակեցութեամբ գիւղօրէից քաղաքակրթութիւնն ու կրթութիւնը սկսել է : Ամերիկայի մէջ երկրագործութիւնը ազատութենէն յառաջ մտաւ . նա ազատութեան առաջնորդեց , Ֆրանսայի մէջ երկրագործութիւն չունեցող բոլոր



ժողովուրդը թշուառութեան, և ասոր հետեւանքն եղող ստրկութեան մէջ կը մեռնին: Սովրեցնել իրենց դեռինները փորել, իրենց դիւրակեցութիւն և կրթութիւն սալ՝ զսնոնք մելութիւններէ, ծուլութենէ և թշուառութենէ ազատել է, ազատութիւնն երկրորդ անգամ իրենց տալ է: (¹)

Այս սողերը գրուելէ ի վեր հազիւ 37 տարի անցած է, և այսօր մշակելի դատարկ հող չկայ Գաղղիոյ ինչպէս նաև Գերմանիոյ մէջ:

Երկու տարի յառաջ Մ. Մայէօր անուն երկրաբան Գաղղիացի մը առթիւ մը Պարտիզակ գալով պատեհութիւն ունեցանք իր հետ տեսնուելու, կիրակի օր մ'էր. զիւղիս հարաւային կողմը Ասուր ըստած տեղը զնացինք պտոյս մ'ընելու համար: Հոն իր թարգմանին ձեռքէն՝ որ գաղղիացի երիտասարդ մ'էր դիտակն առնելով զիմացի կէս մշակեալ անդերն ու պարտէզները դիտելէ ետև ըսաւ. «Ինչ գեղեցիկ տեղեր, բայց անմշակ են», Պատասխանեցի. «Իժբաղդաբար մշակութիւնը ետ մնայած է այս երկրին մէջ, թէև Տէրու-

(¹) Էմէ Մարթէն. Լեւո. Մայր. դաստի. Գիրք Ա. Գլ. ԺԸ.

թիւնը հրաման տուած է արքունի անմշակ կամ անսեպհական տեղերն ալ մշակելու» և յաւելցուցի հարցնել թէ «Գաղղիոյ մէջ ալ կատարութիւնը հրաման կը տայ աղքատ ժողովրդոց արքունի անմշակ հողերը մշակելու»: «Անմըշակ հող չկայ, ըսաւ նա, Գաղղիոյ մէջ»: (¹)

Ինչ երջանկութիւն Տաճկաստանի գաւառացւոց, մանաւանդ զիւղացւոց, սակայն ինչ տարակայութիւն տրամադրութեանց Եւրոպացի և Ասիացի ժողովրդոց մէջ: Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ մշակելի հողը ժողովրդին չը բաւելով, իսկ Անգլիոյ մէջ հասարակ ժողովուրդը հող չունենալով՝ նոքա հող կը բնատուեն քաղաքական ազատութեան հետ կալուածական լիճակի անկախութիւն կամ որ նոյն է հացի ազատութիւն ունենալու համար, և չկրնալով ձեռք բերել իրենց բաւական հող, կը խլրտին, կը խռովին և կը խռովեն, և հաղաբնութիւն կը գաղթեն յԱմերիկա. ասդին Ասիացի ժողովուրդը քիչ շատ սեպհական հող ունի, և Տէ-

(¹) Անշուշտ իբրև անտուտ մշակեալ վայրերն ալ ի միասին իմանալու է, զի այն ալ երկրագործութեան մէկ ճիւղն է որ մեր մէջ բուրսովին երեսի վրայ ձգուած է:



րութեան կողմէն ալ հրաման ստացած է անսեպ-  
հական տեղերը մշակելու, բայց հողին յարգը  
չգիտէ, և կարծես հայն աղափութեան և բա-  
րօրութեան գաղափարը չունի: Հաւատամք  
արդեօք Վիգդոր Հիւկոյի ըսածին թէ, « Աստ-  
ուած կարողութիւնը մէկ կողմը դրած է, ա-  
խորժակը միւս կողմը » (1): 'Ոչ երբէք մարդոց  
անդգամութիւնն է որ ունեցողը յարգը չգիտէ,  
մինչդեռ չունեցողը անդին կը բնտուէ:

1866 ին՝ ուր Պարտիզակ և քանի մը շրջակայ  
գիւղեր թշուառութեան մէջ իյնալով մարդա-  
սէք անձի մը (Փանոսեան էֆէնտիի) ջանիւք  
և այլ բարեսէր անձանց գործակցութեամբ հա-  
սարակաց ողորմութեան ալիւր կ'ուտէին շա-  
տեր, հետեւեալ խօսքն ըսինք Պարտիզակցոց  
Ս. Վարդանանց սօնախմբութեան առթիւ:

« Կը հարցնեմ ձեզ. ինչ կըսէք այն քաղա-  
քացւոյն՝ որ առուտուրի նուազութիւնը պատ-

(1) Տես Ռէնի Ճամբորդութիւնք. Վիգդոր Հիւկօ  
այս ճամբորդութեան մէջ պանդոկ մը գնալով երբ  
կը տեսնէ որ պաշտօնակալ մը (կարծեմ) համադամ  
եւ բազմատեսակ կերակուրներ ունի առջեւ եւ շա-  
խորժանօք կ'ուտէ, մինչդեռ անդին գինուր մը իր  
առջեւի բիշ մը կերակուրն ու սեւ հացը անմիջապէս  
կը լափէ, վերոյիշեալ խօսքն ըսած է հոն մտովի:

ճառ բռնելով, իր խանութին ապրանքները չի  
շահեցններ, այլ խանութը փակելով տունը կը  
նստի կամ դրօսարանները կ'անցընէ իւր ժամա-  
նակը: Կը հասկնաք անշուշտ թէ ինչ ըսել կ'ու-  
զեմ: Նոյնը կ'ըսէ և քաղաքացին այն գիւղաց-  
ւոյն՝ որ բերոց անյաջողութիւնը պատճառելով  
այն աստիճան բարձի թողի ըրած է երկրագոր-  
ծութիւնը՝ որ անոր կերպն անգամ մուցած է:  
Բերոց անյաջողութիւնը պատճառ բռնելով  
երկրագործութեան հրաժարիլը՝ ծուլութիւնը  
արգարացնելու պատրուակ մը և բնութեան  
դէմ մեղանչանք մ'է, վասնզի բնութիւնը թէ  
և ամէն հողի մի և նոյն բերրիութիւնը սուած  
չէ հաւասարապէս, սակայն և ոչ մէկ երկիր  
ամէն կողմէ անպսուղ ըրած է բարբոսին, մա-  
նաւանդ բնակելի տեղերը և այլն:

Աշխարհիս ամենէն բարեբեր հողերը բարե-  
խառն գօտիներու ներքև կը գտնուին: Արդ,  
Նիկովիդիոց գաւառն ալ Հիւսիսային բարե-  
խառն գօտիին ներքև գտնուելով՝ ի հարկէ սա  
ալ ունի բարեբերութեան հանգամանքները  
զորս փորձերն ալ արդէն յայտնած են. բայց  
ինչո՞ւ գիւղացիք չեն ապրիր: — Վասնզի, ի  
բաց առեալ խիստ քիչերը, երկրագործութեան  
ամենէն կարևոր ճիւղը այն է արմտեաց մշա-



կու թիւնը թողլով, այն ինչ տեղ միայն քիչ մը ձիթ ենի կը մշակեն, այս ինչ տեղ միայն քիչ մը բամպակ, և այն ինչ տեղ քիչ մ'այդի՝ միայն իր մէջ մտնելու համար գինին, իսկ ընդհանրապէս չերամ, որ երկրագործութեան թէև ամենէն շահաւէտն, բայց միանգամայն ամենէն փափուկը կամ աւելի ճիշդ խօսելով՝ ամենէն հիւանդոտը լինելով, խիստ շատ անգամ կը խաբէ մի միայն իրեն կապուող մարդոց յոյսերը, և մէջ տեղը ձրի ծախուց մեծ դումար մը թողլով շատեր կը կործանէ : Այս մասին դարձեալ վերոյիշեալ հանդիսի մէջ հետևեալ խօսքերն ըսինք .

« Կը խոստովանիմ թէ շերամի բերքը երկրագործական բերոց մէջ ամենէն շահաւէտն է երբ յաջողի, բայց երկրագործութեան միայն այս ճիւղին հետևել խելացութիւն չէ, վասն զի մի և նոյն բերքը ամէն տարի նոյնպէս չի յաջողիր . բոյսերն ու արտերն ալ մեզ պէս օդին զանազան ազդեցութեանցն են թակոյ լինելով՝ անոնք ալ մեզ պէս երբեմն կը հիւանդանան և մեր ակնկալութիւնն ի դերի կը հանեն : Ուստի ամէն մարդ որոյ դրամադրութիւնը հոգն է, որոյ կեանքն ու զբաղմունքը երկրագործական են, պէտք չէ որ միայն մէկ տեսակ բերք արտադ-

րելու հետևի, այլ քանի մը տեսակ, մանաւանդ իւր ու տեստի վերաբերեալները, այսինքն արմըտիք (ցորենեղէնք) որք հոս ամէնուրէք կը յաջողին՝ երբէք ձեռքէ թողելու չէ, որպէս զի միայն չյաջողած տոտն միւտով անօթութեան կամ պարտուց վտանգէն ազատի : Ինչո՞ւ համար վաճառականը կամ խանութպանը միայն մէկ տեսակ ապրանք չեն ծախեր, — վասն զի առուտուրը սակաւ կ'ըլլայ, և չեն կրնար իրենց ապրուստը հանել : Երկրագործութեան համար ալ նոյնպէս է, մէկ տեսակ բերքը որչափ ալ շահաւէտ լինի, յաջողութիւնն շարունակ և մշտատե չլինելուն համար, միայն անոր կապուիլը խոհեմութիւն չէ :

Ըսէ ուրեմն, ընդդիմախօս դու, ահա քեզ ցոյց տուի թէ զիւղացւոյն բնական զբաղմունքը երկրագործութիւնն է . թէ երկրագործութիւնը ամենէն պտտուտորն է արհեստից մէջ . թէ նա շատ գործերէ աւելի դիւրին է և աւելի շահաւէտ, և թէ մեր զիւղացւոց խեղճօրէն ապրելուն պատճառն միայն մէկ տեսակ բերքի կապուելն է . ըսէ ուրեմն, ինչ պատճառ կայ որ մեր զիւղացիք արմտեաց, այսինքն ցորենեղէնի մշակութեան ալ չեն պարապիր, այլ ընդհանրապէս միայն շերամի կամ ուրիշ մէկ



տեսակ բերքի մը կապուելով իրենց վրայ թըշ-  
ւառութիւն կը հրաւիրեն :

— Պատճառն այն է որ արմտեաց մշակու-  
թեան կերպը դժուարին է . զի ինչպէս գի-  
տէք, մեր քաղաքացի լինելու պահանջումն ու-  
նեցող գիւղացիք եղան հոգ չքաշելու համար  
բահով (պէլ) կ'ընեն երկրագործութիւնը , և  
բնականաբար մէկ կողմէն պէտք եղածին չափ  
չկրնալով ցանել , և միւս կողմէն ցանուածն ալ  
խիստ բազմածախ լինելով կը խրատուն երկրա-  
գործութենէ , կամ ճիշդը խօսելու համար  
արմտեաց մշակութենէ :

— Այդ ճամբան գնացողներուն իմաց սուր  
թէ յաջող ելք չիկրնար ունենալ իրենց բռնած  
ճամբան . թէ միշտ սուղի պիտի նստի իրենց  
աշխատութիւնը , Ամէն արհեստ իրեն յատուկ  
գործիքն ունի . բահը հնարուած է այգւոյ ,  
թիթենուոյ և ուրիշ փորելով եղած մշակութեանց  
համար , իսկ վարուցանի համար զարօրն ստեղծած  
է մարդկային հնարագիտութիւնը : Չէք տեսներ,  
Եւրոպացիք և Ամերիկացիք այնչափ յառաջ գնա-  
ցին , որ հինաւուրց արօրին տեսած գործէն ոչ  
ևս գոհ լինելով՝ մեքենայ հնարեցին երկրագոր-  
ծութեան համար , որպէս զի արտավարներու  
տեղ մղոնաւոր տեղերու վրայ վարուցան ընեն :

— Մեքենան մեզ համար չէ տակաւին , ո-  
րովհետև մեր երկրագործք առանձինն ոչ ըն-  
դարձակ հող ունին մեքենայով մշակելու չափ,  
և ոչ կարողութիւն մեքենայ գնելու . կամ  
այսպէս ըսենք , մեր մէջ մեքենայն՝ երկրագոր-  
ծական ընկերութեանց՝ որք տակաւին ծնունդ  
առած չեն , և ազարակ ունեցողներու գործը  
կրնայ լինել : Իսկ եղնամուլին (լուծք) գալով  
կը հարցնեմ թէ ինչո՞ւ համար նայնով երկրա-  
գործութեան պարագոյք գոհ վիճակ չունին  
կամ չեն կրնար շահիլ :

— Ահա եկաւ քիչ մը յառաջ խոստացած ա-  
ռաջարկութեանս տեղը : Այո՛ , եզով վարուցան  
ընողն ալ գոհ վիճակ չի կրնար ունենալ երբ այն-  
պիսի գրութեամբ կը գործէ , որ օրինակի համար,  
2000 կամ 1500 շրշ ծախք կ'ընէ և գրելթէ  
նոյնչափ արդիւնք կ'առնու . եզով վարուցանը  
արդիւնաւոր կրնայ լինել այն երկրագործին  
համար որոյ մշակութեան գործը իրեն համար  
բաւական ընդարձակ է , այսինքն մէկ լուծքով  
մինչև 25—30 արտալար տեղ կը ցանէ , և հե-  
տևապէս հարիւր յիսունէն աւելի օր կամ ամ-  
բողջ ամառը գործ ունենալուն համար անոնց  
ետեէն երթալով զէն մը չ'ընեալ Բայց այն երկ-  
րագործին համար , որ միայն իր տանն հացը



իրբեւ գիւղացի հանելու մասք՝ հազիւ 5, 10 կամ 12 արտավար տեղ կը ցանէ, և հազիւ տարւոյն մէջ 30, 40 կամ 50 օր եղան դործ ունի, փասակար է, և բահով վարուցան ընելէն աւելի ծանր կը նստի իրեն այդ տեսակ երկրագործութիւնը, որովհետեւ (ուշադրութիւն) տարւոյն միւս մնացած օրերը կամ ինքն անձամբ եզները պիտի արածէ և այսպէս բանէ գործէ լինելով իր օրական վաստակը պիտի կորսնցնէ, և կամ ծառայի մը եօթ ութ ամիս օրական տալով պիտի արածել ապա յանուն 30 կամ 40 օր դործ ունենալու, որով ըրած ծախքը առած արդիւնքին պիտի հաւասարի և փասա պիտի ընէ : Ահա այս է պատճառը որ եզով վարուցան ընող փոքր երկրագործք չեն կրնար ապրիլ : Ի՞նչ ընելու է ուրեմն այս անել ճամբայէն ելնելու և շահաւոր ճամբու մէջ մտնելու համար : Ահաւասիկ խիստ դիւրին և խիստ սակաւածախ միջոց մը :

Կ'առաջարկեմ և խորհուրդ կը տամ փոքր երկրագործաց որ արտերնին իրարու մտա եղող (հեռուն ալ ըլնին՝ հոգ չէ) 30 կամ 40 տուն միաբանելով և իւրաքանչիւրն 40 կամ 50 զրշ. միայն տալով հովիւ մը բունեն, և իրենց եզներու նախիրն (խումբ) անոր յաճնենն արածելու հա-

մար (1) : Եւ որպէս զի եզանց աղբը չկորսուի, գիշերները հասարակաց դովի (ախրու) մը մէջ պահեցնելու և ժամանակին անոնց աղբը բաժնելու է, որ շատ հարկաւոր է երկրագործին համար : Այս ընթացքին մէջ երկրագործը սա՛ դիւրութիւնը կ'ունենայ որ, երբ հերկելու կամ ցանելու և կալ ընելու ժամանակը գայ, երկրագործը կ'երթայ իր եզներն հովիւին առջիկէն կ'առնու, և 10 կամ 15 տուր մէջ իր արած հերկելէ կամ ցանելէ ետեւ կրկին հովիւին կը յանձնէ զանոնք, և ինք իր միւս գործերուն այսինքն շերամին, այդիին և այլնի կը նայի, և իրեն վաստակը կը լինի խիստ քիչ ծախքով իր տանը հացը ապահովել և միանգամայն շերամի այգիի և այլնի բերք ունենալ : Ահա այն ատեն միայն այս վերջին բերքերէն ներս մտած օսկիներն որք մինչև ցարդցորենի և ուրիշ արմտեաց

(1) Պէտք չէ ըսել թէ եզներն ո՛ր պիտի արածեն. Եւրոպիոյ մէջ միայն ամէն երկրագործ պարտի յատուկ արօտ ունենալ. Տաճկաստանի մէջ ազարակի տէր շեղող փոքր երկրագործաց եզներն, կովը ելն, հասարակաց անմշակ և անմշակելի վայրերը կ'արածեն ընդհանրապէս : Ասկէ զատ հերկ ըլլալու արտերը որք եկող տարի պիտի ցանուին, երկար ատեն իբրեւ արօտ կրնան ծառայել :



համար դուրս կ'եննէին և կ'եննեն, գիւղօրէից մէջ մնալով, երկրագործաց տղայք ալ գաւառական գիշերօդիկ դպրոցաց մէջ պէտք եղած ուսումն ու կրթութիւնը կրնան առնուլ, յորմէ այժմ բոլորովին զուրկ են :

Այս տողից վրայէն միայն կարգալով անցնելու չէ, այլ նոյնհետայն խորհելու և հաշիւ ընելու է թէ որչափ մեծ խնայութիւն մը պիտի մանէ արմտեաց արտադրութեան ծախսոց մէջ. զի այն որ, օրինակի համար, առաջ իր եղներովն հանդերձ 1500 զրշ. ծախք ընելով իր արտին վրայ, հազիւ նոյնչափ արժէք ունեցող արդիւնք կ'առնուր, այժմ մեր առաջարկած ընթացքով 40 կամ 50 զրշ. արծողչէքի ծախք միայն տալով՝ առջի արդիւնքը պիտի առնու առանց ուրիշ բերոց մշակութենէն ետ կենալու :

Մեզք, բիւր անգամ մեզք այն միլիոնաւոր գումարներուն զորս այս կողմի գիւղօրէք (1) արմտեաց համար դուրս կը տան քաղաքաց պէս, որով քաղաքակրթուելու, լրսաւորուելու և յառաջադիմելու միջոցէն զրկելով հարք,

(1) Միայն Պարտիզակ ցորենի, գարիի եւ վարսակի (եուլաֆ) համար տարին 2,000,000 էն աւելի զրշ. դուրս կը տայ :

թէ զիրենք և թէ իրենց տղաքները, պատասխանատու կը գտնուին թէ՛ երեւոյ և թէ՛ երեւոյ ուսոյ յետադիմութեանը, կամ աւելի ճիշդը խօսելով, բարոյական մեռելութեանը նիւթական թշուառութեան հետ, Աստուծոյ և մարդկութեան առջև :

Եւ որովհետեւ գիւղացւոց մէջ անզգայութիւնը աւելի տիրած լինելով՝ ամէն բարեկարգութիւն կառավարութենէն կ'ապաստուի, ակամայ կամ ստիպեալ կ'ըսենք :

Երանի թէ բարեխնամ կառավարութիւնը իբրև հայր արգահատելով գիւղացի ժողովրդոց անզգայութեանն ու խեղճութեանը վրայ, գիւղացւոց որք Տէրութեան բնակչաց ամենամեծ մասը կը կազմեն և գանձը կը լեցնեն զանազան եկամուտներով, արգահատելով կ'ըսենք անոնց անզգայութեանն ու խեղճութեանը վրայ, ուշադրութեան առնուլ բարեհաճէր վերոյգրեալ առաջարկութիւնը, և զայն իրացնելու համար իր կողմէն յատուկ պաշտօնեայները զրկելով յիւրաքանչիւր գաւառ, ամէն փոքր երկրագործաց մէջ՝ առաջարկուածին նման՝ փոքրիկ ընկերութիւններ կազմէր ամենամեծ զիրութեան մը և բաղմաշահութեան համար զորս ի վերոյ ցցուցինք, տարածելով նոյնհետայն



գիւղացւոց մէջ երկրագործական հիմնական տեղեկութիւններ : Այս ձեռնարկէն որչափ ժողովուրդը նոյնչափ ալ հառաւիարութիւնը պիտի չահի , քանզի :

Ա. Բարեկեցիկ ժողովուրդներ պիտի ունենայ .  
Բ. Տէրութեան տուրքը որ այժմ շատ դժուարաւ կը հաւաքուի ընդհանուր գիւղական աղքատութեան երեսէն , այն ատեն շատ դիւրաւ պիտի հաւաքուի .

Գ. Երկրագործութիւնը ծաղկելով տասանորդական տուրքը պիտի կրկնապատկի , և այս ամենով արքունի գանձուն վիճակը պիտի բարւոյնի , և գործողութիւններն հսկայութիւն առնեն , Պէտք չէ երբէք մտնանք թէ երկրագործութիւնը ամէն յառաջադիմութեանց խորիմն է :

Իսկ ժողովուրդոց շահուն գալով՝ այն յայտնի է , այսինքն ինչպէս վերն ըսինք , իր թափած միլիոնները իր լուսաւորութեանն և յառաջադիմութեանը պիտի գործածէ , վայելելով ամէն ինչ որ ճիշտ քաղաքացին կը վայելէ :

Երկրագործութեան բնական , ( և ուստի առաջին և արտուաւոր արհեստ մը , ու գիւղացւոյն բնական դառնմունքը լինելը , անոր շահուն ( և թէ պայմանները պիտոցուի ) մեծ և

ամէնէն արդար լինելը ապացուցանելէ , նաև փոքր երկրագործաց համար գիւրին և խիստ սակաւածախ միջոցը առաջարկելէ յետոյ , կը մնայ մեզ յաւելուլ թէ , երկրագործութիւնը գիւղացւոյն բնական դբադմունքն է ըսելով՝ ըսել չեմք ուզեր թէ գիւղացին բնաւ վաճառականութեան և ուրիշ արհեստի պարապելու չէ , զի գիւղացիք ալ իրենց մէջ և այլոց հետ առեւտուրի պէտք ունին , ինչպէս նաև քանի մ'արհեստից՝ զորս անհրաժեշտ հարկ է գիտնալ իրենց : Նոյնպէս ըսել չենք ուզեր թէ քաղաքացին երկրագործութեան պարապելու չէ : Այդպիսի պահանջմունք նոյն փակ բնութեան , ընկերականութեան և յառաջադիմութեան օրինաց հակառակ են : Այլ ըսել ուզեցինք և ըսել կուզենք թէ՛ գիւղացի կամ քաղաքացի , անոնք որ մշակելի հող ունին , աւելի երկրագործութեան պարապելու են , ( միշտ քանի մը ճիւղն ի միպին ) , համոզուած լինելով որ՝ ապահով , առատ , խիստ քաղցր և խիստ պարկեշտ է երկրագործութեան շահը քան ուրիշ արհեստիցը : Ո՛վ կրնայ ժխտել թէ խաբէութիւնը , նենգութիւնը , զեղխութիւնն և բարուց ապականութիւնը բաղմամբօս և գործը քիչ քաղաքաց մէջ ծնունդ չառին աւելի իսկ



եթէ այսօր գիւղից մէջ այլ կը տեսնուին այդ մտքի թիւերը, պատճառը ծնունդի թիւնն է: Մրտցուր երկրագործութիւնը գիւղորէից մէջ կատարելագոյնն է, պարզասիրութիւնը, անկեղծութիւնը և բարուց մաքրութիւնը ինքնին կը վերադառնան գիւղից մէջ բերոց առատութեան և բարեկեցութեան հետ: Առատութիւնը մըշակութեան ետեհն պիտի գայ, և կը թուութիւնը բարեկեցութեանն պիտի ծնանի, արաւ երևելի Հեղինակ մը: Երբ մտքը յաւերցնել նաև ոչ միայն հող ունեցողները կը յորդորենք որ իրենց գիւղակեցութիւնը հողին մշակութեանը մէջ բընտրուեն, այլ և կը հրաւիրենք և Պօլսոյ այն երիտասարդները որք «Ե՛կէ՛ կամ Պօլսոյի խաղերուն մէջ կ'ոչնչացնեն իրենց ասիրտ ստի յոյսը՝ քանի մը հարիւր լիրայի դրամագլուխնին» և յուսահատութեան մէջ կ'իյնան. նոյնպէս կը հրաւիրենք ուրիշ քաղաքացի մէջէն այն երիտասարդները որոց դրամագլուխը խիստ փոքր լինելով չեն կարող մեծ գործ մը բռնելու և ապրելու, կը հրաւիրենք զայն ամէնքը կազմել ընկերութիւններ և երկրագործութիւնը ծաղկեցնել, բնական բարիքները առատօրէն վայելել և հարստանալ: Մեր մէջ է որ երկրա-

գործութիւնը անպատիւ սեպուած է. զնա՛ հարաւային Ռուսաստան, զնա՛ ամբողջ Գերմանիա, զնա՛ մասնաւորապէս Մաճառաստան, զնա՛ այսօրուան ամբողջ Գաղղիա, Զուիցեր, և այլ ծաղկեալ երկիրներ, պիտի տեսնեա՞ որ երկրագործութիւնը մեծ կալուածատեարց կամ ընկերութեանց ձեռքն է և ասոնք են որ քաղաքները կը կշտացնեն, և ոչ թէ մերինին պէս անլոյս գեղացւոց խեղճ երկրագործութիւնը պիտի տեսնես հոն:

Այլ մեք, որպէս զի մեր երկրագործք կարենան իրենց աշխատութիւնը արդիւնաւոր ընել, բաւական համարելով այսչափ վարդապետութիւն՝ ձեռք զարնենք այժմ տալ իրենց այն հիմնական տեղեկութիւնները զորս գիտնալ անհրաժեշտ է երկրագործաց:

9.

(Շարունակութիւն Նախընթաց Նխորդ)

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՆԵՐ, յայտնի է թէ, շատ ճիւղերու կը բաժնուի, որոց զլիաւորք են Արմբո-



եաց մշակութիւն, Բամպակի մշակութիւն, Շե-  
րամասածութիւն, Սնասնաբուծութիւն, Այ-  
գեգործութիւն, Ծխախոտի մշակութիւն եւ այլն:

Մեր երկրագործութեան ողջ բոլոր ճիւղից  
վրայ չենք կրնար խօսիլ, քանզի, ինչպէս գոր-  
ծոյս սկիզբն ըսուած է, մեր նպատակը անձուկ  
է, երկրագործութիւն գրել չէ ըստ ամենայն  
մասանց՝ որ հատորներու կարծու է, այլ միայն  
նշանակել թէ Գաւառիս աղքատութիւնը երկ-  
րագործութեան որ ճիւղին կամ ճիւղից զան-  
ցառութենէն յառաջ եկած է, և գլխաւորա-  
պէս զՊիւղանցիս՝ իբրև ի դարման աղքատու-  
թեան՝ ի նոյնս յորդորելով, անոնց վրայ քանի  
մը հիմնական տեղեկութիւններ տալ, առանց  
խօսելու այն սովորական կերպերուն վրայ զորս  
ամենէն տղէտ երկրագործն անգամ գիտէ:

Գաւառիս մէջ յաջող կամ նպատատւոր կլի-  
մայից տակ, այսինքն արևելեան (Կէյվէի) կող-  
մերը բամպակի մշակութիւնը, հարաւային (Իզ-  
նիկի) կողմերը ձիթենեոյ մշակութիւնը, և ա-  
մէն ուրեք չերամատածութիւնը բաւական յա-  
ռաջ գնացած են, բայց արմտեաց կամ ցորենե-  
ղէններու մշակութիւնն շատ տեղեր բարձիթո-  
ղի եղած է, իսկ եղած տեղերն ալ նուազեալ  
վիճակի մէջ է, յերեսաց տգիտութեան մշակողաց:

Եւ որովհետև ի չղոյէ արմտեաց մշակու-  
թեան, միւս բերքերը յաջողած տարին ընակիչք  
աղէկ կամ դեշ ապրուստ մը կուեննան, բայց  
չյաջողած տարին հաց չունենալու վտանգի մէջ  
կլինան, մեք ալ զանց ընելով մշակեալ ճիւղերն  
ու ընդհղէնները՝ որոյ ամենուն վրայ խօսելու  
գրեթէ հարկ չկայ, կը խօսինք միայն արմտեաց,  
խաղողի, և ձխախոտի մշակութեանց վրայ, որք  
չկայի պէս են, որք խիստ կարեւոր են ու տես-  
ալի, հայի, առաջին պէտքի և վաճառակա-  
նութեան վերաբերութեամբ, և որք եթէ բա-  
ւականապէս մշակու ելով միւս մշակեալ բերոց  
վրայ յաւելնան, անսարակոյս բարեկեցութիւն  
կրնան բերել գիւղացի ժողովրդոց:

Սրդէն այլուք, անկամիղիոյ գաւառը հիւ-  
սիւսային բարեխառն գօտիին ներքեւ կը գրա-  
նուի՝ ըսած լինելով՝ ըսած կը լինինք միանգա-  
մայն թէ սոյն գաւառը օդի, արեւու ջերմու-  
թեան և անձրեւի չափաւորութեան նպաստա-  
ւոր հանգամանքներն ունի, հանգամանքներ  
որք ամենամեծ աղղեցութիւն ունին՝ ինչպէս  
կենդանեաց՝ նոյնպէս բուսոց և անկոց անաս-  
նրն ու անողջութեանը վրայ: Աստի իբրև  
նախագլխակիք կը մնայ մեզ նշանակել թէ մէկ  
տեղւոյն կլիմայն միւս տեղւոյն կլիմայէն կը



տարբերի նոյն տեղեաց դրից համեմատ : Երկիր մը որչափ ծովուն հաւասարութենէն բարձր լինի, նոյնչափ աւելի զով կամ ցուրտ կը լինի կլիմայն, այսինքն տեղւոյն օդը, եւ որչափ ծովուն հաւասարութեանը մօտենայ, նոյնչափ աւելի տաք կը լինի աստիճանաբար : Նոյնպէս երկիր մը Հասարակածէն, կամ այսպէս ըսենք սոյն երկրի համար որ ամենէն հասկցուի, Հարաւի կողմէն որչափ հեռի լինի, նոյնչափ օդը ցուրտ կը լինի, ընդհակառակն որչափ Հասարակածին կողմն իյնայ, այնչափ աւելի տաք կը լինի : Նաեւ մի եւ նոյն երկրի մէջ դէպ 'ի Հիւսիս նայող դրից օդը պաղ կը լինի, վասն զի մէկ կողմէն Հիւսիսային հով կառնէ, եւ միւս կողմէն նոյն դիրքին ետեւն եզող լեռաները արեւուն ճառագայթները կարգելուն, իսկ դէպ 'ի Հարաւ նայող դրից օդը տաք կը լինի, վասն զի մէկ կողմէն իր ետեւն եզող լեռաները Հիւսիսային ցուրտ հովը կարգելուն, եւ միւս կողմէն արեւուն ճառագայթները շեշտակի վրան կը զարնեն : Բայց աւելի տաք երկիրներու մէջ Հիւսիսային դիրք սենցող տեղերը Հարաւային դիրքերէն աւելի բարեբեր կը լինին, վասն զի տաք երկրի մէջ Հիւսիսային դիրքը մեղմութիւն և չափաւորութիւն կը տայ օդին :

որով բոյսերը սաստիկ ջերմութենէ չեն նեղւիր, մինչդեռ ցուրտ երկրի մէջ ասոր հակառակըն է, այսինքն Հարաւային դիրքն աւելի բարեբեր կը լինի :

Այս ծանօթութիւններէն վերջը երկրագործին ամենէն յառաջ գիտնալու բանն է հողին տեսակները ճանչել, զանոնք պարարտացնելու կամ պտղաբեր ընելու կերպերը ուսանիլ. ուստի մեք ալ կ'սկսինք ասոնց վրայ խօսիլ առանձին հատուածովք, նշանակելով հանդերձ թէ արմտին, խաղողը և ծխախոտը որ տեսակ հողերը կը սիրեն, եւ թէ ինչ դիւրութիւնք կրնան ընծայել երկրագործաց :

### Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա .

#### ՀՈՂԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Երկրագործն իր մշակելի գետնին կամ արտին վրայ երկու տեսակ զննութիւն ընել կը պարտի, գիտնալու համար նախ թէ իր արտին հողը ինչ տեսակ է, և ինչ բան ցանելով կամ տնկելով յաջող բերք կրնայ առնուիլ. և երկրորդ թէ



հողը որոյ մէջ տուններն ու բոյսերը պիտի աճին, բաւական խորութիւն ունի, զի որչափ խորին ըլլայ հողը, այնչափ աւելի աղէկ է մանաւանդ ցորենեղինաց համար: Հողի մը մէջ բոյսերն յաջողելու համար գոնէ մէկ մեթրի չափ խորութիւն ունենալու է հողը. միայն այգիի, մեկտնի (խաշխաշ) եւ ասոնց նման թեթեւ հող սիրողներու համար է որ այնչափ հողի խորութիւն չի պահանջուիր: Բայց ինչ է հողը:

Հողը անձրեւէն, տաքէն եւ ցուրտէն ըստ ծուած տեսակ տեսակ հանքերու, եւ մանրրոցած կամ փոշիացած քարերու բաղադրութիւն մ'է, որ երկրին երեսը կը գտնուի, եւ եթէ բոյսեր ու տունկեր աճեցնելու յարմար է, քուսակն կըսուի երկրաբանական լեզուաւ:

Երկիր կայ որ մէկ տեսակ հանքէն կամ քարէն շատ ունի, երկիր ալ կայ որ ուրիշ տեսակ հանքէն կամ քարէն շատ ունի, կամ մէկ հողին մասունքները խոշոր են եւ միւսինը՝ մանր: Ահա այս տարբերութիւններէն է որ այս ինչ հողը բարեբեր կը լինի և այն ինչը՝ անբեր: Հողերուն այս զանազան յատկութեանցը նայելով, ըստ Շլիփ Գերմանացւոյ, անոնք գլխաւորաբար երեք տեսակի կը բաժնուին որք են աւազուտ, կրոտ եւ կաւոտ:

Ա. Աւազուտ երկրին մասունքները եթէ խոշոր են, իրարու չեն միանար, եւ որչափ աւազը շատ ըլլայ, այնչափ աւելի հողը անշահ կըլլայ, զի մասունքները չմիանալուն թացութիւնը ընդ երկար չի կրնար պահել, շուտով կը չորնայ, եւ բոյսերն ու տունկերը կը նեղուին կամ կը չորնան, իսկ եթէ մասունքները մանր են, չափով մը միութիւն կրնան ունենալ, թացութիւնը կը բնական պահել բաւական ժամանակ. և եթէ խոնաւ կլիմայի տակ ալ ըլլայ, յայնժամ մէկ երկու տեսակ բանի մշակութեան յարմար կը գայ ինչպէս են եգիպտացորենը, գեանախնձորը մեկտնը ևն: Աւազուտը խոնաւ եղանակի մէջ հերկելու է:

Բ. Ինչպէն ուրիշ հողեր աւանձին, նոյնպէս կըստ հողը ինքնին յարմար չէ որ և է բանի մշակութեան, զի շուտով տաքնալով, և տաքութիւնն ընդերկար պահելով, ըստ որո՞ւ մ'այրող բնութիւն ալ ունի, վրայի բոյսերն ու տունկերը կը չորնան, թէև աւազուտէն աւելի միութիւն ունի, և անոր պէս գիւրին կը հերկուի: Իսկ եթէ այս տեսակ հողին կիրը չափաւոր է, և մէջը ուրիշ տեսակ հողի բաղադրութիւն ունի, յայնժամ ցորենի, գարիի, վարսակի ևն յարմար կը գայ և կրոտ հողը այն ա-



տեն հերկելու է, երբ քիչ մը արտին թացութիւնն ելած է :

Գ. կաւոտ հողը երկու տեսակի կը բաժնուի. կապոյտ կաւոտ և գեղին կաւոտ :

1. կապոյտ կաւոտ հողը մեծ միութիւն ունի, շատ պինդ ու կպչուն է, ուստի թէ թաց և թէ չորցած ատեն չի կրնար հերկուիլ, երկուքին մէջ տեղն ընարելու է : Այս հողը շատ ջուր կը ծծէ, տաքութիւնը շուտով կը կորսնցնէ, և թացութիւնը ընդերկար կը պահէ. երաշտութեան ժամանակ ալ վրայի տունկերը շատ նեղութիւն չեն կրեր : Բայց այս հողին վրայ պրտուղները ուշ կը հասնին : Այս հողը բամպակի և խաղողի մշակութեան չի գար, ամէնէն աւելի ցորենի յարմար է : Որչափ որ ամենէն ուժով է կապոյտ կաւը երբ մէջը շատկէկ խոշոր աւաղ գտնուի, անպիտան է և ոչ մէկ բանի յարմար :

2. Գեղին կաւոտ հողն որ ոչ կապոյտ կաւոտին պէս չափազանց ծանր և ոչ աւաղուտին կամ կրոտին պէս թեթեւ է, խոնաւութիւնն ընդերկար չպահող է. այլ ամէն կողմանէ միջակ լինելով ամենէն լաւ երկիրն է, ըստ որում հերկելը դիւրին է, և ամէն տեսակ հունտերու աճում կը տայ, և եղանակի խստութիւններէն

չեն վնասուիր վրայի բոյսերն : Բայց ամենէն աւելի գարիի յարմար լինելով գարիի արտ կ'ըսուին այս տեսակ հողերը :

Այս երեք գլխաւոր տեսակ հողերէն դուրս է կրի հետ շատ կաւ ու բարակ աւաղ խոնուած հողը որ բաղադրեալ հող կ'ըսուի, որմէ հերկուած ատեն տախտակի պէս բարակ ու տափակ կտորներ կ'ելնեն, որոյ գոյնը ընդհանրապէս ճերմակ կամ մոխրագոյն է և ամենէն աւելի այգիի յարմար, նոյնպէս փոսած ծառերու և տերևներու մասունքներէ խառն հողը, որ ծակոտկէն է սպունդի պէս և թեթեւ, և կամ մութ գունով փոշի մ'է, և փոսած հող կ'ըսուի : Այս տեսակ հողը շատ ջուր կը ծծէ, խոնաւութիւնն երկար կը պահէ, բայց ծանր կաւոտէն աւելի շուտ տաքութիւն առնելով տնկոց անելու զօրութիւն կը տայ : Բայց երկիր մը այս հողը չտփազանց շատ ունենալով, թէպէտ հարուստ ու զօրաւ որ երկիր կ'ըսուի, բայց վրան ցանուած բոյսերը պառկելով կը վնասուին, անոնց յարգերը շատ և պտուղները սակաւ կը լինին : Դարձեալ վերոգրեալ երեք տեսակ գլխաւոր հողերէն դուրս են քարուտ և ջրուտ երկիրները, որք իրենց նախնական վիճակին մէջ գրեթէ միշտ անպիտան են :



Արդ տեսանք որ ոչ աւագուտը , ոչ վրոնը , ոչ կապոյտ կաւոտը , և ոչ այս վերջինները առանձին լաւագոյն են և բարեբեր . ո՞րն է ուրեմն պատուական հողը : Ամենէն պատուականը այն երկիրն է որոյ երեսի հողը դեղին կաւ է , իսկ ներքեինը աւագուտ կամ կապոյտ կաւոտ : Այս հողն հերկերը գլուխն է , և ամէն տեսակ բերք խիստ լաւ կը յաջողին անոր մէջ բացի աւագուտ փրոյներէն : Նոյնպէս պատուական է աւագով կամ մանաւանդ կապոյտ կաւով խառն կրոտ հողը , որոյ վրայ ամէն տեսակ բերք խիստ լաւ կը յաջողին : Ուստի ամէն երկրագործ այս երկու տեսակ ընտիր հողերը միտքը պահելով իր արտը նոյն տեսակին վերածելուն հնարը նայելու է , եթէ հնար կայ :

## Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Բ .

### ՀՈՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՃԱՆՁԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Երկրագործն իր արտին հողը նշաններէն ճանչելու է , ոչ միայն լաւ հող ունենալը գիտնալու համար , այլ որպէս գիտնոր հերկելու յար-

մար ժամանակը , ինչ բան և որ ատեն ցանելու է դիտնայ : Որովհետև , օրինակի համար , եթէ մէկը իր կապոյտ կաւով արտը ամառուան տաք ու չոր ատեն հերկէ , խոշոր հատորներ (կտորներ) կ'եննեն , ունեցած խոնաւութիւննին կը վորսնցնեն , կը կարծրանան և մանրոյնելը դժուարին կը լինի : Այսչափ չէ միայն յառաջ եկած գեշութիւնը . եթէ չոր ատեն հերկելը քանի մը տարի շարունակուի , երկիրը կ'ապականի և անպատու կը լինի :

Հողերուն տեսախները կը ճանչուին , տեսնելով , շոշափելով , փորձերով , և անոնց վրան բուսած վայրի ծառերէն , թուփերէն և խոտերէն :

Եթէ հերկուած ատեն արօրին վարած տեղերը կը փայլին , ու կոշտ հողերը ետքը չեն ցրուիր , նշան է թէ կաւոտ ծանր երկիր է . իսկ թէ որ կոշտերը ետքը ինքնին կամ ոտքով կամաց մը զարնելով կը փշուրին , նշան է թէ կրոտ կամ բաղադրեալ հող է :

Եթէ խոնաւ ժամանակ արօրը մանր և կլորած տեղը փայլուն կտորներ կը հանէ , նշան է թէ կաւով աւագուտ հող է . իսկ թէոր խոշոր կտորներ կ'եննեն , և չոր ատեն երկիրը կը ճեղքուի խոշոր պատառուածքով , նշան է թէ բո-



լրրոյին կաւ է : Ընդհակառակն երբ մանր կոշտեր կ'եննեն հերկուած ատեն , և չորու- թեան ժամանակ երկիրը չի ճեղքուիր , նշան է թէ շատ աւազ ունի (\*) :

Եթէ խոնաւ ատեն հերկած ժամանակ հողը գործիքներուն շատ կը փակչի , նշան է թէ մէջը շատ կաւ կայ , և որչափ քիչ փակչի , այն չափ աւելի աւազ , կիր և փտած հող կայ մէջը :

Եթէ հողին գոյնը ճերմակ է , կիր կամ գած (այլը) ունի , եթէ գոյնը մութ է կամ սև , մէջը փտած հող կայ , իսկ եթէ գոյնը դեղին է , դեղին կաւով խառն է հողը , եթէ կարմրահար՝ երկաթի կամ պղնձի մասեր ունի մէջը :

Եթէ անձրևի ջուրերէն փորուած փոսերուն գոյնը թուխ (էսմէր) է , ածուխի հողով խառն է : Եթէ քիչ մը հող ջուրի մէջ եփելով՝ ջուրը մութ դեղին կը ներկէ , մէջը փտած հող կայ . եթէ ոչ՝ փտած հող չկայ կամ քիչ ունի , կտոր մը հող կրակին մէջ այրելէն ետև կտորելու է . եթէ մէջի գոյնը սևիկը զարնէ նշան է որ մէջը փտած հող կայ , եթէ ոչ՝ չունի : Հողի կտորի

(\*) Չենք ուրանար որ հողի տեսակներուն եւ նրբ շաններուն վրայ խոսած ատեն մեծաւ մասամբ պառակտորդ ունիմ քեմզ Շլիփ Գերմանացին :

մըլրայ բարկ քացախ թափելով՝ եթէ հողը եփելով ուռի , նշան է թէ մէջը կիր կամ բաղադրեալ հող կայ , եթէ ոչ՝ այնպիսի խառնուրդ չունի :

Երկիր մ'անձրևի թացութիւնը որչափ երկար պահէ , այնչափ շատ կաւ ունի , և որչափ շուտ չորնայ , այնչափ շատ աւազ ունի : Սատիկ անձրևէ վերջը եթէ ջուրը արտին երեսը ժողուած մնայ , նշան է թէ արտը շատ կաւ ունի . իսկ եթէ ջուրը շուտով քաշուի , կաւը քիչ , շատ կիր և աւազ ունի :

Գարձեայ շոշափելով ալ կը ճանչուին հողերը : Եթէ ձեւքով զննած ատեն հողը պարարտ ու իբր թէ իւղոտ է , նշան է թէ շատ կաւ ունի . իսկ եթէ ողորկ ու աճառի (սապօնի) պէս լարձուն է , կրով և աւազով խառն հող ունի :

Փորձով դիտած եմք (') որ ինչ ինչ խտեք

(') Արժ . Պողոս վարդապետ Նաթանեան Նիկոմիդիոյ վիճակին վրայ հրատարակած իր տեղեկագրոյն Պարտիզակի մասին մէջ մեզ համար ըսած էր թէ « Յարգը շքիտցուելուն համար երկրագործութիւն ալ կ'ընէ » : Այլ որպէս զի նոյն տողն ընթերցողը չը հասկնայ թէ մենք վարժապետութեան պաշտօնին հետ երկրագործութիւն ալ կ'ընենք , որ անհնարին է , այս ատիկ կուղղենք յոյն սխալը յայտնելով թէ մեր մեծ եղբայրն է երկրագործութիւն ընողը , նոր սկսած , եւ մեք միայն ուղղութիւն տրուող եմք :



և ծառեր տեսակ տեսակ հողերու վրայ կը բուսնին:

Մայրախոտը (չամխոտ) որ մինչև մէկ կանգ ունէն աւելի կրնայ բարձրանալ և ցողունը եղէղի պէս կապերու բաժնուած է, և այն կապերուն վրայ մայր (չամ) ծառի կապոյտ դալար փոքրերուն նման քիտտեր ունի, լեռնային, գոգաւոր, ջրուտ բայց աւազախառն կաւոտ հողի վրայ կը բուսնի: Այս խոտին բուսած տեղը, եթէ խրամ բացուելով ջուրերն առնուին, ցորենի և ծխախոտի խիստ յարմար է:

Սղուաղ ըսուած խոտը, որ փոքր ու թարմ եղած ատենը գիւղացւոց աղցաններուն տեսակէն է, և աճելով կանգուն ու կէսէն աւելի կրնայ բարձրանալ ճկոյթ մատի չափ հաստ ցողունով, քիչ աւազով և քիչ կրով խառն կաւոտ հողի վրայ կը բուսնի: Շատ դիւրին է զայն ճանչել, վասն զի աւերակաց և գիւղերու ստորոտն եղող պարսիզաց մէջ յաճախ կը բուսնի: Այս խոտին բուսած տեղն ալ խիստ պտղաբեր է մանաւանդ ցորենեղինաց նկատմամբ:

Շանխաղող կամ ըստ նախնեաց խաղողիկ ըսուած խոտը, որոյ ցողունն ու տերեւները մութ գոյն մ'ունին, և գլխոյն վրայի հունտերը մանանեխի հատի պէս մանր ու կլոր են, և հա-

սունցած ատեն սաստիկ սև գոյն մը կ'առնուն, աւազը քիչ կապոյտ կաւոտ հողի վրայ կը բուսնի, և այն տեղի հողը վերինին պէս պտղաբեր է:

Բաղեղուկը՝ որ գիւղացւոց աղցաններուն տեսակէն է, և իր բարակ ու տերեւալից ճիւղերովը բաղեղի կամ սեխի թուփի նման գետնի վրայ պառկած ասդին անդին կը տարածուի, աւազն ու կերը քիչ կապոյտ կաւոտ հողի վրայ կը բուսնի:

Վայրի չամխոտը որ պտղատու ծառի պէս ճիւղեր կ'արձակէ, և ճիւղերուն արմատին ներքեւ փոքր տերեւներ ունի ազատքեղի (մաղտանոսի) տերեւոց նման, աւազախառն կրոտ հողի վրայ կը բուսնի, բայց եթէ բարձրութիւնը երկու կանգունի չափ կայ, անշուշտ կրախառն կաւոտ հողի վրայ լինելու է, որ շատ բարեբեր է: Այս խոտը հասած ատեն ճերմակ ծաղիկով լեցուն գլուխ մը կ'ունենայ տափակ սունկի ձևով, որ հասունցածին պէս կ'սկսի տէրվիչի գլխանոցի (գալուգ) ձևն առնուլ:

Իսկ ծառերուն գալով՝ երբ տեղը լեռնային է, ու կաղնի, թմբի (օխլամուր) և շագանակենի (քէստանէ) բուսած են խիտառ խիտ, անշուշտ լաւ տեսակ հող ունի այն տեղը, կան այսպիսի ուրիշ շատ նշաններ, որոնք երկար լինելուն



համար զանց կ'ընենք հոս յիշել զանոնք. մանա-  
ւանդ որ արդէն գրուածները բաւական են  
հողին տեսակները ճանչցնելու, հետաքրքիր  
ընթերցողաց համար :

### Հ Ա Տ Ո Ւ Ա Օ Գ .

#### ՀՈՂԵՐԸ ՊԱՐԱՐԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԵՐԸ

Երկրագործը շատ արդիւնք առնելու հա-  
մար պարտաւոր է իր հողերը պարարտացնելու  
գործողութեանը ձեռք զարնել որ հողերը ճան-  
չելէն վերջը կը գայ : Պարարտութեան սովո-  
րական կամ ծանօթ միջոցը աղբն է, որ շատ  
տեսակներ ունի, և ասոնց մէջ ամենէն զորա-  
ւորը մարդոց կարիքն ու հաւեղինաց աղբն է,  
և ասոնց ետեւէն ոչխարի և այծի աղբը զորա-  
ւոր է. բայց ամէն երկրագործ այդ տեսակ  
աղբերուն մէկէն շատ քիչ և միւսէն բնաւ չու-  
նենալով, — քանզի ամէն երկրագործ այժ և ոչ-  
խար չունի կամ կենդանաբոյժ չէ, — պէտք է որ  
իր եզներուն աղբը շատցնելուն հնարը նայի

գիտնալով որ ոչխարի աղբէն վերջը եղանց  
աղբն է զորաւորը :

Եղանց և գոմէշներու աղբը շատցնելու հա-  
մար երկրագործը պարտաւոր է անոնց պէտք  
եղածէն աւելի յարդ ամբարել իր յարդանոցին  
մէջ, որ գոմին կից պէտք է շինուած լինի,  
որպէս զի յարդին մէկ մասը անասնոց ներքև  
տարածէ՝ անոնց շատութեանը կամ սակաւու-  
թեանը նայելով երկու երեք օրը միանգամ :  
Անասնոց ներքև տարածուած յարդը անոնց աղ-  
բէն և միզէն թրջելով հետոյհետէ աղբի կը փոխ-  
ուի. բայց որպէս զի այս յարդախառն աղբը չը  
մզլտաի և իր զօրութիւնը չկորսնցնէ, ա-  
մառուընէ պէտք եղածին չափ չոր հող դիպե-  
լու է գոմին մէկ անկիւնը կամ վրան ծածուկ  
տեղ մը, և երբ անասնոց ներքև նորէն յարդ-  
տարածել հարկ լինի, նախ թրջած յարդին  
վրայ քիչ մը հող ցանելու և ապա անոր վրայ  
կրկին տարածելու է յարդը, շարունակելով միշտ  
այսպէս, որով երկրագործը անշուշտ ասանա-  
պատիկ աղբ պիտի կարենայ առնուլ, որ իրեն  
համար մեծ հարստութիւն է :

Աղբն այսպէս գոյացնելէ վերջը, երկրա-  
գործը զայն սպառելու կերպն ալ դիտնալու է.  
այսինքն եթէ աղբել ուղած արար աւազուած է,



քիչ քիչ բայց շատ անդամ դնելու է աղբը , վասն զի աւաղուտ երկիրը շուտով կը կորսնցնէ աղբին ոյժը կամ պարարտութիւնը : Գրեթէ նոյնպէս ընելու է նաև կրոտ հողէ համար : Իսկ եթէ արտը կապոյտ կամ դեղին կաւոտ է , երեք չորս ասրին միանգամ դնելու է աղբ , վասն զի այս տեսակ հողերը մեծ միութիւն ունենալով ընդերկար կը պահեն աղբին պարարտութիւնը :

Աղբը , եթէ կարելի է , շուտով արտերուն վրայ փոխադրելու դիւրութեան համար , աւելի աղէկ է որ եզանց դոմը դաշտերուն մէջ արտերուն մօտը գտնուի : Եւ ինչ արգելք կայ , քանի որ , ինչպէս ասկէ յառաջ ըսինք , արտերն իրարու մօտ եղող մէկ քանի երկրագործաց եզները հասարակաց հողի մը պիտի արածէ և միշտ անոնց քով պառկի 'ի պահպանութիւն , ամառն արածելով և ձմեռը կերակրելով , եզներու տերանց հսկողութեան ներքև :

Արտերը պարարտացնելու երկրորդ կերպն է անոնց վրայ ուրիշ հող լեցնել : Այս կերպին մէջ սա աղէկութիւնը կայ որ՝ արմտիք , այսինքն ցորենը գարին և այլն չպառկելով չեն վրնասուիր , մինչդեռ աղբային պարարտութիւնը շատ եղած ատեն , ցորենը , գարին և այլն կը

պառկին , ուստի շատ յարգ բայց քիչ պտուղ կը տան : Բաղադրեալ հողերը միշտ մէկ տեսակ հողէն աւելի աղէկ են : Ուստի երբ մէկն իր աւաղուտ արտը ուրիշ հողով բարեխառնել ու բարեբեր ընել կ'ուզէ , պէտք է որ անոր վրայ դեղին կամ կապոյտ կաւ լեցնէ , եթէ մօտերը այն հողերէն կը գտնուի : Աւաղուտ տեղ մը աւելի այս կերպով պարարտացնելու է քան թէ աղբով , զի աղբը աւաղին մէջ քիչ կը դիմանայ , բայց այն հողը եթէ բաւական քանակութեամբ դրուած է , աղբուածէն աւելի պաղաբեր կը լինի և հատնելիք չունի , մանաւանդ որ հողերուն մէջ ամենէն պատուականը ներքին աւաղ և վրան կաւոտ հողն է , իսկ եթէ արտը կապոյտ կաւ է բոլորովին , որոյ մշակութիւնը ամենէն դժուարն է քանզի շատ ծանր է , պէտք է աւաղ կամ կրոտ հող լեցնել , մանաւանդ մանր աւաղ որ շատ կը գտնուի ամէն ուրեք , որով մշակութիւնն ալ կը դիւրանայ և միանգամայն պաղաբեր կը լինի : Բայց կրոտ արտի վրայ եթէ կապոյտ կաւն ու աւաղը չափաւոր կերպով լեցուին , շատ մեծ բարեբերութիւն կատանայ արտը :

Արտերը պարարտացնելու երրորդ կերպ մ'ալ կայ որ շատ դիւրին է և շատ սակաւածախ , և



որ միանգամայն շատ բարեբեր կ'ընէ հողը, այն է հեղեղներու ողողել տալ արտը: Պարարտութեան այս կերպը 'ի վաղուց հետէ մեր հայրենեաց (') մէջ 'ի գործ դրուելով 'ի մանկութեան տեսած եմ, և տակաւին կը յիշեմ անոր լաւագոյն արդիւնքը: Ուստի այն արտը՝ որ հարթ լինելով հանդերձ՝ գետի մը, ձորի մը կամ առուակի մը բաւական մտ կը գտնուի, ամառը քաղուելէն յետոյ, արտին մեծութեանը համեմատ, վարի ծայրէն սկսեալ մինչև վերի ծայրը մէկ մէկէ քսան կամ տասն և հինգ քայլ հեռի քանի մը խրամներ բանալու է մէջի հողը միշտ միայն մէկ կողմը և վերի կողմը տալով, այնպէս զի խրամէն ելած հողերը պատնէջի (մէթէրիս) մը ձևն առնուն: Խրամները թաց տեսն բանալու է, որպէս զի դուրս արուած հողերը աղէկ մը նստին, Նաև արտին գլխէն մինչև գետը կամ ձորը, ուրկէ հեղեղը պիտի առնուի, լայնկէկ խրամ մը բանալու է մէջի հողը երկու կողման վրայ դուրս տալով: Յայտնի է թէ ասի հեղեղին արտը գալուն ճամբան է: Երբ ամբան չորութիւններէն (երաշտութիւն) ետև սաստիկ անձրև մը գալ սկսի, հեղեղներ չե-

(<sup>1</sup>) Ծառային-Գարահիսար, Ալխար-օվայի վերէն Աւրտէր ըսուած գիւղը:

լած՝ արտին տէրը թիաձև բահ 'ի ձեռին իր արտին գլուխը վաղելու է, որպէս զի հեղեղին մէկ մասը՝ մանաւանդ առաջին ընթացքը որ պարարտ ախլմ մ'է բոլորովին՝ յիշեալ ճամբայով իր արտին վրայ դարձունէ: Չմոռնանք սեղութեան թէ այս հեղեղը արտին մէջ շինուած պատնէջներուն երկու ծայրէն դուրս չվաղելու համար, արդէն արտին շուրջը խրամ քաշուած ըլլալու է, մէջի հողը ներս՝ արտին կողմը տրուելով: Երբ արտին վերի ծայրի առաջին խրամապատը հեղեղով լեցուելու մօտենայ, մէկ կողմէն ներքևի խրամապատին մէջ վազցնելու ճամբայ մը բանալու է հեղեղին, որով առաջին խրամապատը չվոցնելէ զատ՝ միւս բոլոր խրամապատերն ալ այսպէս հետոցհետէ կը լեցուին, միշտ լեցուածին մէկ կողմէն 'ի միւսը ճամբայ մը բանալով: Կամ աւելի լաւ է որ իւրաքանչիւր խրամապատի մէջ զատ զատ առնուի հեղեղը, այսինքն մէկը լեցուելէն յետոյ միւսին մէջ վազցնելով: Այս հեղեղը երբեմն կէս կանգուն և երբեմն մէկ կանգուն խորութեամբ պարարտութիւն կը ձգէ արտին վրայ: Բայց զգուշանալու է որ հեղեղին բերած քարերը մէկ տեղ արտին մէջ չերթան: Ատոր նախահոգ միջոցն է արտին վրայ բերուած հեղեղին ճամբան



հարթ (տիւղ) ձգել: Երբ բոլոր խրամապատերը լիճերու պէս լեցուին, հեղեղը արտին վրայէն կտրելով երկու երեք օր սպասելու է մինչև որ պարարտութիւնը նստի, և ջուրը միայն երեսը մնայ, զոր խրամապատերուն մէկ մէկ կողմը քիչ մը պատուելով դուրս կը վաղցնեն: Այս գործողութենէն վերջը սպասելու է որ երբ լաւ մը չորնայ արտին վրայ ձրգլաժ տեղ մը, այն ատեն հերկուի քանի մը անգամ մինչև որ կոշտերը փշրին:

Նոյն աշնան ետեւէն ձմեռը մօտ լինելով չորցնելու և հերկելու գործողութիւնը յառաջիկայ գարնան կը մնայ, և հետևապէս միւս աշունը կրնայ ցանուիլ: Բայց եթէ արտը հեղեղով պարարտացնելու գործողութիւնը ՚ի գարնան կատարուի, նոյն տարին աշունը կրնայ ցանուիլ:

Ճախինները, ջրոտ և ցած տեղերը, նաև անբեր աւազուտները որ տափարակ են, միշտ այս կերպով լեցնելու է, եթէ անոնց վրայ ձոր, առու կամ գետ կրնայ իշխել արուեստական ճամբով:

Ի վերջոյ հարկ կը համարինք յաւելուլ թէ հողերը որ և է միջոցաւ պարարտացնելն ալ բաւական չէ առատ պտուղ առնելու համար: Հող մը կամ երկիր մը որչափ ալ բարեբեր լինի, շա-

րունակ կամ քանի մը տարի մի և նոյն բերքը ցանելով անպտուղ կը լինի: Ուստի, օրինակի համար, եթէ արտի մը մէջ այս տարի ցորեն ցանուած է, յառաջիկային դարի կամ վիգ, միւսին եղիպտոցորեն ցանելու է, և ապա կրկին հասարակ ցորենը ցանելու է, որ ամենքն ալ յաջողին առաւել կամ նուազ: Իսկ եթէ մէկը բաւական հող ունի, աւելի աղէկ է որ մէկ տարին անոր կէսը ցանէ, և միւս մասը թողլով հերկ ընէ եկող տարի ցանելու համար, և միշտ սցսպէս շարունակէ իր հողերն երկու մասի բաժնելով: Հողերը պարարտացնելէ յետոյ, աւելի այս փոփոխութեան ընթացքով առատ բերք կրնայ առնուիլ քան թէ մի և նոյն սերմը ցանելու համար ամէն տարի աղբ դնելով, որոյ արդիւնքը ոչ այլ ինչ կրնայ լինել բայց եթէ պառկելու չափ ուժով ցորենի կամ գարբի ցան, առատ յարդ, բայց պտուղ քիչ: Չմոռնանք նաև յաւելցնելու թէ խոնաւ արտերուն ջուրն առնուլ և մէկ երկու անգամ աւելի հերկելը՝ մանաւանդ կաւոտ ծանր հողերու համար՝ անհրաժեշտ պայման է առատ պտղաբերութեան: Իսկ հերկելու ժամանակը այն է՝ երբ արտը ոչ բոլորովին թաց է և ոչ բոլորովին չոր, այլ միջակ:



## Հ Ա Տ ՈՒ Ա Մ Դ .

### ԹԷ ԱՐՄՏԻՔ , ԱՅԳԻՆ ԵՒ ԾԽԱՆՈՏՁ ԻՆՁ ՏԵՍԱԿ ՀՈՂ ԿՐ ՍԻՐԵՆ

1° Յորենի տեսակները շատ են , և իւրաքանչիւր գաւառի մէջ տարբեր անուններ կը բերով չենք կրնար հոս անոնց անունը նշանակել , մանաւանդ որ ամէն երկրագործ իր երկրին մէջ գտնուած ցորենները իրենց անունովը ճանչելուն համար՝ հարկ ալ չկայ անունովը նշանակելու :

Յորենը ընդհանրապէս աւելի դաշտային արտերու մէջ կը յաջողի . բայց ցորեն ալ կայ որ լեռնային տեղեր ալ կրնայ յաջողիլ , երբ հողը նպաստաւոր է , լաւ մշակուած , և սովորական ժամանակէն քիչ մը կանուխ կը ցանուի : Գիտնալու համար թէ որ տեսակ ցորենը ծովէն քիչ մը բարձր կամ լեռնային տեղեր կրնայ յաջողիլ երկրագործը կը պարտի իր երկրին մէջ գտնուած ցորենի տեսակներէն մէկ մէկ քիչ մէկ արտի վրայ զատ զատ , բայց մի և նոյն տարեղ

և մի և նոյն օրերու մէջ ցանել . որ տեսակն որ աւելի աղէկ յաջողի , այն տեսակէն առնելու է իր սերման ցորենը : Օտար երկրի ցորեն ալ փորձելն աղէկ է :

Իսկ ցորենեղինաց սիրած հողին գալով կրախառն կաւոտ արտերը շատ կը սիրեն , նոյնպէս ներքէն աւազուտ իսկ վրան դեղին կամ կապոյտ կաւոտ հողերը : Վերջապէս ցորեն ցանելու հողին բաղադրութեան մեծ մասը դեղին կամ կապոյտ կաւ ըլլալու է :

2° Գարին ալ շատ տեսակներ ունի բայց գլխաւորներն երեք են . վեց շարքով , չորս շարքով և երկու շարքով :

Առաջին տեսակը որ աշունը կը ցանուի , տաք տեղեր և կաւոտ արտերը շատ կը սիրէ . երկրորդ տեսակը նաև երրորդը որք աշունը և գարունը ցանուելու տեսակներ ալ ունին մէջերին , լեռնային կողմերն ալ կրնան յաջողիլ ինչպէս դաշտերու մէջ , միայն թէ հողը կալուղ կամ որ նոյն է կրախառն կաւոտ վնել պէտք է : Իսկ վարսակը որ գարունը կը ցանուի , գարինն չյաջողած տեղերն ալ կը յաջողի , ամէն տեսակ հող կը սիրէ , բաւական է որ քիչ մը զօրութիւն ունենայ . չափաւոր խոնաւու միջակ զօրաւոր արտերու վրայ աւելի կ'ա-



ճի, բայց ընդհանրապէս իր սիրած հողն է բաղադրեալ հողը:

Այս ամէն արմտիք ցանելէն յետոյ պէտք է արտը գլանել, մանաւանդ թեթև և կակուղ հողերը, որպէս զի երկրին ծակտիքը գոցուին որ շատ կարևոր է ձմեռուան սառի վտանգէն պահպանելու համար, և եթէ ամառը ցանուած է, երկրին ծակտիքը գոցուելով թացութիւնը պահելու համար: Ծանր հողերու համար փայտէ գլանը բաւական է, բայց թեթև և կակուղ հողերը քարէ գլանով գլանելու է հողը նստեցնելու և երկրին մէջ օդ մտնելու ծակերը գոցելու համար, զի մի գուցէ, ինչպէս ըսինք, հողը ձմեռը սառի և կամ ամառը շուտով չորնայ: որոց երկուքն ալ անյաջողութիւն կը բերեն: Գլանը կէս կանգուն հաստ և երեք կանգուն երկայն կլոր փայտ կամ քար մի է, որոյ երկու գլուխուն մէջ տեղերը մէկ մէկ երկաթ կան, որոց վրայ երկու փայտ կ'անցընեն, և ասոնց միւս ծայրերը չուան անցուցած և ձի լծած արտին վրայ ցանելէն յետոյ կարգաւ գլտորելով քաշել կը տան:

Եթէ մէկը քարէ գլան չունի թեթև հողի վրայ պըտոցնելու համար, ունեցած փայտէ գլանին վրայ կրնայ արկղ մը հաստատել և մէջը քարեր լեցնելով ծանրացնել: Գլանելու ժամա-

նակը արտին երեսը քիչ մը չոր ըլլալու է որ հողը չփակցընէ ('): Երկրագործներն ալ արմտեաց տեսակներէն է, բայց ցանուելէն յետոյ գլանելու պէտք մը չկինալուն համար գլանելու գործողութենէն վերջը ձգեցինք:

Այս բերքը որ գրեթէ միշտ միւսներէն աւելի պտղատու է, խոնաւ ու տաք տեղերը շատ կը սիրէ. շատ հով դպած տեղերը ցանելն աղէկ չէ, վասն զի հովը անոր տնկոց կը վնասէ: Հողերուն մէջ միայն կապոյտ կաւը չի սիրեր, դեղին կաւով արտերը շատ կը սիրէ. նոյնպէս բաղադրեալ հողերու և պարարտ աւազուտ արտերու վրայ լաւ կը յաջողի: Կակուղ հող ուղեւուն համար՝ արտը հերկելու և թողելու է որ ձմրան սառերէն վերջը գարնան տաք օրերը տեսնելով ուռի և կակղանայ: Յանելու համար՝ աղէկ խոչոր հունտերը զատելու, քիչ մը յառաջ թրջոց դնելու և ապա տնկելու է: Բուսնելէն վերջը տարուելիք խնամոց վրայ խօսել աւելորդ է, զի ամէն երկրագործ գիտէ:

Այս բերքը որ գրեթէ միշտ միւսներէն աւելի պտղատու է, խոնաւ ու տաք տեղերը շատ կը սիրէ. շատ հով դպած տեղերը ցանելն աղէկ չէ, վասն զի հովը անոր տնկոց կը վնասէ: Հողերուն մէջ միայն կապոյտ կաւը չի սիրեր, դեղին կաւով արտերը շատ կը սիրէ. նոյնպէս բաղադրեալ հողերու և պարարտ աւազուտ արտերու վրայ լաւ կը յաջողի: Կակուղ հող ուղեւուն համար՝ արտը հերկելու և թողելու է որ ձմրան սառերէն վերջը գարնան տաք օրերը տեսնելով ուռի և կակղանայ: Յանելու համար՝ աղէկ խոչոր հունտերը զատելու, քիչ մը յառաջ թրջոց դնելու և ապա տնկելու է: Բուսնելէն վերջը տարուելիք խնամոց վրայ խօսել աւելորդ է, զի ամէն երկրագործ գիտէ:

(') Արմտիք մշակելու գործեաց մէջ միայն գլանը յիշելուս պատճառն այն է որ՝ այս կողմերը եւ կարծեմ բոլոր Ասիոյ Տաճկաստանի մէջ չկայ այն, որ խիստ հարկաւոր է, ինչպէս վերը ցուցուցինք:



ինչպէս միւս արմտեաց վրայ սովորական զե-  
տելքները, որոց վրայ խօսել զանց ըրինք, ա-  
մենուն գիտցած բանն ըլլալուն համար :

Կը մնայ ուրեմն մեզ խօսել ցորեանի և գա-  
րիի ածուխ ըսուած հիւանդութեան դարմա-  
նին վրայ, որ այս տեղը կոչը անուանը կը կրէ :

Եթէ սերման ցորենը երկու տարուան է՝ ա-  
ծուխ չի բերեր, որովհետև հիւանդութեան կամ տը-  
կար ցորենները ալ չեն բուսիր որ ածուխ բե-  
րեն, իսկ եթէ սերման ցորենը նոր է, ցանե-  
լէն երկու երեք օր յառաջ փոշիացեալ չմտած  
կրի (բիրէճ) հետ խառնելու և վրան այնչափ  
միայն պող ջուր ցանելով խառնելու է, որ ա-  
մէնքը թըջին և ճերմկին, երկու օրէն նորէն  
խառնելու է, որպէս զի յիրար վակածները  
զատուին, և այնուհետև ցանելու է, Կիրը սեր-  
ման մէջի տկարները կը փճացընէ և առողջնե-  
րու ոյժ կը տայ, որով ածուխ չի գոյանար յա-  
ռաջիկայ բերքին մէջ, վասն զի ածուխը տկար  
հունաբերէն կը պատճառի խոնար տարիներ,  
կամ խոնար կլիմայից ներքև :

4° Այգին որ չափազանց տաք և չափազանց  
ցուրտելկիրներու մէջ չի բուսիր կամ չի յաջողեր,  
բարեխառն երկիրներու մէջ արեգդէմ տեղ կը  
սիրէ : Թէպէտև դաշտի վրայ շատ խաղող կը

5751  
0521

տոյ, բայց խաղողը աղէկ չի հասնիր, և գի-  
նին անպիտան կը լինի : Ասկէ զատ դաշտի վը-  
րոյ ձմրան ցրտէն ուռերը կը սառնին : Բայց ա-  
րեգդէմ դառելովայրերու վրայ հիւսիսային ցրտէն  
պատասպարեալ լինելով՝ այգին սառելու վնասնդ  
չունի ձմեռը, և խաղողը ժամանակին աղէկ  
կը հոտոյնէ, որովհետև կէս օրուան արևը մին-  
ջև իրիկուն վրան կը զարնէ, և զինին պատ-  
ուական կը լինի, եթէ խաղողն ալ լաւ տեսա-  
կէն է : Ընդհանրապէս դէպ ՚ի հիւսիս նայող  
զուռ ՚ի վայրերը ցուրտի և սառտիկ հովի դի-  
մոց լինելով այգիի յարմար չեն : ուստի եթէ  
մէկը ստիպեալ է այսպիսի դիրքի մը վրայ խա-  
ղող անկել, նայելու է որ քիչ զատ ՚ի վայր ըլ-  
լայ, և այգիին հիւսիսային կողմը տասն ոտք  
հեռի պողտասու ծառեր անկելու է իրարու  
բաւական մօտ, որպէս զի հիւսիսային ցուրտ  
հովէն պահպանուի այգին :

Այգին տաք, չոր և չափաւոր կակուղ բայց  
պարարտ հող կը սիրէ, ըսել է որ խոնար, ծանր  
և կոշտն այսինքն կապոյտ կաւոր հողը չի սի-  
րեր, այլ դեղին կաւով կրս ու չափաւոր ա-  
ւաղով խառն հողը ամենէն աւելի սիրածն է :  
Այն քարերը որք արևէն, անձրևէն և ցրտէն  
հալելով, կամոց կամաց հողի կը փոխուին, այ-



գիւ շատ յարմար են . իսկ եթէ ներքեւի հողը  
խոնաւ և կակուղ է, սյգին աղէկ չ'ըլլար, թէ և  
վրայի հողը իր սիրածն ըլլայ :  
Թէ և այգիի մշակութեան՝ ինչպէս արմուռ-  
եայ՝ սովորական խնամոց վրայ խօսելն մեր ա-  
ռաջագրութենէ դուրս է, սակայն երկու ան-  
գամ փսրելու հարկը նշանակելով՝ կտրելու կեր-  
պին վրայ երկու խօսք ըսել արժան կը դատուիք :  
Այգիին՝ որչափ կարելի է՝ ցածէն կտրելու է,  
ղի որչափ գետինը մօտ լինի, այնչափ շուտ կ'ար-  
թըննայ, խաղողը շուտ կը ծաղկի և շուտ կը  
հասնի, որովհետև արևուն ճառագայթները  
գետինը զարնելով և գետնէն ի վեր ցոլանա-  
լով՝ գետնին մօտ եղող պտուղները շուտով կը  
տաքնան, և յայտնի է թէ խաղողը որչափ եփուն  
ըլլայ, այնչափ գինին աղէկ կ'ըլլայ : Ուստի  
նայելու է որ մայր որթը գետնէն մէկ թիգ  
և հաղիւ քիչ մ'աւելի բարձր լինի :  
Շատ խաղող առնելու համար հետագայ կեր-  
պով կտրելու է, բայց մշակութեան և աղբի  
պէտքերը անթերի հոգալով : Դիցուք թէ գետ-  
նէն մէկ թիգ բարձր մայր որթին գլուխը հինգ  
կամ վեց ուռեր կան . ասոնցմէ երկու զօրաւոր  
և պաղատու ուռեր՝ դիմացէ դիմաց լինելու  
պայմանաւ՝ տասն աչք վերէն կտրելու է, իսկ

ուրիշ երկու ուռեր ալ դիմացէ դիմաց երկեր-  
կու աչքով թողելու, և մնացած ուռերը բոլորն  
ալ յատակէն կտրելու է : Երկրորդ տարին  
մարտ ամսոյ մէջ որթերուն արմատը կխօնվին  
բանալով՝ գետնին երեսի մօտ եղող նրբաթիւերը  
կտրելով մաքրելէն յետոյ, առջի տարիէն մնա-  
ցած երկու երկայն գլուխները յատակէն կտրե-  
լու, և կարճ գլուխներուն ուռերէն առաջին-  
ներուն պէս երկու նոր երկայն գլուխ թողելու  
է տասնական աչքով դիմացէ դիմաց, և երկու  
ալ կարճ գլուխ թողելու է երկերկու աչքով  
միշտ դիմացէ դիմաց, և մնացած բոլոր ուռե-  
րը յատակէն կտրելու է, շարունակելով ամէն  
տարի այսպէս : Ծրողկելէն յառաջ անպառուղ  
ճիւղերը մաքրել և պառուղ տուողները ցիցերուն  
կապել պէտք է . ծաղկելէն տասնևհինգ օր  
վերջը նորէն մաքրելով եկող տարին գլուխ դը-  
նելու ուռերուն հօգ տանելու է : Իսկ եթէ տա-  
րիներ անցնելով մայր որթը գետնէն բարձրա-  
ցած և ծերացած է, հողին մէջէն կտրելով նո-  
րոգելու է : Բայց առանց խաղողի չմնալու հա-  
մար՝ այգիին կէսն այս տարի և կէսը հետեւե-  
եալ տարին նորոգելու է :  
5°. Ծխախտոր որվաճառականութեան տուն-  
կերու մէջ շատ երևելի է, քանի մը տեսակներ



ուհի որք տերևին ձեէն, գոյնէն, հոտէն և ծուխին համէն կը ճանչալին: Այս տունկը մըշակողը շատ հետամուտ լինելու է որ իր մշակածը՝ տերևը խոշոր, աւելի փնտռուած և սուղ ծախուող տեսակը լինի:

Ծխախոտն ալ այդ իի պէս արեգ դէմ և ցուրտ հովեր չդպչելու տեղ կ'ուղէ, իր ամէնէն աւելի սիրած հողը աւաղը քիչ, պարսրտ և տաք դեղին կաւն է. կրայրոյ կա ի, չոր աւաղի և ճախնի վրայ աղէկ չի բուսնիր: Հանդ չած արօփ վրայ շատ լաւ կը լինի, և եթէ հողը պարսրտ է, քանի մը տարի կրնայ իրարու վրայ անկուել, և իր տեղն ալ ցորենը շատ աղէկ կը յաջողի: Այս տունկը շատ աղբ կը սիրէ, և փորձուած է որ աղբին տեսակները շատ աղբեցութիւն կ'ընեն իր աղէկութեանը և հոտին վրայ: Ոչխարի և ձիու աղբի վրայ շատ բարկ կը լինի. բայց հոտը աղէկ չլինելով ծխելու չի դար, միայն քթախոտի շատ յարմար կը դայ. իսկ կովի աղբի վրայ բուսածը իիստ լաւ կը լըայ, և անուշ հոտ ունենալով ամէնէն աւելի ծխելու յարմար կը դայ:

Ծխախոտին արտը աշնան երկու երեք անգամ հերկելու և թողելու է որ ձմրան ցաւերէն կակղանայ, Հունտին անկողինը Մարտի ա-

ռաջին օրերուն մէջ տաք և արեգ դէմ ու պող հողեր չդպչելու տեղ մը լինելու է, և Մայիսի վերջերը արտը նորէն հերկելով տընկելու է իր օրէնքին համեմատ, այսինքն կարգի վրայ, բայց մէկը միւսէն կանգնապափ հեռի: Եթէ անկուած ժամանակը անձրև եկած չէ կամ խոնաւ չէ գետինը, անկուածներուն անմիջապէս ջուր տալ պէտք է: Ասկէ վերջը լինելու դործողութիւնը յայտնի է, այսինքն՝ քիչ մը մեծնալէն ետև մէկ երկու անգամ արտը փորել, խոտերը մաքրել, արմատոց քով հող լեցնել, ծաղկել չսկսած դուլխները և տերևոց մէջէն ելած ճիւղերը կտրել՝ տկարներուն վեցական և զօրեղներուն աասն կամ աասներկու տերև թողլով: Աշնան անձրևոց և ցուրտերուն չմնալու համար քիչ մը կանուխ տնկելու է: Հասնելէն վերջն ըլլալիք դործողութիւններն յայտնի լինելով զանց կ'ընենք անոնց վրայ խօսիլ: Եթէ մէկն ասկէց աւելի տեղեկութեանց պէտք ունենայ, գիւղացւոց մէջ շատերը դիտեն, անոնց կրնայ դիմել:



Երբ որ արտը արտը աշնան երկու երեք անգամ հերկելու և թողելու է որ ձմրան ցաւերէն կակղանայ, Հունտին անկողինը Մարտի ա-



### Հ Ա Տ ՈՒ Ա Տ Գ .

ԵՐԿՈՒ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՔՐ ԵՐԿՐԱԳՈՐԾԱՅ

Հ Ս Մ Ա Ր

Փոքր երկրագործ կը կոչենք զանոնք որ քիչ մը չերամ, քիչ մ'այդի մշակելէն զատ, քիչ մ'ալ ցորեան կամ արմտիք և այլն կը մշակեն՝ եբրև գիւղացի՝ մեայն իրենցտանն հայր հոնելու համար . իսկ մեծ երկրագործ կը կոչուին անոնք՝ որոնց երկրագործական ձեռնարկութեանց սահմանն ընդարձակ լինելով մեծ քանակութեամբ բերք կը հանեն, անոնց մեծագոյն մասը կը ծախեն և քաղաքներ կը կերակրեն .

Բայց որովհետև գիւղացին որոյ սպարտաը զրեթէ երկրագործութենէ է գլխավին, եթէ միայն մէկ տեսակ բերք մշակէ, յաջողած տարին բարեկեցիկ սպրուստ մը չունենալէ զատ՝ չյաջողած տարին բոլորովին թշուառութիւն, կամ որ նոյն է՝ պարտապանութիւն է իր վիճակը . իսկ եթէ ողէկ սպրելու համար մէկ

քանի բերց մշակութեանը ձեռք զարնէ, կարողութիւնը չնեղելուն համար չպիտի կրնայ ամենուն ալ մշակութեանը հասնիլ, ինչպէս միշտ կը տեսնենք որ 30 տրամի պարտէղ և 2000 որթով այդի մ'ունեցող երկրագործ մը հազիւ իր պարտէղներն ու այդին կրնայ մշակել իր աշխատութեամբը մշակելու պայմանաւ, և եթէ իր հացի պէտքին չափ ցորեան ալ հանել ուղէ իւր արտերէն, երկու մեծ դժուարութիւնք կ'ելեն իր տուչև, որոնց մին է արտերուն յիրտ ցանութիւնը կամ մէկ մէկէ ունեցած քառորդ, կէս ժամու հըն . հեռաւորութիւնը որ մարդուս ամենէն թանկագին բանին այսինքն ժամանակին կորուստ կը սրտաճառէ, մէկ արտին այցելութիւն ըրած ժամանակ միւսը կը մնայ, և թողումը ոսից տման հինցնելը մարդն իր ցաները տեսնելու, քաղելու, կամնելու և ներս աւանելու համար, մէկ մը հոս մէկ մը հոն երթալ գուլէ կը ձանձրանայ, և կը ցաւի իւր ժամանակի կորուստին վրայ . իսկ միւս գրծուարութիւնն է 8—10 տրտավար տեղ ցանելու համար եղներու ետեւէն կապուիլ մնալ, որով պարտիղին և այդիին մշակութենէն կ'արդելուի, և եթէ յատուկ մշակի մ'ալ յանձնելու ըլլայ, գործը փոքրիկ լինելով՝ ծախքը բերքին



կը հաստատուի և իրեն ծանրի կը նստի, ինչպէս նախընթաց յօդուածին մէջ աղէկ մը ցուցնինք: Արդ՝ որպէս զի փոքր երկրագործն այս երկու դժուարութիւններէն ազտաի, և միանգամայն քանի մը տեսակ բերք մշակելով կարող լինի քիչ մը լայնօրէն ապրիլ: հետագայ երկու դժուարութիւններն օգտակար կը համարինք հազարդեւ:

1° Արտերն հետզհետէ սլոյց հետ փոխանակելով, կամ այս ինչ տեղի արտը քովի արտին տիրոջ ծախելով, և այն ինչ արտին քովի արտը գնելով՝ եր հողերը միայնեւ առանց քիչ մը խաբու ելուն նայելու:

Արտորէից մէկ մէկէ հեռաւորութեան դժուարութիւններն ու մեծ և տեսակ տեսակ վրանասները վերը նշանակած լինելով աւելորդ կը համարիմք անոնց միաւորութենէն յառաջ գալիք մեծամեծ օգտից, առաւելութեանց և դիւրութեանց վրայ մի առ մի խօսիլ. թէ ոչիմ ընթերցողք և թէ այս դրութիւնը շունենալով միշտ տոնջուող երկրագործք չաա դիւրակրնան ըմբռնել մեր ըստմին անբաւ առաւելութիւնները:

2° Նախնթաց յօդուածին մէջ մեր առաջարկած կերպին կամ դրութեան հետեիլ, այ-

սինքն՝ 8—10 արտավար տեղ հերկելու, ցանելու և ներս առնելու, կամ այսպէս ըսենք՝ 40—50 օր եղան գործ ունենալու համար, ամբողջ տարւոյն մէջ եղներու չկապուիլ, անոնց հետէն դնալով ուրիշ բերոց մշակութենէն կամ ուրիշ գործէ և չահէ չարգիլուիլ, ոչ ալ եղները յատուկ մշակի մը յանձնելով հանելիք բերքին կամ եղանց գնոյն չափամէն տարի ծախք ընել, այլ արտերնին իրարու մօտ եղող 25—30 կամ աւելի երկրագործք ընկերութիւն մը կազմելով և մարդ գլուխ տարեկան 50 կամ քիչ մ' աւելի զը. վարձք տալով՝ իրենց եղները հովուի մը յանձնել, նոյն արտերուն մօտ հասարակաց գոմով մը հանդերձ, և պէտք եղած հակողութիւնն ընել, Այս դրութեան առաւելութիւնն է, ինչպէս ըսինք, փոխանակ 4000 և աւելի զըշով իր տանը ցորենը ձեռք բերելու, 50 կամ քիչ մը աւելի զըշով նոյն բերքը ձեռք բերել: Այս ահագին առաւելութիւնը քանի որ յայտ յանդիման կը կենայ, երկարաբանելու և բացատրութեան հարկ չի մնար:

Այսպէս ահա, սիրելի է ինձ կրկնել ինչ որ սլոյսը ըսինք, երբ երկրի մը մէջ մէկ քանի տեսակ բերք միանգամայն արտագրուին, կամ այսպէս ըսենք, երբ հոս շերամին, հոն բամ-



պակին և այլուր ձիթաօրոցոյն վրայ, արմտեաց,  
խաղողի, ծխախոտի և այլն բերքերն ալ աւել-  
նան, այն ատեն միայն հիւսկուան ներս մտած  
ոսկիները մեծաւ մասամբ երկրին մէջ մնալով  
կարելի է լուսաւորութեան, քաղաքակրթու-  
թեան և յառաջագիտութեան սնունդ, և յուս-  
տի մարդկային կեանք ունենալ . . .

գլխաւ մէջս մտայ միմք բնութիւնս միջոցով զի  
բոլոր մեզս շարժող զորքն զիսկ զօրոյ  
մայիկայիցն զճորտայիցն զիմաւ նայ թէ  
նայ թէ մտնեցաւ մէջս զիսկ զիսկ զիսկ  
բնութիւնս զիսկ զիսկ զիսկ զիսկ զիսկ  
բնութիւնս զիսկ զիսկ զիսկ զիսկ զիսկ

**ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԻՐԻՒՆ՝ ԾԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ՝  
ԳԱՐՄԱՆ ԱՂԲԱՏՈՒԹԵԱՆ**  
Գիւղացւոց բարեկեցութեանն համար, ըստ  
որում միշտ փոքր երկրագործք, միայն զանա-  
զան բերոյլ արտադրութիւնը բաւական չեմ  
համարիր. չեմ ուզեր որ իրենց գործողութիւնը  
միայն բերոյլ արտադրութեանը մէջ կայանայ,  
անկէց անգին ալ անցնելու է. բայց առ անցումը  
այնպէս արտադրելու է որ երկրագործին սո-  
վորական գործոյն արգելք չլինի : Այս անցման  
միջոցն ընկերութիւնն է, որ շատ մը տկար ու-  
ժեր ի մի վայր բերելով մեծամեծ գործեր կ'ար-

տադրէ : Ընկերութեան կարևորութեանը և  
մտորոս ընծայած դիւրութեանցը վրայ խօ-  
սիլ աւելորդ կը համարիմ, զի յայտնի է թէ  
ինչ որ մէկ մտորք չի կրնար ընել առանձինն,  
ընկերութեան ճանքով շատ դիւրաւ կրնայ ը-  
նել : և ընկերութեան գաղափարը ուրիշ բանէ  
ծնած չէ բայց եթէ անհատական կարողութեան  
մեծամեծ գործոց անկարող լինելէն : Այս ճըշ-  
մարտութիւնը անհակառակելի է : Արդարեւ  
կը տեսնենք մարդ մը, կամ շատեր կան, որք  
քանի մը տարի բերոյլ յաջողութիւն ունենալով  
իրենց տարեկան ապրուստը հանելէ զտո՛ տա-  
րիէ տարի չորս հինգ ոսկի կ'աւելցնեն իբրև  
անպագայի համար, կամ ձախտողութեանց դէմ՝  
պատրաստութիւն : Բայց որովհետև գործեր-  
նին ընդարձակելու պէտք մը չեն տեսներ, և  
վաճառական կամ արհեստաւոր ալ չեն որ ի-  
րենց դրամագլխոյն վրայ յաւելցնեն այն փոք-  
րիկ գումարը, ուստի կ'ստիպուին ծրարի կամ  
արկղի մէջ փակել, որ անտեսագիտութեան  
բողբոլին հակառակ է, քանզի ըստ տնտեսա-  
գիտութեան որ և է դրամագլուխ անգործ մը-  
նալու չէ, այլ պէտք է շահաբերութեան մէջ  
լինի : Բայց արի տես որ այդ մարդիկ, եթէ  
իրենք առանձինն ուրիշ գործերու ձեռք զար-



նելով շահեցնել ուղեն իրենց ստակը, այդմեւ չեն կարող, քանզի իրենց գրամագլուխը փոքր լինելուն պատճառաւ չեն կրնար անոր շահովն ապրիլ, կամ աւելի լաւ է ըսել, գրամագլուխնին չի ներեր որ ուրիշ գործի ձեռք զարնելու կարող լինին : Ահա ասկէ կը ծագի ընկերութեան հարկը, որ փոքր կարողութիւնները միացնելով մեծ կարողութիւն մը կը գոյսցնէ, շատ մը հինգ հարիւրներ իրարու բերելով շատ մը 5000ներու գումարը կը կազմէ, և այն իբրենց փոքրիկութեամբն անգործութեան գատապարտեալ գումարները քանի մը գործակալաց ձեռքը շարժման և աճման մէջ կը դնէ, ձեռք զարնելով կարևոր կամ մեծ գործի մը, որում իւրաքանչիւր ոք սուանձինն անկարող կը գտնուէր ընկերութեան մէջ չմտած, և իր ապագային տարերքն եղող փոքրիկ գումարն ասոր կամ անոր վրայ և կամ արկղի մէջ կը փռտեցնէր :

Գիւղորէից մէջ արտաքին բերոց վաճառքը որոց գիւղացիք պէտք ունին, կիսովին օտարականաց և կիսովին տեղացի մասնաւորաց ձեռքն է, բայց ներքին բերոց համար այդպէս չէ : Թէպէտև ձիթաիւղին և բամպակին վաճառքը կրնանք ըսել մեծաւ մասամբ տեղա-

ցի մասնաւորոց ձեռքն է, սակայն շերամի բերքը գրեթէ բոլորովին օտարականաց ձեռքն է : Պէտք չէ ըսել թէ այդ յիշեալներէն զատ ուրիշ բերք չ'իայ, որ վաճառքի նիւթ լինի : Այս կողմերը, ինչպէս արդէն ըսինք, շատ լաւ կը յաջողին և այդին և ծխախոտը : Եթէ ասոնց մշակութեան հոգ տարուի, տեղւոյն սպառման պէտքէն զատ մեծ քանակութիւն մ'ալ կրնայ վաճառուիլ : Մասնաւորապէս կը նըշանակեմք, եթէ Պարտիզակի այդինները քիչ մը ուշ կ'իմանին, և գինին հին գինի շինելու կերպով պատրաստուի, Պորտոյի հետ միցող գինի կրնայ ելնել : Նոյնպէս ուրիշ տեղեր, մասնաւորապէս արեւգէմ երկիրներու մէջ, եթէ մըշակութեանը և խաղաղի տեսակաց ընտրութեանը հոգ տարուի : Ուստի գիւղորէից մէջ ալ ընկերութիւններ կաղմելու է, իբրև հասարակաց սնտուկ ասոր անոր քով անգործ մընայած փոքրիկ գումարներն ի մի վայր բերելու, շահեցնելու և աճեցնելու համար պարապելով վերոյիշեալ ներքին բերոց վաճառման, կամ ուրիշ պիտոյից արտադրութեան, ինչպէս են խեցեղէն սնթիք, կղմնուր և աղիւս՝ ուր որ ասոնց հողը կը դառնուի, և կամ երկրագործական մեծ ճիւղի մը մշակութեան :



— Շատ լաւ , կ'ընէ բարեկամ մը , բայց մեր մէջ շատ դժուարին է համոզել զմարդիկ որ ընկերութիւն կազմեն , քանզի բնաւ հաւատարմութիւն չկայ իրարու վրայ . կը վախցուի որ ընկերութեան դործը վարողները դրամները կը կլանեն :

— Այդ բոլորովին տկար պատճառ է . զի ընկերութիւնը բնականաբար մեծ և հզօր է քան զիւր գործակալները , որք անշուշտ իրենց հաւատարմութեամբն ու գործունէութեամբը ճանչուած մարդիկ լինելու են , և որոնցմէ ընկերութիւնը կառավարութեան ձեռք հաստատուն երաշխաւորութիւն և ապահովութիւն կընայ աւետել , իր դրամագլուխն անկորուստ պահելու և շահեցնելու համար՝ խիստ կանոնի և խիստ համարաւորութեան ենթարկելով իր գործակալները : Ընկերութեան բնական զօրութիւնը եթէ արագ համարաւորութեան և սուր հսկողութեան հետ լծորդի , բաւական է իր գործակալները հաւատարմութեան մէջ պահելու :

Այս տկար առարկութիւնը հերքելէն զկնի , խրատ կը տանք անհաւատարմութեան խմբն ունեցողներու թէ անհնարին է իր տունը շինել ուրիշին տանն աւերակաց վրայ . թէ երջանկու-

թեան հաստատու թիւնը արդար քրտանց մէջ է : Այս , կը կրկնենք , հաւատարմութենէ դուրս իր տունը շինելու համար ամէն ջանք ընդունայն է , քանի որ աշխարհի դատաւորներէն զատ մեր զլխոյն վրայ աւելի անաչառ դատաւոր մը , Աստուած մը կայ որդարութեան հսկող , և ամէն իրաւունք կանուխ կամ անագան իր տեղը բերող : Ինչպէս Աստուած՝ նոյնպէս արդարութիւնը անմահ է , զի նորա ճառագայթներէն մէկն է սա :

• Չիք բնաւ ճշմարիտ երջանկութիւն յուսալի անոր համար՝ որ արդարութեան հետ չի քաշեր . կընայ յաջողիլ , բայց երկու բան միշտ իրեն պիտի պակսին , իր յարգը և ապագային ապահովութիւնը , ներքնապէս զգալ իր անուամարկութիւնը , և ոչնչութեան այսինքն յաւիտենականութիւն չկենալու փափաքելու վիճակին մէջ լինալ , արտաքուստ բարեւից մարդու մը համար տխուր վիճակ մ' է : (1)

Խօսք հասկցողին համար այսչափը բաւական է . ուստի սոյն յօդուածին ալ վերջ տալով կը կրկնենք թէ յիմարութիւն է դնալ այն ճամբան

(1) Ժիւլ Սիմոն կենդանի փիլիսոփայ Գաղղացի , եւ այժմ հասարակաց կրթութեան պաշտօնակալ , — Պարտք . երես 442 .







Թէև, բայց և այնպէս իրենց զաւակաց դաստիարակութեան հարկաւոր ծախքէն կը փախչին, փախուստ մը՝ որոյ 'ի պատիժ բաւական է զաւակաց ազխտութիւնն ու անկրթութիւնը։ Այսպիսիք իրենց ծնողական պարտաւորութեան դէմ մեղանշելէ զատ՝ ազգային յառաջագիմութեան դէմ՝ ալ կը մեղանշեն, թէ իրենց զաւակը տգէտ պահելով և թէ աղքային պարտուց վրձարման չը մասնակցելով։

Նոյնպէս երբ մէկն տեղւոյն սովորութեան (այս խօսքը բնուէ տարազի, ձևի անարկութիւն չ'ըներ հոս) և իր կարողութեան չնայելով թանկագին հանդերձներ կը հագնի՝ պճնասիրութիւն ըրած կը լինի, որ շրայութեան մէկ մասն է, և իր փեսասկար հետեանքն ունի, ասոր հակառակն ալ յայտնի է։ Սակայն զայս ըսելով ըսել չենք կամիր թէ՛ ըստ որում հարուստին կարողութիւնը կը ներէ, թող նա թանկագին լաթեր հագնի, իսկ աղքատին կարողութիւնը չներելուն համար՝ սա՛ անվայել քուրջեր։ Տնտեսագիտութիւնը պարզասիրութեան մի և նոյն դասը կը տայ թէ հարուստին և թէ աղքատին, այն է պարզ, վայելուչ և մաքուր լինել։ Թէև Տնտեսագիտութեան անտեղեակ հարուստը աւելի պչրանաց կը հետևի շքասիրութեան

բնական բազմանքէն մղեալ՝ քան անոր տուած դասին, սակայն այս յայտնի է որ հարուստին պարզասիրութեան օրինակն աւելի ազդու է, մինչդեռ աղքատինը այնպէս չէ, զի նորա կարողութիւնը կը ներէ ճոխ սեղան ունենալ, և շքեղ հագուիլ, բայց Տնտեսագիտութեան հետևելով չ'ըներ, իսկ սա աղքատութենէն ստիպեալ է պարզութիւն պահել, Ուստի խօսքերնիս եղրակացնելով կ'ըսենք թէ խնայութիւնը և պարզասիրութիւնը ուտեստի և հագուստի օրինաւոր և օգտակար ծախուց մէջ կը կայանան, և թէ անօգուտ, անտեղի և աւելորդ որ և է ծախք շրայութիւն է, որչափ ալ փոքր և աննշան ըլլայ։ Չմտնանք նաև յատկապէս յիշել թէ կրթութեան, իմացական սնունդի և հիւանդութեան դարմանի ծախքերն ալ խիստ օրինաւոր և անհրաժեշտ ծախուց կարգէն են։ Իսկ խնայութեան և պարզասիրութեան նպատակին և օգտին գալով՝ ատո՞՞ յայտնի են, այսինքն կարելի եղածին չափ հարստանալ կամ գոնէ իր գոհացուցիչ վիճակէն չիյնալ, զաւակաց դաստիարակութեան պարտքն ազգային պարտաւորութեանց հետ ըստ կարի կատարելու և բարեգործական ձեռնարկութեանց մասնակցելու կարողութիւն ունենալ, ձախորդութեանց



դէմ դնելու պատրաստ կենալ, և ծերութեան օրերու մէջ միտթարութիւն գտնել: Բայց գիւղօրէից մէջ պիտոյից համեմատ վաստակ չկենալով՝ ծախուց ալ գրեթէ չափազանցութիւն չկայ այնքան՝ որչափ հազուստի մասին ծայրայեղօրէն կը տեսնուի Պօլսոյ իգական սեռին վրայ, ուստի հոս և ոչ երկար խօսելու հարկ կը մնայ: Միայն երկու կէտ կայ, որոց վրայէն չեմք կարող լռութեամբ անցնիլ:


Ասոնց մէկն է հարսնացու աղջկան օժտի չափազանց և անտեղի ծախքերը, որք անոնց ծընողաց, մանաւանդ աղքատաց վրայ մեծ մտատանջութիւն կը բերեն: Օժտի ծախք ըսելէս պէտք չէ հասկանալ աղջկան հազուստին վերաբերեալները, զի այդ պարտաւորութիւն մ'է զոր ծնողք իրենց կարողութեան ներածին չափ պարտաւոր են կատարել՝ առանց պարզ գեղեցկութեան սահմանէն անցնելու, այլ այն հանդերձեղէնի ծախքերն իմանալու է, զորս աղջկան ծնողք սովորութեան հասանքէն մանաւանդ թէ հարուստներուն չար օրինակէն մղուեալ՝ ակամայ կ'ընեն փեսային, ասոր հօրն ու մօրը, եղբարցը, քերց և ազգականաց համար ինչպէս են փեսային համար՝ սովորական եղած բաներէ դուրս, ժամացոյց, 300 զրուշնոց գօ-

տի և այլն առնել, իսկ միւսոց համար ոտից աման, շապիկ, վարտիք, անդրուվարտիք, թաշկինակաց ծրար մը և այլն: Ամենէն աւելի դէշն այն է՝ որ երիտասարդք ալ աւելի այս անվայել և դիւրաբեկ օժիտները կը բնտուեն աղջկանց քով, քան բուն օժտի կշիւ և արժէք ունեցող յատկութիւններ, որով և ծնողք կ'ըստիպուին այդ ծախքերն ընելու, ծախքեր՝ որք պարտաւորութենէ դուրս ու միանգամայն անտեղի են, և որք գիւղացի բայց իր հացն ունեցող տուները կործանելու բաւական են: Աղջկան ծնողաց կողմէն այս այպանելի, աւելորդ և անվայել օժիտները մերժուած ատեն՝ հետևութիւնն յայտնի է, ոյսինքն աղջիկը շառնուլ, զի ինչպէս ըսինք, երիտասարդք աւելի այդ անաւեր և վաղանցիկ իրերը կը բնտուեն, փոխանակ ամուսին լինելու ճշմարիտ յատկութիւններ բընտրուելու իրենց հարսնացուի վրայ: Բայց ինչ որ ալ ըլլայ պատճառք և հետևութիւնը, այս վատթար սովորութիւնը վերցնելուն ճարը նայելու է: Մեք ամենուն ուշադրութիւնը այս կէտին վրայ հրաւիրելով՝ երեւելաց օրինակն

(<sup>1</sup>) Այդ գէշութիւնը ուրիշ տեղերէ աւելի Պարտիզակի մէջ կը յառաջագիւլ տարիէ տարի:



ամենէն աւելի ազդու դարման կը համարիմք :  
 Իսկ երկրորդն է հարսանեաց մէջ բաղմա-  
 ծախ կերակրոց հետ , և դուրսը մանաւանդ  
 ձմրան կիրակի օրերը չափազանց գինի խմել ,  
 խմել ոչ թէ զուարթանալու կամ ուրախանալու  
 չափ , այլ քսակ պարպելու , խենդենալու և  
 քանի մ' օր անոր հետևանքն եղող տկարու-  
 թիւնը կրելու չափ : Այս չուայլ մնլութիւնը  
 ամէն ուրեք կայ , այնպէս զի գիւղօրէից մէջ  
 երաժ բաւական մեծ քանակութեամբ գինին ի-  
 րենց մէջ կ'սպանուին մասնաւոր յոյժանոցով ու  
 Ինչպէս յայտնի է , այս կերպ սպառումը ա-  
 ուղջութեան մնաստկար լինելէ զատ՝ գիւղաց-  
 ւոց ընդհանրութեանն այլ օգուտ մը չունի : զի  
 ստակը մէկ քանիին քովէն կ'եղնէ և ուրիշ մը  
 քով կը ժողովի , և ոչ թէ դուրսէն գիւղից մէջ  
 ստակ կը մտնէ , մինչդեռ եթէ առողջական օ-  
 րինաց համեմատ գործածուէր , մեծ քանակու-  
 թիւն մ' ալ դուրս ծախուելով՝ մեծկակ գումար  
 մը ներս կընար մտնել : Գինիին շատ խմուելուն  
 պատճառն եթէ մէկ կողմէն մնլութիւնն է ,  
 միւս կողմէն ալ նոր ըլլալն է , որուն վարժուող-  
 ները սասնապատիկ ալ խմեն՝ առ ժամայն ծան-  
 րութիւն մը չեն զգար թէ և ըստ առողջակա-  
 նին ( թիէնիքման ) կը մնասուին : Իսկ զի ար-



իւնը չափազանց տաքնալով՝ իր շրջաբերութեան  
 պաշտօնը կը խռովի՝ ալեկոծեալ ծովու նման ,  
 և զգայութիւնը յուժանաբար գրգռելով կը մը-  
 ղեն զմարդն դէպ 'ի այն կողմը՝ ուրկէ յառաջ  
 կը գայ միշտ առնական զօրութեան արագ ըս-  
 պառում մը : Ստանալէր գիտեն թէ ինչ ընել  
 ուզեցի : Այս յոյժով մասնաւոր յոյժանոցով  
 Արդէ՛ որպէս զի գինին իբրև դեղ և քիչ գոր-  
 ծածուի , որպէս զի այդեաց մշակութեանն՝ իբ-  
 րև ներքին բերքէ՛՝ դուրսէն ստակ մտնէ գիւ-  
 ղից մէջ , ըստ իս պէտք է զայն երեքի բաժնել ,  
 այսինքն երեք տեսակ գինի ունենալ , մէկը  
 մէկ տարեկան , մէկն երկու տարեկան և միւսը  
 երեք տարեկան ընելու եղանակաւ , որպէս զի տա-  
 րիէ տարի միշտ նորերն հիննան , և հիներն՝ ըստ  
 որում հին գինի՝ կրկին գնով դուրս ծախուե-  
 լով ստակ մտնեն գիւղից մէջ , և այդեաց  
 գոյութիւնն ու մշակութիւնը որոց համար այն-  
 չափ ծախք կ'ըլլայ , միայն խենդենալու , և քսա-  
 կով մարմնով և հոգւով մնասուելու միջոց չլինի ,  
 այլ եկամտի ուրիշ աղբիւր մը կարենայ ըլլալ :  
 Գիւղօրէից մէջ տեսնուած աղքատութիւնը  
 և մարդկային կենաց նիւթական և բարոյական  
 նուազումն ինչ պատճառներէ յառաջ եկած էր ,  
 անոնց վրայ ըստ կարի խօսեցանք , նոյնպէս



դարմաններուն վրայ ուստի խօսքերնիս կը վերջացնենք կրկնելով թէ գիւղօրէից բարեկեցութիւնը ժիրաժիր աշխատութեան, ուսման, երկրագործական գիտութեան, բարոյական կրթութեան, մշակութեան զարգացման, միաբան և ընկերական գործառնութեանց, հաւատարմութեան և բարեխառն կենաց մէջ կը կայանայ, և թէ առոնց այս հանգամանաց բնաւ երջանկութիւն չկայ և չի կրնար լինել:

Վ Ե Ր Ջ



Վ Ի Դ Ա Կ Ք



Երես	Տող	Սեւն	Ռեզիւ
Բ.	2.	Միութիւնը	Մթութիւնը
»	»	Միութիւնը	Մթութիւնը
52	18	Ախրատութեան	Աղքատութեան
58	12	Եւ զու ունիցի	Եւ զոր ունիցի
97	24	Առաջարկութեան	Առարկութեան
99	18	Բուրմունքը	Բուրմունքով
121	11	Արմտին	Արմտիք
128	24	Ունիմք քեզ	Ունիմք մեզ
158	9	Տեղ մը	Տիղմը





INDEX

1	1
2	2
3	3
4	4
5	5
6	6
7	7
8	8
9	9
10	10
11	11
12	12
13	13
14	14
15	15
16	16
17	17
18	18
19	19
20	20
21	21
22	22
23	23
24	24
25	25
26	26
27	27
28	28
29	29
30	30
31	31
32	32
33	33
34	34
35	35
36	36
37	37
38	38
39	39
40	40
41	41
42	42
43	43
44	44
45	45
46	46
47	47
48	48
49	49
50	50
51	51
52	52
53	53
54	54
55	55
56	56
57	57
58	58
59	59
60	60
61	61
62	62
63	63
64	64
65	65
66	66
67	67
68	68
69	69
70	70
71	71
72	72
73	73
74	74
75	75
76	76
77	77
78	78
79	79
80	80
81	81
82	82
83	83
84	84
85	85
86	86
87	87
88	88
89	89
90	90
91	91
92	92
93	93
94	94
95	95
96	96
97	97
98	98
99	99
100	100







